EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA | ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# «ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

# “EUROPEAN UNIVERSITY” COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

15 (01)

ISSN 1829-4359

ՀՏԴ 001 Հաստատված է ՀԵՀ Գիտական խորհրդի 2024թ. հուլիսի 3-ի թիվ 51 նիստում
ԳՄԴ 72
Ե 744

*Գլխավոր խմբագիր՝*
**Հեղինե Բիշարյան,** մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ

*Գլխավոր խմբագրի տեղակալ՝*
**Գոռ Մանասյան,** աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ

*Խմբագրական խորհուրդ*
**Գրիգորի Վահանյան,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Թաթուլ Մանասերյան,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Մուսա Յուսուֆ,** փիլիսոփայության դոկտոր (տնտեսագիտություն)
**Էրիկ Լերու,** փիլիսոփայության դոկտոր (տնտեսագիտություն)
**Նարինե Կիրակոսյան,** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Վազգեն Մելիքյան,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
**Վարդան Հայրապետյան,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Տատյանա Կալգանովա,** փիլիսոփայության դոկտոր (տեղեկատվական տեխնոլոգիաներ)
**Սուսաննա Հարությունյան,** ֆիզ.-մաթ. գիտ.թեկնածու, դոցենտ
**Աշոտ Խաչատրյան,** իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Նազելի Սուքիասյան,** իրավագիտության դոկտոր, դոցենտ
**Ստելիոս Անդրեադակիս,** փիլիսոփայության դոկտոր (իրավագիտություն)
**Իզաբելլա Իսկանդարյան,** իրավագիտության թեկնածու
**Հրանուշ Թովմասյան,** բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Լուսինե Ֆլջյան,** բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Անդրեա Արբել**, փիլիսոփայության դոկտոր (բանասիրություն)
**Սոնա Հակոբյան,** բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

Ե 744 **Եվրոպական համալսարան:** Գիտ. հոդվածների ժող./ՀԵՀ
Գլխ. խմբ.՝ **Հ.Բիշարյան** - Եր.: «ՀԵՀ» հրատ., 2024, Գիրք 15(01): - 200 էջ:

Ժողովածուն ընդգրկում է տնտեսագիտության և կառավարման, իրավագիտության, բանասիրության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

Հայաստանի եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2024

UDC 001
LBC 72
E 744

**Approved by EUA Scientific Council on July 3, 2024, Session N 51**

*Editor-in-chief*
**Heghine Bisharyan,** Doctor of Philosophy (in Pedagogy), Associate Professor

*Deputy editor-in-chief*
**Gor Manasyan,** Doctor of Philosophy (in Geographical Sciences) Associate Professor

*Editorial Board*
**Grigori Vahanyan,** Doctor of Economical Sciences, Professor
**Tatul Manaseryan,** Doctor of Economical Sciences, Professor
**Moosa Yousuf,** Doctor of Philosophy (in Economy)
**Erick Leroux,** Doctor of Philosophy (in Economy)
**Narine Kirakosyan,** Doctor of Philosophy (in Economy), Associate Professor
**Vazgen Melikyan,** Doctor of Technical Sciences, Prof., Corresponding member of NAS, Armenia
**Vardan Hayrapetyan,** Doctor of Technical Sciences, Prof.
**Tatiana Kalganova,** Doctor of Philosophy (in Technical Sciences)
**Susanna Harutyunyan,** Doctor of Philosophy (in Physical & Mathematical Sciences) Associate Professor
**Ashot Khachatryan,** Doctor of Law, Professor
**Nazeli Suqiasyan,** Doctor of Law, Associate Professor
**Stelios Andreadakis,** Doctor of Philosophy (in Law)
**Izabella Iskandaryan,** Doctor of Philosophy (in Law)
**Hranush Tovmasyan,** Doctor of Philological Sciences, Professor
**Lusine Fljyan,** Doctor of Philological Sciences, Professor
**Andrea Abel**, Doctor of Philosophy (in Philology)
**Sona Hakobyan,** Doctor of Philosophy (in Philology)

E 744 **European University: Collection of Scientific Articles/ EUA**
Editor-in-chief, **H. Bisharyan** - Yerevan./ «EUA» Publication 2024, Book 14(02): - 200 pages

European University Collection of Scientific Articles constitutes latest advancements and analyses of critical issues in the fields of Economics and Management, Law, Philology and Information Technologies. The research articles and results presented herein may be profoundly beneficial to nearly all specialists, Ph.D. students and researchers engaged in exploring current trends of science.

EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

UDC 001
LBC 72

ISBN 978-99941-2-609-5

European University (Armenia) Publishing 2024

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**Տաթևիկ Մովսիսյան**
ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ………………………………………………………… 7

**Միսակ Ավագյան**
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՐԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ……………………………………………………… 20

**Հովիկ Գրիգորյան**
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ … 32

**Արմինե Մատենցյան**
IN-SITU ԵՎ EX-SITU ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԲԱՑՕԹՅԱ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ…………. 43

**Մարինա Պետրոսյան**
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԲԱԽՈՒՄՆԱԾԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՐԱ………………………………….. 60

**Գևորգ Օրբելյան**
ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՋՐՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ……………………………………………………… 71

**Elen Grigoryan, Jean-Fabrice Lebraty, Katia Lobre-Lebraty**
TAILORING EFFECTIVE USE MODEL OF BIG DATA IN MANAGERIAL CONTEXT: INSIGHTS FROM AN EMPIRICAL STUDY IN ARMENIAN COMPANIES………………… 87

**Ռուբեն Բաղալյան**
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ…………………………………………………………………….. 94

**Satenik Ghazaryan, Luiza Iiupova**
IMPACT OF ARTIFICIAL INTELLIGENCE (AI) ON ECONOMICS AND MANAGEMENT……………………………………………………………………… 105

**Անի Մկրտչյան**
ՀՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎՐԱ…………………………………………………………………………………… 114

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Միլենա Ղազարյան**
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ... 126

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**Վարդան Եղիազարյան**
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՈՒ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԽԱՌՆԱՐԱՆՈՒՄ…………………… 134

**Kristine Harutyunyan, Anna Sargsyan**
APPROACHES AND THEORIES TO THE STUDY OF LANGUAGE AND GENDER………. 141

**Ulyana Kostanyan**
THE ESSENCE OF ENGLISH FOR SPECIFIC PURPOSES (ESP) AND THE ROLE OF NEW TECHNOLOGIES IN ESP TEACHING…………………………………………………………. 147

**Ռուզաննա Գարզալոյան**
ՄԱՐԴԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖԻ ՋԵՅՔԸԲԻ ՍԵՆՅԱԿԸ» ԵՎ «ՄԻՍԻՍ ԴԵԼՈՈՒԵՅ» ՎԵՊԵՐՈՒՄ……………………... 153

**Armenuhi Ghalachyan, Veronik Khachaturyan**
ON DEFINING BRITISH AND AMERICAN NATIONAL IDENTITY THROUGH HUMOR……………………………………………………………………………… 161

**Անահիտ Աբրահամյան**
ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ…………………………………………………………………….. 167

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

**Gagik Avetisyan**
APPLICATION OF NEW INFORMATION TECHNOLOGIES IN THE PROCESS OF PEDAGOGICAL SOFTWARE…………………………………………………….. 177

**Vahe Ispiryan**
STABILITY ROBUSTNESS OF CONTROL SYSTEMS OF MULTIROTOR UNMANNED AERIAL VEHICLES……………………………………………………………………………….. 184

**Eleonor Harutyunyan**
A COMPARATIVE ANALYSIS WITH THE BLACK BOX MODEL & DSS SYSTEM ……… 192

# ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

*https://doi.org /10.59982/18294359-24.15-ht-01*

*Տաթևիկ Սլավիկի Մովսիսյան*
*մ.գ.թ.*
*ՀԵՀ, Կառավարման ամբիոն*
*tatevmovsisyan1907@gmail.com*

***Ամփոփագիր***

Սույն մեթոդական հոդվածում քննարկված են բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմավարական կառավարման և որակի ապահովման գործընթացների փոխկապակցվածությունը, «ռազմավարական կառավարում» հասկացության բազմակողմանի մեկնաբանությունները: Հոդվածում անդրադարձ է կատարված նաև միջազգային պրակտիկայում ընդունված բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացման ռազմավարական ծրագրի մշակման նախադրյալներին, սկզբունքներին, հիմնական փուլերին, ռազմավարական ծրագրի հիմնական բաղադրիչներին:

Ի լրումն վերոնշյալի՝ հոդվածում համապարփակ ներկայացված են նպատակների և հիմնական արդյունքների OKR մոտեցումը զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացում, OKR մոտեցման կիրառման նախադրյալները, առավելությունները: ՀՀ 13 հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացման ռազմավարական ծրագրերի հետազոտության արդյունքում աշխատանքում վերհանվել են ռազմավարական ծրագրերի մշակման մեթոդաբանական խնդիրներ և ներկայացվել առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ: Մասնավորապես՝ վերլուծության արդյունքների համաձայն՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացման ռազմավարական ծրագրերի մեծ մասը բխեցված չեն պետության առաջնահերթություններից, չեն արտացոլում բուհերի ոլորտային առանձնահատկությունները, ներառում են ոչ չափելի գնահատման առանցքային ցուցանիշներ: Բացի այդ, հետազոտված բարձրագույն ուսումնական հաստատությունների մեծ մասի զարգացման ռազմավարական ծրագրերում խզում կա ռազմավարական կառավարման և որակի ապահովման գործընթացների, կրթական և գիտական գործունեության միջև, ինչպես նաև հստակեցված չեն բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմավարական ծրագրերի մշակման սկզբունքներն ու տրամաբանությունը:

***Հիմնաբառեր.*** Եվրոպական բարձրագույն կրթության տարածք, կրթական բարեփոխումներ, որակի ապահովում, ռազմավարական կառավարում, ռազմավարական ծրագրեր, մեթոդաբանություն:

***Ներածություն***

Բուհերի կատարողականի ապահովման հիմքում ընկած են պետության առաջնահերթություններից բխող քաղաքականություններն ու ռազմավարությունները: Վերջիններիս հստակ սահմանումը որոշիչ է, քանզի դրանով է պայմանավորված երկարաժամկետում բուհերի հետագա զարգացումը: Այս համատեքստում բուհերի արդյունավետ գործելաոճը և ձեռքբերումները մեծապես կախված են իրատեսական ու մեթոդապես ճիշտ մշակված քաղաքականություններից ու ռազմավարություններից՝ այդպիսով նպաստելով բարձրագույն կրթության ոլորտի զարգացմանը:

Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) տեղի ունեցող բարեփոխումները նոր մարտահրավերներ են առաջադրում ԵԲԿՏ անդամ երկրների բուհական համակարգերին՝ հանգեցնելով բուհերի ռազմավարական մոտեցումների վերանայման ու վերաիմաստավորման: ՀՀ բուհերը, անմասն չմնալով ԵԲԿՏ-ում իրականացվող բարեփոխումներից և ԵԲԿՏ-ին լիովին ինտեգրվելու ձգտումից, ևս քայլեր են ձեռնարկում կատարելագործելու ու բարեփոխելու իրենց ռազմավարական մոտեցումները, ինչպես նաև համապատասխանաբար արձագանքելու գիտելիքահենք տնտեսության զարգացման մարտահրավերներին: Այդուհանդերձ, ներկայիս մրցակցային պայմաններում ու բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների հետագա զարգացման համատեքստում ՀՀ բուհերի ռազմավարական կառավարումը շարունակում է մնալ առաջնահերթ խնդիր, ուստի հրատապ է դառնում ՀՀ բուհերի ռազմավարական մոտեցումների, հատկապես ռազմավարական ծրագրերի մշակման մեթոդաբանության վերանայման անհրաժեշտությունը, ինչով էլ պայմանավորված է սույն աշխատանքի արդիականությունը:

Սույն մեթոդական հոդվածի **նպատակն է** հետազոտել ՀՀ բուհերի ռազմավարական ծրագրերը և առաջարկել վերջիններիս մշակման մեթոդաբանական նոր մոտեցումներ:

Սույն հետազոտությունն իրականացնելիս կիրառվել են որակական մեթոդները, մասնավորապես՝ փաստաթղթերի վերլուծություն, համադրում և համեմատության մեթոդները: Հետազոտության համար հիմք են ծառայել արտասահմանյան և հայաստանյան գիտական ամսագրերում տպագրված հոդվածները, գիտական այլ աշխատանքներ, ուսումնասիրված ՀՀ 13 հավատարմագրված բուհերի (Տե՛ս, Աղյուսակ 1) զարգացման ռազմավարական ծրագրերը[1], հավատարմագրման փորձագիտական զեկույցները: Հետազոտված բուհերը պատրաստում են ՀՀ ռազմավարական

[1] Ուսումնասիրված կրթական հաստատությունների ՌԾ-երը հասանելի են իրենց պաշտոնական կայքէջերում:

գերակայություն ունեցող ոլորտների կադրեր և ունեն որակի ապահովման ոլորտում կուտակած մեծ փորձ:

**Աղյուսակ 1**

| ՊԵՏԱԿԱՆ | |
|---|---|
| 1. | Երևանի պետական համալսարան |
| 2. | Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան |
| 3. | Ճարտարապետության և շինարարության հայաստանի ազգային համալսարան |
| 4. | Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա |
| 5. | Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան |
| 6. | Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան |
| 7. | ՀՀ պետական կառավարման ակադեմիա |
| 8. | Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան |
| 9. | Հայաստանի ազգային ագրարային համալսարան |
| ՄԻՋՊԵՏԱԿԱՆ | |
| 10. | Հայաստանի եվրոպական համալսարան |
| ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ | |
| 11. | ՀՀ Ներքին գործերի նախարարության կրթահամալիր |
| ՈՉ ՊԵՏԱԿԱՆ | |
| 12. | Հյուսիսային համալսարան |
| 13. | Եվրասիա միջազգային համալսարան |

*Հետազոտված բուհերի ցանկը*

**Ռազմավարական կառավարումը որակի ապահովման համատեքստում**

Որակի ապահովումը և ռազմավարական կառավարումը բուհերի կատարողականի բարձրացման երկու փոխկապակցված գործընթացներն են: Մասնագիտական և գիտամեթոդական գրականության մեջ գոյություն ունեն «ռազմավարական կառավարման» և «որակի ապահովման» հասկացությունների բազմաթիվ սահմանումներ: Ռազմավարական կառավարումը բուհի ռազմավարական պլանավորման, բուհերի միջավայրային ազդեցության գործոնների, ռազմավարության իրականացման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման փոխկապակցված գործընթացների ամբողջությունն է [Խաչատրյան, Ռազմավարական կառավարման, 86-87], [Witcher, 28-29]: Որակի ապահովումը բուհերի ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման գործիքներից մեկն է [Rezić et al, 245]: Այն շարունակական բարելավվող շրջափուլային գործընթաց է, որը թույլ է տալիս ռազմավարական կառավարման տարբեր գործիքակազմի կիրառմամբ բացահայտել բուհերի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները, նախանշել բուհերի բարելավման ենթակա տիրույթները: Ընդհանուր առմամբ, որակի ապահովումը բարելավման գործընթաց է, որը նաև նպաստում է բուհերի ռազմավարական կառավարման համակարգի զարգացմանն ու կատարելագործմանը:

Մասնագիտական և գիտամեթոդական գրականության համաձայն [Abdusattorov, 11-12], [Kettunen, 324], [Алферова и др, 4-15], [Խաչատրյան, ՀՀ բուհերի, 103]՝ բուհերում

ռազմավարական կառավարման գործընթացների կառավարումը պահանջում է հստակ պլանավորում, մասնավորապես՝ բուհերի միջավայրային վերլուծություն, բուհերի ոլորտային առանձնահատկություններն արտացոլող քաղաքականությունների, ռազմավարությունների, գերակա նպատակների և խնդիրների, որակական և քանակական առանցքային ցուցանիշների հստակ սահմանում, ինչպես նաև ռազմավարական ծրագրերի համընդհանուր մոտեցումների մշակում ու կիրառում:

Ներկայումս միջազգային պրակտիկայում բուհերի գործունեության արտաքին գնահատումն (հավատարմագրումը) հիմնվում է ռազմավարական ծրագրերի վրա [Kettunen, 325], քանի որ վերջինս համարվում է բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների հեռանկարային զարգացման ուղենիշային փաստաթուղթ: Բուհի զարգացման ռազմավարական ծրագիրը պետք է դիտարկել որպես **հստակ մշակված փաստաթուղթ**, որը բուհի զարգացման գործընթացներն ուղղում է երեք մակարդակների (հասկացութային-արժեքաբանական, նախագծային-կառավարչական, գործառնական-տեխնոլոգիական) ապահովմանը [Խաչատրյան, ՀՀ բուհերի, 104]:

Բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացումը նպատակաուղղված է՝

1. ազգային, միջազգային մակարդակներում և տարածաշրջանում բուհերի գրավչության ու մրցունակության բարձրացմանը և ամրապնդմանը,
2. ազգային և միջազգային աշխատաշուկաների կարիքների ու պահանջների բավարարմանը միտված մրցունակ մասնագետների պատրաստմանը,
3. բուհերի գործունեության տարբեր տիրույթների բարելավմանը,
4. ազգային ու միջազգային մակարդակներում գիտակրթական համակարգերի ներդաշնակեցմանն ու մրցունակության շարունակական ապահովմանը,
5. բուհերի գործունեության կայունության ապահովմանը,
6. պետության ներսում գիտելիքահենք տնտեսության զարգացմանը,
7. պետության ազգային անվտանգության ապահովմանը,
8. համամարդկային, այդ թվում՝ պետական արժեքների պահպանմանը, տարածմանը:

Ելնելով վերոգրյալից՝ զարգացման ռազմավարական ծրագրերի արդյունավետ իրականացմամբ՝ ա) թիրախավորվում են բուհերի առաքելության ու ռազմավարության իրականացման գործընթացները, բ) հնարավորություն է տրվում բուհի ղեկավար կազմին հասկանալու բուհի հիմնախնդիրները, զարգացման հետագա հնարավորությունները, գ) գնահատվում են բուհերի ինստիտուցիոնալ կարողությունները, դ) հստակեցվում են բուհերի ուժեղ ու թույլ կողմերը և հիմքեր ստեղծվում ռազմավարական հետագա նպատակների սահմանման համար:

Ռազմավարական կառավարման դասական տեսության համաձայն՝ բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերի (ռազմավարությունների) մշակումը ռազմավարական պլանավորման գործընթացի մաս է, որին նախորդում են հետևյալ քայլերը (Տե՛ս, Գծապատկեր 1).

**Գծապատկեր 1**




*Ռազմավարական ծրագրերի մշակման փուլերը*

Բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակումն սկսվում է կազմակերպության առաքելության և գերակա նպատակների ու խնդիրների սահմանումներից: Առաքելությունը բուհերի ռազմավարական նպատակների սահմանման հիմքն է: Նպատակները և խնդիրները պետք է սահմանվեն պարզ, չափելի ձևակերպումներով իրատեսական ժամկետների համար: Միջազգային պրակտիկայում նպատակների ու խնդիրների սահմանման համար կիրառվում է SMART (խելացի) համակարգը[2]:

Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հաջորդ փուլը կազմակերպության միջավայրերի վերլուծությունն է, որի շրջանակներում հետազոտվում են բուհերի գործունեության բոլոր տիրույթները: Վերլուծության փուլում հստակեցվում են առաքելությունը, նպատակները և խնդիրները: Այս համատեքստում հարկ է նշել, որ բուհերի ներքին և արտաքին միջավայրերի վերլուծության համար կիրառվում են ռազմավարական կառավարման տարբեր գործիքներ, օրինակ՝ SWOT[3], PEST[4] և այլն:

Զարգացման ռազմավարական ծրագրի մշակման հաջորդ փուլը ռազմավարության այլընտրանքների բացահայտումն ու գնահատումն է: Այս փուլում հստակեցվում են վերլուծության արդյունքում դուրս բերված ռազմավարությունները:

Հաջորդ փուլը ռազմավարության ընտրությունն է, որի ժամանակ գնահատվում են ռազմավարության առկա տարբերակները և ընտրվում է լավագույնը:

Նախավերջին փուլը ռազմավարության (ռազմարական ծրագրի) իրագործումն է, որի ընթացքում ընտրված ռազմավարական տարբերակը լրամշակվում է և

[2] SMART համակարգն առաջին անգամ կիրառել է Ջ. Դորանը “Management Review” աշխատության մեջ 1981 թվականին: SMART հապավումը կազմված է անգլերեն համարժեք բառերի սկզբնատառերից՝ S specific - յուրահատուկ, M measurable - չափելի, A attainable - հասանելի, R realistic - իրատեսական, T timely - ժամանակին:

[3] S= Strengths-ուժեղ կողմեր, W= Weaknesses-թույլ կողմեր, O = Opportunities- հնարավորություններ, T = Threats- սպառնալիքներ:

[4] PEST հապավումը եզրույթ է՝ կազմված անգլերեն համարժեք բառերի սկզբնատառերից՝ Political(քաղաքական), Economic (տնտեսական), Social (սոցիալական) և Technological (տեխնոլոգիական):

գործածության մեջ դրվում: Սա ներառում է ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակում և մարտավարությունների հստակեցում:

Վերջին փուլը ռազմավարության գնահատումն է, որը ցույց է տալիս, թե ինչպես է իրագործվում ընտրված ռազմավարությունը: Այն հետադարձ կապ է ապահովում ընտրված ռազմավարության և դրա իրագործման արդյունքների միջև: Գնահատումը կարող է կատարվել մշտադիտարկումների ձևով, որի արդյունքում դուրս են բերվում ընթացիկ խնդիրները և նախաձեռնվում միջոցառումներ դրանց լուծման համար:

Ընդհանուր առմամբ, բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերը ներառում են հետևյալ տարրերը՝ տեսլական, առաքելություն, հիմնարար արժեքներ, գերակա նպատակներ, խնդիրներ, նպատակների գնահատման առանցքային ցուցանիշներ: Ռազմավարական ծրագրերին կից մշակվում են գործողությունների պլաններ, որտեղ մանրամասն ներկայացվում են նպատակներին հասնելու ուղղությամբ բուհի քայլերը, դրանց գնահատման քանակական և որակական ցուցանիշները, պատասխանատուները և ժամկետները:

Բարձր կատարողականություն ապահովելու համար բուհերի ռազմավարական կառավարման հիմահարցերով զբաղվող մի շարք փորձագետներ պնդում են, որ բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերը մշակելիս պետք է հիմնվել մի շարք սկզբունքների (կրթության որակի կառավարում, կրթության շարունակականություն, նորամուծությունների շարունակական ներդրում, բազմազանեցում, սիներգիա, շահակիցների ներգրավում ռազմավարությունների մշակման գործընթացում, գիտական պորտֆելի ձևավորում և ռազմավարական թիրախային վերլուծությունների վրա հիմնված կրթական ծառայությունների մատուցում) ու ռազմավարական նպատակների սահմանման հատկանիշների վրա (համակցվածություն, հստակություն, ճկունություն, հասանելիություն, չափելիություն, ժամանակային սահմանափակում, իրատեսականություն) *[Кайгородцев и др, 379], [Литвак, 206-207]:*

Միջազգային պրակտիկայում բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման հիմքում դրված են տարբեր մոտեցումներ, սակայն առավել տարածված է OKR մոտեցումը[5]: Վերջինիս մշակման աշխատանքները մեկնարկել են դեռևս 1950-ականներին, սակայն կիրառության մեջ են դրվել 1974 թ. Ջ. Դոյերի կողմից [Խաչատրյան, Նպատակների և առանցքային, 128]: Ներկայումս OKR մոտեցումը տարածված է ԱՄՆ-ում, եվրոպական զարգացած երկրներում, Ճապոնիայում, Հնդկաստանում: OKR մոտեցումը կենտրոնանում է բուհի առաջնահերթությունների վրա, բարձրացնում է հաշվետվողականությունը, միասնականացնում բուհի կառուցվածքային ստորաբաժանումների նպատակները: OKR մոտեցման կիրառումը ենթադրում է բուհի ղեկավար կազմի ռազմավարական մտածողության ցուցաբերում և բուհի աշխատակազմի միասնական աշխատանքի իրականացում դեպի չափելի արդյունքների ձեռքբերումը, որոնց արդյունքում բուհը կարող է շոշափելի առաջընթաց արձանագրել

[5] OKR հապավումը կազմված է անգլերեն համարժեք բառերի սկզբնատառերից՝ Objectives (նպատակներ) և Key Results (առանցքային արդյունքներ): Ներկայումս այս հապավումը գործածվում է որպես եզրույթ:

*[Niven & Lamorte, 20]:* OKR մոտեցման *Objectives* բաղադրիչը ենթադրում է բուհի կամ դրա ստորաբաժանման նպատակները, որոնք սահմանում են առանցքային արդյունքների ձեռքբերումը սահմանման ժամանակահատվածի ավարտին: OKR նպատակների հիմնական տեսակներն են OKR *ռազմավարական, մարտավարական և գործառնական* նպատակները: Ռազմավարական նպատակները միտված են բուհերի զարգացմանը երկարաժամկետում (3-5 տարի): Մարտավարական նպատակները միջնաժամկետ են (1-3 տարի) և հիմնականում մշակվում են որպես բուհերի կառուցվածքային միավորների նպատակներ: Գործառնական նպատակների միջոցով բուհը լուծում է գործառնական կառավարման հիմնախնդիրները՝ միտված բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը (մինչև 1 տարի):

*Key Results* բաղադրիչը կապված է բուհի գործունեության տարբեր տիրույթներում ձեռքբերված վերջնարդյունքների հետ: Առանցքային արդյունքները չափվում և գնահատվում են քանակական ու որակական ցուցանիշներով, որոնց միջոցով հնարավոր է լինում գնահատել վերջնարդյունքների ապահովման աստիճանը [Խաչատրյան, Նպատակների և առանցքային, 131]:

Այսպիսով, OKR-ն բուհի գործունեության բոլոր տիրույթներն ընդգրկող, բուհի ներուժի զարգացման և ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը նպաստող մոտեցում է: OKR մոտեցման կիրառումն ունի մի շարք առավելություններ, ինչպիսիք են՝ կենտրոնացումը առաջնահերթությունների վրա, կառուցվածքային ստորաբաժանումների նպատակների միասնականացումը, հաշվետվողականության մակարդակի բարձրացումը, գերազանցությանը ձգտումը:

## ՀՀ բուհերի զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման մեթոդաբանական խնդիրները

ՀՀ բուհերի ռազմավարական կառավարմանն առնչվող մի շարք հետազոտություններ [Խաչատրյան, Ռազմավարական կառավարման, 84], [Խաչատրյան, ՀՀ բուհերի, 101], [Մովսիսյան, ՀՀ, 142-143], [Մովսիսյան, Բարձրագույն, 128-148] և 13 բուհերի հավատարմագրման փորձագիտական զեկույցների ուսումնասիրությունները *[Բուհերի հավատարմագրման]* ցույց են տալիս, որ ՀՀ-ում բուհերի ռազմավարական կառավարման գործընթացը հիմնականում իրականացվում է չորս հաջորդական փուլով՝ 1. միջավայրերի վերլուծություն և ռազմավարության մշակում, 2. ռազմավարության իրականացում, 3. ռազմավարության մշտադիտարկում և գնահատում, 4. ռազմավարության բարելավում: Բացի այդ, ՀՀ բուհերն իրենց գործունեությունն իրականացնում են հաստատված 5 տարվա ռազմավարական ծրագրերով ու գործողությունների պլաններով, որտեղ ֆորմալ առումով ներկայացված են բուհերի առաքելությունը, տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական գերակայություններն ու նպատակները, գնահատման առանցքային ցուցանիշները, ժամկետներն ու պատասխանատուները: Ռազմավարական ծրագրերի յուրաքանչյուր նպատակի համար սահմանված են խնդիրներ կամ գործողություններ: Այդուհանդերձ,

հարկ է նշել, որ ուսումնասիրված բուհերի ռազմավարական ծրագրերը զերծ չեն նաև մի շարք մեթոդական թերություններից: Մասնավորապես՝

1. ՌԾ-ների մեծ մասը բխեցված չեն պետական մակարդակում ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերից, այդ թվում՝ ՀՀ 2014-2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրից, ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից):
2. Բուհերի մեծ մասի ՌԾ-ներում ընդգծված չեն բուհերի ոլորտային առանձնահատկությունները, ինչը կարող է խոչընդոտել բուհերին ազգային, միջազգային մակարդակներում և տարածաշրջանում բուհերի գրավչության ու մրցունակության բարձրացմանը և ամրապնդմանը:
3. Թեպետ բուհերի ՌԾ-ներում նախատեսված գործողությունների համար սահմանված են գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ), սակայն մեծամասամբ բուհերի ՌԾ-ներում դրանք հստակ և չափելի չեն, ինչը նաև հավատարմագրման փորձագետների հիմնական կրկնվող դիտողություններից է: Մյուս կողմից, պետական մակարդակում ՀՀ բուհական համակարգում գնահատման առանքային ցուցանիշների սահմանման ուղեցույցը դեռևս մշակված չէ, ինչը կարող էր ԳԱՑ-երի ճշգրիտ սահմանման ուղղորդող գործիք լինել:
4. Բուհերի մեծ մասի ՌԾ-ներում առկա է խզում որակի ապահովման և ռազմավարական կառավարման գործընթացների միջև. գործողությունները միտված չեն ռազմավարական կառավարման համակարգի հաշվետվողականության ու թափանցիկության ապահովմանը, մինչդեռ ՌԾ-ների հաջող իրականացումը ենթադրում է կրթության որակի կառավարման ու հաշվետվողական հստակ մոտեցումների, գործիքների առկայություն, թիրախային վերլուծությունների արդյունքների հաշվառում որոշումների կայացման գործընթացում:
5. Ռազմավարական կառավարման մոդելի գործառնականությունն ապահովելու համար ՀՀ բուհերի ՌԾ-ները պետք է ներառեն իրենց ամիջական շահակիցների պահանջների և կարիքների բավարարմանը միտված գործողություններ, ինչն էլ կնպաստի ազգային ու միջազգային աշխատաշուկաների կարիքների և պահանջների բավարարմանը պատրաստ մրցունակ մասնագետներ ունենալուն:
6. Բուհերի ՌԾ-ների մեծ մասում առկա է խզում կրթական և գիտական գործունեության միջև, մինչդեռ զարգացման ռազմավարական ծրագրերում պետք է նախատեսվեն գործողություններ՝ միտված նշված երկու ուղղությունների ներդաշնակեցմանը, հետազոտահենք կարողություններով մասնագետների պատրաստմանը:
7. ՀՀ բուհերի մեծ մասի նոր ռազմավարական ծրագրերում լիովին արտացոլված չեն նախորդ ՌԾ-ների կատարողականի գնահատման արդյունքները, այնինչ վերջիններս որոշիչ դեր ունեն բուհերի ներուժի բացահայտման ու հետագա առաքելության և նպատակների սահմանման մեջ:

Ելնելով վերոնշյալ խնդիրների առկայությունից՝ սույն աշխատանքում առաջարկվում է ՌԾ-ի մշակման նոր մոտեցում (Տե՛ս, Գծապատկեր 2), որը կարող է ուղղորդել և դյուրացնել բուհերի ՌԾ մշակման աշխատանքը:

*Գծապատկեր 2*




*ՌԾ մշակման առաջարկվող մոտեցումը*

Մասնավորապես, նոր մոտեցմամբ՝ ՌԾ մշակումը կարող է իրականացվել է 6 փուլով ինստիտուցիոնալ և դրա կառուցվածքային ստորաբաժանման մակարդակներում՝ 1) ռազմավարական պլանավորման նախապատրաստման, 2) իրավիճակային վերլուծության, 3) տեսլականի, առաքելության, հիմնարար արժեքների սահմանման, 4) բուհի առանձնահատկությունների հաշվառմամբ ռազմավարության ընտրության, 5) 5 տարվա կտրվածքով գերակա նպատակների, խնդիրների, ԳԱՑ-երի, ժամկետների, ռիսկերի ու դրանց կառավարման մեխանիզմների սահմանման, ինչպես նաև մարդկային, նյութատեխնիկական, ֆինանսական և այլ ռեսուրսների բաշխման, 6) Բուհի կառավարման բարձրագույն կոլեգիալ մարմնի կողմից ՌԾ-ի հաստատման: Առաջարկվող մոտեցմամբ՝ բուհի ՌԾ-ն մշակվում է բուհի ներքին և արտաքին միջավայրերի ուսումնասիրության (օրինակ՝ բուհի գործունեության բոլոր տիրույթների կատարողականի գնահատումներ, նախորդ ՌԾ-ի կատարողականի գնահատում, աշխատաշուկայի գնահատում՝ ըստ առաջարկվող մասնագիտությունների, շահակիցների կարիքների վերհանման վերլուծություններ, բենչմարքինգ, օրենսդրական կարգավորումներին, պետական նշանակություն ունեցող փաստաթղթերին բուհի կրթական ծրագրերի և ընդհանուր գործունեության համապատասխանեցման գնահատումներ) բոլոր ուսումնասիրությունների համախմբման արդյունքում:

Ռազմավարական պլանավորման *նախապատրաստման* գործընթացում պետք է որոշվի և առաջ քաշվի հոգաբարձուների խորհրդի և ռեկտորի տեսլականը՝ միտված

բուհի հետագա զարգացմանը: Հակառակ դեպքում, ՌԾ-ի մշակումը չի կարող իրականացվել առանց բարձրագույն ղեկավարության շարունակական աջակցության: ՌԾ մշակման խումբը ձևավորելիս ցանկալի է ապահովել ներքին և արտաքին շահակիցների հնարավորինս լայն ներկայացվածություն, քանի որ լայն շրջանակի դեպքում հնարավոր է ընդհանուր պատկերացում կազմել շահակիցների կարիքների մասին, ֆիլտրել և որոշել հետագա ռազմավարությունը՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով բուհի առանձնահատկություններն ու ՀՀ պետական մակարդակում կիրառվող ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերը: Առաջարկվող մոտեցման հիմքում դրվում է որակի ապահովման մշակույթը, ուստի բարձր կատարողականություն ապահովելու համար անհրաժեշտ նախապայմաններն են՝ բուհի գործընթացների իրականացումը որակի ապահովման միասնական մոտեցմամբ Դեմինգի շրջափուլով, շարունակական հաղորդակցությունը և համագործակցությունը բոլոր շահակիցների հետ, մշտադիտարկումները և գնահատումները, տարբեր գործընթացների, կրթական ծրագրերի և, ընդհանուր առմամբ, բուհի ամբողջ գործունեության շարունակական կատարելագործումը: Բացի այդ, սույն մոտեցմամբ կարևորվում է յուրաքանչյուր փուլից հետո աշխատանքային արդյունքների քննարկումը ՌԾ մշակող խմբի, բուհի կառավարման մարմինների, անհրաժեշտության դեպքում նաև բուհի անձնակազմի հետ: Ի տարբերություն ՀՀ-ում կիրառվող ՌԾ մշակման գործող մոտեցման, առաջարկվող տարբերակում նաև կարևորվում է ՌԾ-ում ռիսկերի ու դրանց կառավարման/կանխման մեխանիզմների մասին քայլերի ներկայացումը, քանի որ ռիսկերի կառավարումը ռազմավարական կառավարման գործընթացի անբաժանելի մասն է:

Այսպիսով, սույն մոտեցումը ենթադրում է բուհի կառավարման մարմինների և անձնակազմի պատասխանատվություն սահմանված գերակա նպատակների իրականացման ու արդյունքների ձեռքբերման նկատմամբ: Սույն մոտեցման կիրառումը կարող է օգտակար լինել ՀՀ բուհերի որակի ապահովման և կառավարման գործընթացներում:

### *Եզրակացություն*

Այսպիսով, մասնագիտական և գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ որակի ապահովումը և ռազմավարական կառավարումը փոխլրացնող, բուհերի ինստիտուցիոնալ կարողությունների ու ներուժի զարգացմանը նպաստող գործընթացներ են: Բուհերի ներուժի, հնարավորությունների մասին ամբողջական ռազմավարական պատկերացում ունենալը և ինստիտուցիոնալ կարողությունների ճիշտ գնահատումը թույլ են տալիս ստեղծել նախադրյալներ բուհերի ռազմավարական կառավարման ու որակի ապահովման համակարգերի գործառնականությունն ապահովելու համար: ԵԲԿՏ-ում որակի ապահովումը բուհերի համար երկարաժամկետ զարգացման անկյունաքարերից մեկն է՝ ապահովելու իրենց մրցակցային դիրքը, բարձրացնելու գրավչությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, միջազգայնացնելու յուրաքանչյուր

երկրի բարձրագույն կրթության համակարգը: Ուստի, ՀՀ բուհերը ռազմավարություններ մշակելիս պետք է կիրառեն հստակ մեթոդաբանություն՝ մրցունակություն ապահովելու ազգային և միջազգային մակարդակներում: Սույն հոդվածում ՌԾ մշակման առաջարկվող մոտեցմամբ ՀՀ բուհերը կարող են ճշգրիտ պլանավորել ու իրականացնել ռազմավարական նպատակները՝ համապատասխանեցնելով իրենց գործողությունները պետական ռազմավարական մոտեցումներին՝ միևնույն ժամանակ ապահովելով իրենց ինքնավարությունը: Այս մոտեցման կիրառումը կարելի է զուգակցել OKR մոտեցման հետ՝ այսինքն՝ կենտրոնանալ նպատակների սահմանման և դրանց գնահատման արդյունքների վրա, ինչպես նաև սահմանել ռիսկեր և դրանց կառավարման մեխանիզմներ:

*Գրականության ցանկ*


1. Խաչատրյան Ռ., Ռազմավարական կառավարման մոդելի գործառնականությունը ՀՀ բուհերում, 2020, ՀՀ ՊԿԱ Հանրային կառավարում 2, էջ 84-96:
2. Խաչատրյան Ռ., Նպատակների և առանցքային արդյունքների OKR հայեցակարգի կիրառման նախադրյալները ՀՀ բուհերի ռազմավարական կառավարման գործընթացներում, Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի 2(53): - Երևան, Լինգվա, 2020, էջ 125-140:
3. Խաչատրյան Ռ. ՀՀ բուհերի ինքնավարությունը որպես ռազմավարական կառավարման արդյունավետության ապահովման գործոն, 2020, ՀՀ ՊԿԱ Հանրային կառավարում 1, էջ 101-113:
4. Մովսիսյան Տ., ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները. Մենագրություն, Երևան, Հեղինակային հրատարակություն, 2023, 270 էջ:
5. Մովսիսյան Տ., Բարձրագույն կրթության որակի ապահովման ռազմավարական մոտեցումները ՀՀ-ում. ԲՊՀ, մանկավարժություն և հասարակական գիտություններ, Բանբեր 2(59), Լինգվա, էջ 128-148:
6. Բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցներ՝ (https://www.anqa.am/hy/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%B4/#ExpertReports) 02.06.2024
7. Abdusattorov E. “Strategic Management of Higher Education Institutions” EPRA International Journal of Climate and Resource Economic Review 9(8). 2021, pp 11-14.
8. Kettunen, J. “A Conceptual Framework to Help Evaluate the Quality of Institutional Performance”. Quality Assurance in Education, 16(4), 2008, pp 322-332.
9. Niven, P. R., & Lamorte, B. Objectives and Key Results. Driving Focus, Alignment, and Engagement with OKRs. NJ.: Wiley Corporate F&A. 2016, p 224.
10. Witcher B. J. “Absolute Essentials of Strategic Management”. Routledge Focus. NY: Taylor & Francis. 2020. p 120.

11. Алферова Л. В., Королева Л. А., Нагорная О. С. Стратегическое Планирование и Управление Качеством Высшего Образования: Международные Стандарты и Национальная Специфика. Модели, системы, сети в экономике и управлении, 1(25), 2018, с. 4-17.
12. Кайгородцев А.А., Сарсембаева Г.Ж., Кайгородцева Т.Ф. Концепция стратегии развития вуза в условиях рыночной экономики. Международный журнал экспериментального образования. № 11(3). 2015. с. 379–382
13. Rezić, S., Tomić, D., Majstorović, V. (2010, 11-18 September). Strategic Management of University Based on Quality Assurance System. 14th 145 International Research/Expert Conference" Trends in the Development of Machinery and Associated Technology", Mediterranean Cruise, 245-248, (March 25, 2024), (https://www.tmt.unze.ba/zbornik/TMT2010/062-TMT10-117.pdf)

## ON THE METHODOLOGY OF DEVELOPING STRATEGIC DEVELOPMENT PLANS OF RA HEIS

***Tatevik Movsisyan***
*PhD in Pedagogy*
*EUA, Chair of Management*
*tatevmovsisyan1907@gmail.com*

***Abstract***

The interrelationship of strategic management and quality assurance processes in higher educational institutions and the multifaceted interpretations of the concept of strategic management are discussed in this article. The article also refers to the prerequisites, principles, main stages, and components of the strategic development plan of higher educational institutions adopted in international practice.

The article comprehensively presents the OKR approach of goals and main results in the process of developing a strategic development plan, as well as the prerequisites and advantages of applying the OKR approach. As a result of the research on the strategic development plans of 13 accredited RA higher education institutions, methodological problems in developing strategic plans were raised in the article, and recommendations were presented for their solution. In particular, the results of the analysis show that most of the strategic development plans of RA higher educational institutions are not derived from the state's priorities, do not reflect the sectoral characteristics of universities, and include non-measurable key performance indicators. In addition, in the strategic development plans of most of the researched higher educational institutions, there is a gap between strategic management and quality assurance processes, education and science activities, and the principles and logic of developing strategic plans for higher educational institutions are not specified.

***Keywords:*** European higher education area, educational reforms, quality assurance, strategic management, strategic plans, new methodology.

Ներկայացվել է՝ 01.04.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 08.05.2024թ.

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՐԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

https://doi.org /10.59982/18294359-24.15-tm-02

*Միսակ Արմոյի Ավագյան*
*տնտ. թ., դոցենտ*
*ՀԵՀ, Կառավարման ամբիոն*
*misakav@rambler.ru*

***Ամփոփագիր***

Վերջին տասնամյակներում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացները, որոնք ներառում են տնտեսական հարաբերությունների ողջ համալիրը, մեծ ուշադրության են արժանանում ոչ միայն զարգացած, այլև զարգացող երկրների կողմից: Այդ համատեքստում առաջնային է դառնում հատկապես արժութաֆինանսական ոլորտի ինտեգրումը՝ պայմանավորված ազգային ֆինանսական համակարգերի կայուն զարգացմամբ և արժութային փոխարժեքների կայունության ապահովմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այն ընդգրկում է ֆինանսական համակարգի մի շարք առանցքային ոլորտներ, միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման արդի պայմաններում առավել հաճախակի ի հայտ եկող տնտեսական խնդիրների համատեղ լուծման համար գնալով ավելի է կարևորվում որոշակի տարածաշրջանի երկրների միջև արժութաֆինանսական միասնական համակարգի ձևավորումը:

Գլոբալացման պայմաններում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ներկայիս օրինաչափությունները, ինչպես նաև միջազգային արժութային համակարգի զարգացման արդի միտումները ավելի են մեծացնում երկրների միջև արժութաֆինանսական հարաբերությունների խորացման անհրաժեշտությունը՝ ուղղված ֆինանսական կայունության և տնտեսական անվտանգության ապահովմանը, ինչն էլ ընկած է արժութաֆինանսական ինտեգրման՝ որպես երկրների միջև տնտեսական համագործակցության բարձրագույն մակարդակի ուսումնասիրության նպատակահարմարության հիմքում:

Հոդվածի նպատակն է տարածաշրջանային արժութաֆինանսական ինտեգրման դրսևորման ձևերի և առանձնահատկությունների վերլուծությունը, ինչպես նաև վերջինիս արդյունավետության մակարդակի բարձրացման ուղիների մատնանշումը:

***Հիմնաբառեր.*** Արժութաֆինանսական ինտեգրում, գլոբալացում, դրամավարկային քաղաքականություն, միասնական արժույթ, կոորդինացում, միասնականացում, վերազգային կարգավորում:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ներածություն*

Ժամանակակից միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական միտումներից մեկը հանդիսանում է տարածաշրջանային ինտեգրացիոն գործընթացների ակտիվացումը, որի առավել կարևոր խորքային փուլը արժութաֆինանսական ինտեգրումն է: Այն, մի կողմից, հետևանք է համաշխարհային տնտեսական կապերի զարգացման, ինտեգրվող երկրների տնտեսությունների փոխկախվածության աճի, տնտեսական կյանքի միջազգայնացման, մյուս կողմից, հանդիսանում է տնտեսական ինտեգրման գործընթացների խորացման և զարգացման նախադրյալ, որը հանգեցնում է դրանց մասնակից երկրների ֆինանսական շուկաների փոխսերտաճմանը խոչընդոտող արժութաֆինանսական սահմանափակումների աստիճանական վերացմանը:

Հոդվածում ներկայացվել են արժութաֆինանսական ինտեգրման նպատակները, արդի առանձնահատկությունները, մակարդակները և ձևերը, ինչպես նաև առաջ են քաշվել արժութաֆինանսական ոլորտում տարածաշրջանային փոխգործակցության մակարդակի բարձրացման մի շարք ուղիներ:

Ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական գրականության տեսական վերլուծության, համադրման, ընդհանրացման, համակարգակառուցվածքային և փոխազդման մեթոդները:

*Վերլուծություն*

Երկրների միջև արժութաֆինանսական ոլորտում փոխհամագործակցությունը նպատակ ունի ամրապնդելու ազգային արժույթների դիրքերը, ձևավորելու լայն գործիքակազմ ունեցող ֆինանսական շուկաներ և ապահովելու կայուն տեղ համաշխարհային արժութաֆինանսական համակարգում: Ակնհայտ է, որ հատկապես զարգացող երկրների շրջանակներում տարածաշրջանային արժութային ինտեգրման գործընթացների ակտիվացումը պայմանավորված է վերջիններիս կողմից «ֆինանսական գլոբալացման բացասական ազդեցություններից խուսափելու ձգտմամբ և համաշխարհային շուկաներում սեփական դիրքերի ամրապնդմամբ» [Булатова, Марена, 116]:

Ընդհանուր առմամբ, երկրների միջև արժութաֆինանսական ինտեգրումն ուղղված է համատեղ դրամավարկային և արժութային քաղաքականությունների իրականացման հիման վրա ազգային արժույթների նկատմամբ միջազգային վստահության աճին, արժութային փոխարկելիության և իրացվելիության մակարդակի բարձրացմանը, միջազգային տնտեսական հարաբերություններում ազգային արժույթների շրջանառելիության մեծացմանը և, ի վերջո, ազգային ֆինանսական շուկաների զարգացմանը, բազմազանեցմանն ու միջազգային մրցունակության աճին, ինչը մեծ խթան կարող է հանդիսանալ հատկապես օտարերկրյա կապիտալի ներգրավման համար:

Երկրների միջև արժութային ինտեգրման գործընթացների ձևավորմանը նպաստել է հատկապես գլոբալ ֆինանսական համակարգի զարգացումը, որին ներկայումս բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- ուղղակի և հետադարձ կապը գլոբալացվող հասարակական վերարտադրության հետ և դրա հետ մեկտեղ դրամական ոլորտի տարանջատումը տնտեսության արտադրական հատվածից,
- համաշխարհային ֆինանսական ռեսուրսների շարժի շերտավորումը՝ ըստ իրական և վիրտուալ հոսքերի,
- արժութային, վարկային և ֆոնդային շուկաների փոխկապակցվածությունը, որը հանգեցնում է գլոբալ ֆինանսական ցանցերի ձևավորմանը,
- ժամանակակից էլեկտրոնային տեխնոլոգիաների, հաղորդակցության և տեղեկատվական միջոցների ներդրումը, որն ուղեկցվում է սիներգիայի և մասշտաբի էֆեկտներով, ինչպես նաև ֆինանսական բիզնեսի տրանսակցիոն ծախսերի կրճատմամբ,
- տարածության և ժամանակի մեջ ֆինանսական գործիքների փոխազդեցությունը, որը նպաստում է ֆինանսական շուկայի նոր մեխանիզմների՝ հեջավորման և ռիսկերի կառավարման զարգացմանը,
- ֆինանսական հաստատությունների գործունեության պայմանների փոփոխությունը՝ ազգային ֆինանսական շուկաների ազատականացում, վերջիններիս նկատմամբ ոչ ռեզիդենտների հասանելիություն, մի շարք գործարքների սահմանափակումների վերացում և, միաժամանակ, տնտեսության կարգավորման դերի բարձրացում՝ դրա տարբեր մակարդակներում [Новокшонова, Шмелева, 100]:

Չնայած վերոնշյալ առանձնահատկություններին՝ այնուամենայնիվ, հարկ է ընդգծել, որ աշխարհում տեղի ունեցող ֆինանսատնտեսական և քաղաքական անբարենպաստ գործընթացները, կորոնավիրուսային համավարակը, պատերազմները վերջին ժամանակներս հանգեցրել են արժութաֆինանսական շուկաների ծավալների կրճատմանը և իրացվելիության նվազմանը, արժութային փոխարժեքների կայունության թուլացմանը, աշխարհի բազմաթիվ երկրներում մակրոտնտեսական իրավիճակի վատթարացմանը, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ ինտեգրման գործընթացների հետագա զարգացումների վրա:

Դրամավարկային և արժութաֆինանսական հարաբերությունների ոլորտում ինտեգրացիոն փոխգործակցության արժութաֆինանսական մոդելը ամբողջությամբ հանդես է գալիս որպես օրգանական համակարգ, որն ունի շարժունակության, ներքին և արտաքին միջավայրերի վրա ազդեցության հատկություն: Ունենալով ինքնակազմակերպման բոլոր հատկությունները (ոչ գծայնություն, անհավասարակշռություն, հիերարխիականություն, հարմարվողականություն և հետադարձ կապ)՝ այն անընդհատ հարմարվում է փոփոխվող արտաքին պայմաններին, ունի ներքին կապեր և վերահսկման կենտրոններ (կենտրոնական բանկեր), որոնք ոչ

միայն ազդում են համակարգի տարրերի վրա, այլև ինքնուրույն ձևավորում են ինքնակազմակերպման որոշակի ալգորիթմներ: Արժութաֆինանսական միավորումը կարող է իրականացվել ինչպես «վերևից»՝ վերազգային և ազգային պետական մարմինների կողմից, այնպես էլ «ներքևից»՝ բանկային, արժութային և ֆինանսական շուկաների մասնակիցների կողմից: Վերջիններիս միջև կոոպերացումն էլ նպաստում է կարգավորվող և շուկայական ուղղվածություն ունեցող արժութաֆինանսական տարածքի ձևավորմանը [Петрукович, 35]:

Արժութաֆինանսական ոլորտում երկրների ինտեգրացիոն փոխգործակցության զարգացումը վերջիններիս վրա թողնում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Այսպես, եթե այն նպաստում է արժութային փոխարկման տրանսակցիոն ծախսերի կրճատմանը, գնաճի կարգավորմանը, զբաղվածության աճին, ապա դրամավարկային անկախ քաղաքականության կորուստը և միասնական արժույթի ներդրման պարագայում պետական ինքնիշխանության տարրերից մեկի՝ ազգային արժույթի դուրսբերումը շրջանառությունից, ինտեգրացիոն խմբավորման շրջանակներից դուրս գտնվող երկրների հետ առևտրաշրջանառության ծավալների կրճատումը կարող է տնտեսական ինտեգրման ցածր արդյունավետության դեպքում հանգեցնել տնտեսական և արժութաֆինանսական զգալի և անվերադարձ կորուստների:

Հարկ է նշել, որ եթե զարգացած երկրներում արժութային միավորման գաղափարին ավելի զգուշորեն են մոտենում, ապա զարգացող երկրներում այն դրական է գնահատվում փոխարժեքային քաղաքականության ոլորտում զլոբալացման և ֆինանսական շուկաների ինտեգրման մարտահրավերները հաղթահարելու տեսանկյունից [Nazim, 16]:

Ընդհանուր առմամբ, արժութաֆինանսական ինտեգրումը հիմնված է դրամավարկային և արժութաֆինանսական քաղաքականության կոորդինացման, ներդաշնակեցման և միասնականացման վրա, որը հանգեցնում է միասնական արժութաֆինանսական տարածքի, իսկ իր բարձրագույն փուլում՝ արժութային միության ձևավորմանը՝ միասնական դրամական միավորով և միջպետական արժութաֆինանսական կենտրոնների կարգավորման վերազգային մեխանիզմով: Ըստ Ն. Պետրուկովիչի՝ միասնական արժութաֆինանսական տարածքը պետությունների տեղեկատվական-տնտեսական և արժութաֆինանսական միավորում է, որի շրջանակներում գործում են ազգային արժույթներով և արժեթղթերով կատարվող գործարքների իրականացման համակարգված մեխանիզմներ, սկզբունքներ և կանոններ, և վարվում է համաձայնեցված դրամավարկային և արժութաֆինանսական քաղաքականություն [Петрукович, 35]: Սակայն հարկ է նշել, որ միասնական արժույթի ընդունման դեպքում երկիրը պարտավորվում է հետևել կոնկրետ պարտավորությունների, ներառյալ հարկաբյուջետային և դրամավարկային կարգապահությունը [Lypko, 72]:

Որպես արժութային միության ձևավորման տնտեսական հիմք՝ հանդես է գալիս միասնական արժութաֆինանսական տարածքը, սակայն վերջինից անցումը դեպի

արժութային միությանը բավականին բարդ, հակասական և երկարաժամկետ գործընթաց է, որի իրականացումը պետք է դիտարկել առանձին, բայց և միասնական ու փոխլրացնող ինտեգրացիոն գործընթացի շրջանակներում: Այս առումով, միասնական արժույթի ներդրմանը, ինչպես նաև ինտեգրված բանկային, արժութային և ֆինանսական շուկաների ձևավորմանն ուղղված ինտեգրացիոն նախաձեռնությունների ամենահաջողված օրինակը ԵՄ-ն է: Այս առումով, ըստ Դ. Գալոյանի՝ արժութային միությունների ձևավորումը, ընդհանուր առմամբ, ավելի արդյունավետ է փոքր բաց տնտեսությունների համար, որոնք արտահանում են տեղական արտադրության շոշափելի մասը, մինչդեռ լողացող փոխարժեքներն ավելի ձեռնտու են մեծ և ինքնապահովման բարձր մակարդակ ունեցող երկրներին [Գալոյան, 56]:

Ըստ Օ. Բուտորինայի՝ «արժութաֆինանսական ինտեգրում» հասկացության ներքո՝ նկատի է առնվում միջպետական համագործակցության ցանկացած ձև՝ ուղղված արժութային և ֆինանսական շուկաների կայունացմանն ու զարգացմանը, ինչպես նաև անդրսահմանյանին հաշվարկային համակարգերի բարելավմանը՝ անկախ նրանից, թե այդ գործընթացներին մասնակից երկրները կձևավորեն ինտեգրացիոն խմբավորում, թե ոչ [Буторина, 42]:

Երկրների միջև արժութաֆինանսական համագործակցությունը երկարաժամկետ և փուլային գործընթաց է, որը բնութագրվում է ինտեգրացիոն հարաբերությունների բազմամակարդակությամբ, ինչը հանդիսանում է ինտեգրացիոն միավորման միասնական վերազգային կառուցվածքի համապատասխան բաղադրիչների միաձուլման և դրա վերջնական ձևավորման արդյունավետությունը որոշող կարևորագույն գործոն: Տարբերում են արժութաֆինանսական ինտեգրման հետևյալ մակարդակները.

1. *կոորդինացում*, որը ենթադրում է արժութային և ֆինանսական քաղաքականության նպատակների համաձայնեցում՝ վերջիններիս հասնելու համար անհրաժեշտ գործիքակազմի կիրառման միջոցով,
2. *ներդաշնակեցում*, որը ենթադրում է աստիճանական անցում ընդհանուր արժութաֆինանսական քաղաքականությանը՝ հիմնված ազգային արժութային և ֆինանսական համակարգերի կառուցվածների մոտարկման, դրամավարկային քաղաքականության միասնական մեթոդների և գործիքների օգտագործման, ինչպես նաև ազգային տարբերությունների վերացման վրա,
3. *միասնականացում*, որը ենթադրում է տնտեսական և արժութային միության ձևավորում՝ միասնական դրամական միավորի ներդրմամբ և միասնական դրամավարկային քաղաքականության իրականացմամբ:

Հարկ է նշել, որ ինտեգրման վերոնշյալ մակարդակների առաջնահերթության վերաբերյալ մասնագետների դիրքորոշումները խիստ տարբերվում են միմյանից: Բազմաթիվ տնտեսագետների համար առաջնային են համարվում երկրների արժութային քաղաքականության կոորդինացումն կամ միասնականացումը: Մինչդեռ ինտեգրման գործընթացների զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ որպես

արժութաֆինանսական ինտեգրման հիմք և շարժիչ ուժ՝ հանդես է գալիս առավելապես տնտեսական քաղաքականության կոորդինացման բարձր աստիճանը, քանի որ տարածաշրջանային ինտեգրացիոն փոխգործակցության բարձագույն մակարդակին և ձևերին անցումը՝ առանց դրա համար անհրաժեշտ օբյեկտիվ նախադրյալների և պայմանների առկայության, չի կարող առաջացնել դրական արդյունք: Այդպիսի պայմաններ են համարվում, մի կողմից, ինտեգրվող պետությունների տնտեսական կոնվերգենցիաների սահմանումը, որը կարող է դիտվել «թե՛ որպես ազգային դրամավարկային համակարգերի միավորման անհրաժեշտ պայման (էկզոգեն գործոն) և հետևանք (էնդոգեն գործոն) և թե՛ որպես արժութաֆինանսական ինտեգրման կարևորագույն բաղադրիչ» [Петрукович, 34], մյուս կողմից, սոցիալ-տնտեսական գործընթացների կարգավորման միասնականացումը:

Հարկ է նշել, որ արժութաֆինանսական ինտեգրման բարեհաջող իրականացումը պայմանավորված է նաև մասնակից երկրների քաղաքական կամքի առկայությամբ, որը նպաստում է ինտեգրման գործընթացների ակտիվացմանը, որի արդյունքում ի հայտ եկող տնտեսական հաջողություններն էլ, իրենց հերթին, հանգեցնում են ինտեգրման հետագա խորացմանն ուղղված երկրների կողմից լրացուցիչ քաղաքական ջանքերի գործադրմանը: Հետևաբար կարելի է պնդել, որ արժութաֆինանսական ինտեգրումն իրենից ներկայացնում է ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական գործընթաց: Ինչ վերաբերում է ինտեգրացիոն գործընթացների քաղաքական և տնտեսական ասպեկտների առաջնահերթության վերաբերյալ մասնագիտական քննարկումներին, ապա նշենք, որ գիտնականների գերակշռող մասը առաջնային է համարում ինտեգրման տնտեսական նպատակաուղղվածությունը և տնտեսական կոնվերգենցիաների պահպանման անհրաժեշտությունը, քանի որ, ըստ նրանց, հենց վերջիններս են ընկած արժութաֆինանսական ինտեգրման ոլորտում հաջողության հասնելու հիմքում: Մասնագետների մյուս մասը գտնում է, որ արժութային ինտեգրումը պետք է նախ և առաջ ունենա պետական նախաձեռնություն և ուղեկցվի քաղաքական խորքային գործընթացներով: Այնուամենայնիվ, նկատենք, որ արժութաֆինանսական արդյունավետ ինտեգրումը չի կարող ապահովվել բացառապես երկրների տնտեսական հարաբերությունների միահյուսման, ներդաշնակ զարգացման, տնտեսական զարգացման մակարդակների մոտարկման և աճի շնորհիվ՝ առանց քաղաքական փոխհարաբերությունների խորացման, քանի որ երկրների միջև հատկապես արժութաֆինանսական ոլորտի փոխհամագործակցությունը ենթադրում է վերազգային կարգավորման (միասնական վերպետական կառույցների, ընդհանուր դրամավարկային քաղաքականության, միասնական արժույթի, ներդրման) անհրաժեշտություն, որը պահանջում է նաև քաղաքական մեծ կամք:

Բացի այդ, որոշ հետազոտողներ, պաշտպանելով քաղաքական ինտեգրման անհրաժեշտության առաջնահերթության թեզը ընդհանուր տնտեսական (հատկապես արժութաֆինանսական և դրամավարկային) ինտեգրման գործընթացում, արժութաֆինանսական ինտեգրման ոլորտում հիմնվում են այն գաղափարի վրա, որ

ազգային արժույթները հանդիսանում են ազգային ինքնիշխանության արտահայտումը, ուստի արժութային ինտեգրումը կարող է արդարացվել, եթե այն ուղեկցվում է քաղաքական խորը փոփոխություններով (քաղաքական ինտեգրման առաջնահերթություն): Մյուսները պնդում են, որ առաջնային է միջպետական տնտեսական կոնվերգենցիան (տնտեսական կառույցների և հարաբերությունների մոտարկում), քանի որ սիմետրիկ տնտեսական զարգացումը, ըստ նրանց, արժութային միության հաջող գործունեության երաշխիքն է: Հետազոտողները գրեթե միակարծիք են այն հարցում, որ ֆիքսված արժութային փոխարժեքների նկատմամբ միասնական արժույթի ամենակարևոր առավելությունն այն է, որ միասնական արժույթը թույլ է տալիս արժութային միությանը «վայելել» առավելագույն վստահություն, ինչն, իր հերթին, բխում է ինտեգրացիոն խմբավորման երկրների երկարաժամկետ ֆինանսական գործիքների արդյունավետության նորմերի կոնվերգենցիայից [Чаплыгин, 129-130]:

Հարկ է նշել, որ ԵԱՏՄ շրջանակներում, որին անդամակցում է ՀՀ-ն, արժութաֆինանսական ինտեգրման համար լուրջ խոչընդոտներ են հանդիսանում՝ անդամ երկրների արժույթների փոխադարձ փոխարկման շուկաների ցածր իրացվելիությունը, տնտեսական զարգացման ոչ բարենպաստ պայմանները, արժութաֆինանսական քաղաքականությունների ներդաշնակեցման ոչ բավարար մակարդակը: Հաշվի առնելով, որ արժութային ինտեգրումը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման բարձրագույն փուլն է, ԵԱՏՄ-ում այդ գործընթացի զարգացման կարևոր նախադրյալ է՝ անդամ երկրներում մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների պահպանումն ու տնտեսական զարգացման մակարդակների անհամաչափության կրճատումը:

Հավելենք, որ ինտեգրվող պետությունների ազգային տնտեսական համակարգերի պետական կարգավորման միասնականացումը և միահյուսումը նպաստում է արժութաֆինանսական ինտեգրման ամրապնդմանը՝ ի շնորհիվ ներքոնշյալ ոլորտների մեկ միասնական ամբողջության մեջ համախմբման.

1. *արժութային շուկաների ինտեգրում*, որն իրենից ներկայացնում է արժութային հարաբերությունների ոլորտում երկրների մերձեցման, արժութային վերպետական մեխանիզմի ձևավորման, միջպետական արժութավարկային և ֆինանսական կառույցների ստեղծման, միասնական արժույթի ներդրման օբյեկտիվ գործընթաց,
2. *ֆինանսական ինտեգրում*, որը ենթադրում է ինտեգրվող երկրների ազգային ֆինանսական շուկաների միջև կապիտալի միջպետական շարժի սահմանափակումների վերացում և ազգային ֆինանսական շուկաների արդյունավետ միավորում,
3. *բանկային ինտեգրում*, որը նախատեսում է ինտեգրվող երկրների բանկային համակարգերի փոխկապվածության մակարդակի բարձրացում և դրանց միաձուլում՝ ուղղված միասնական դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության աճին:

Արժութաֆինանսական ինտեգրման այս կամ այն ձևի և դրա համապատասխան գործիքակազմի ընտրությունը կախված է, առաջին հերթին, ինտեգրվող պետությունների տնտեսությունների զարգացման մակարդակից և տեմպերից, երկրորդ հերթին, երկրների՝ բանկային, արժութային և ֆինանսական համակարգերի միավորման պատրաստակամությունից և վճռականությունից: Արժութաֆինանսական ինտեգրման գործընթացում այդ համակարգերի միավորման բնույթն ու դերը որոշվում են ինտեգրման մոդելով, որի արտաքին բովանդակությունն ու տարածական կազմակերպումը արտահայտվում են հետևյալ հիմնական ձևերով.

1. *արժութային և ֆինանսական շուկաների համախմբում (կոնսոլիդացիա)*, որն իրականացվում է կապիտալի շարժի ճանապարհին առկա արժութային սահմանափակումների և արգելքների վերացման, արժութային սահմանափակումների միաժամանակյա վերացմամբ ուղեկցվող ֆինանսական ծառայությունների շուկաների միավորման, ինչպես նաև ֆինանսական շուկաների համապատասխան մոնիթորինգի իրականացմամբ շուկայական ենթակառուցվածքների զարգացման, արժեթղթերի համաձայնեցված թողարկման, անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, փոխօգնության տրամադրման միջոցով,
2. *անդրսահմանային միջբանկային հաշվարկների համակարգի ներդրում*՝ բազմակողմ քլիրինգի կամ համախառն հաշվարկների համակարգի տեսքով,
3. *ազգային արժույթների փոխարժեքների կայունացում*, ինչը ենթադրում է համաձայնեցված և համակարգված դրամավարկային քաղաքականության իրականացում, նպաստում է արժութային և ֆինանսական շուկաների չկանոնակարգված գործունեությունից կախվածության նվազեցմանը, ինչպես նաև ազգային արժույթների արդյունավետ կիրառմանը,
4. *արժութային գոտիների ձևավորում*, որի դեպքում պետությունների միավորման արդյունքում ձևավորված տարածքում պաշտոնապես շրջանառվում են միևնույն դրամական միավորները [Петрукович, 36]:

Արժութաֆինանսական ինտեգրման վերոնշյալ ձևերը կարելի է ներկայացնել միջազգային փորձի դիտարկմամբ: Այսպես.

1. Արժութային և ֆինանսական շուկաների համախմբման գործընթացում առաջնային համարելով կապիտալի շարժի հետ կապված արժութային սահմանափակումների վերացումը՝ որպես կարևոր ձեռքբերում է համարվում հետպատերազմյան Եվրոպայում արժութային ամենախիստ սահմանափակումների վերացումը Եվրոպական վճարային միության գործունեության սկզբնական ժամանակաշրջանում՝ եվրոպական երկրների արժույթների փոխարկելիությունը վերականգնելու նպատակով, ինչպես նաև ԵՄ-ում կապիտալի շարժի ազատականացումը:

2. Բազմակողմ քլիրինգի կազմակերպման հաջողված օրինակ է հանդիսանում 1950թ. Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ 17 երկրների կողմից Եվրոպական վճարային միության, 1985թ. Եվրոպայի խոշորագույն առևտրային բանկերի կողմից բազմակողմ քլիրինգի համակարգի՝ Եվրոբանկային ասոցիացիայի (Euro Banking Association), 1999թ. Տրանսեվրոպական ավտոմատացված իրական ժամանակում համախառն հաշվարկային արագ փոխանցումների համակարգի՝ TARGET-ի (Trans-European Automated Real-time Gross Settlement Express Transfer), իսկ 2007թ.՝ TARGET-2 համակարգի ստեղծումը, ինչի արդյունքում զուտ առևտրային նախաձեռնությունը ձեռք բերեց վերազգային բաղադրիչ՝ միանալով միջպետական ինտեգրման գործընթացին:
3. Արժութային փոխարժեքների կայունացման անհրաժեշտությունն ի հայտ է եկել Բրեթթոն-Վուդսյան արժութային համակարգի փլուզումից հետո, երբ Եվրոպական տնտեսական համագործակցության շրջանակներում ձևավորվեց «արժութային օձը»՝ սահմանված արժութային միջանցքի շրջակայքում փոխարժեքի տատանումները պահելու համար արժութային ինտերվենցիաների մեխանիզմի ներմուծման միջոցով, որը կոչվում է «Փոխարժեքի մեխանիզմ-2» (ERM (Exchage rate mechanism)-2): Փոխարժեքի կայունացմանն էր ուղղված նաև 1985թ. «Մեծ հնգյակի» երկրների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա և Ճապոնիա) կողմից կնքված Պլազայի համաձայնագիրը (Plaza Agreement), իսկ արդեն 1987թ. «Մեծ Յոթնյակի» երկրների կողմից կնքված Լուվրի համաձայնագիրը (Louvre Accord), որով սահմանվեցին փոխարժեքների տատանման երկու տիպի միջակայք՝ «նեղ» (+/-2.5%) և «լայն» (+/-5%), ըստ որի՝ «նեղ» միջակայքի շրջանակներում փոխարժեքի պահպանման նպատակով արժութային ինտերվենցիաների իրականացումը կրում էր կամավոր, իսկ «լայն» միջակայքի դեպքում՝ պարտադիր բնույթ: Նույն նպատակն էր հետապնդում նաև Հարավ-Արևելյան Ասիայի երկրների՝ Ինդոնեզիայի, Մալազիայի, Ֆիլիպինների, Սինգապուրի և Թաիլանդի կողմից 1997թ. սվոփ գործարքների մասին համաձայնագրի (ASEAN Swap Arrangement) կնքումը՝ արժութային ինտերվենցիաներ կատարելու համար, իսկ 2000թ. ASEAN-ի անդամ բոլոր երկրների, ինչպես նաև Չինաստանի, Ճապոնիայի և Հարավային Կորեայի կողմից այդ մեխանիզմի գործողության ոլորտների համապատասխան ընդլայնման մասին համաձայնագրի՝ «Չիանգ-Մայի նախաձեռնութան» (Chiang Mai Initiative) կնքումը [Буторина, 42-45]:
4. Ինչ վերաբերում է արժութային գոտիների ձևավորմանը, ապա դրանք ունեն ձևավորման երկու մոտեցում: Առաջին մոտեցման համաձայն՝ մասնակից երկրներն ունեն հավասար կամ գրեթե հավասար իրավունքներ, և արժութային գոտու կանոններն ու մեխանիզմները մշակվում են համատեղ, իսկ երկրորդ

մոտեցման դեպքում՝ առավել թույլ զարգացած դրամավարկային համակարգ ունեցող երկրները համախմբվում են ուժեղ միջազգային արժույթ ունեցող պետության շուրջ, որն էլ որոշում է գոտու գործունեության կանոնները և պայմաններ սահմանում մնացած գործընկեր երկրների համար, որոնք, իրենց հերթին, ունենում են ոչ մեծ լիազորություններ:

Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ արժութաֆինանսական ինտեգրման արդի գործընթացներին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. տարածաշրջանային երկրների միջև արժութային միությունների ձևավորում և արժութաֆինանսական ինտեգրման տարբեր ձևերի զարգացում, որն ուղեկցվում է վերջիններիս դրամավարկային քաղաքականությունների կոորդինացմամբ և ֆինանսական համակարգերի միասնականացմամբ՝ խորացնելով երկրների միջև տնտեսական ինտեգրման գործընթացները.
2. տարածաշրջանային ֆինանսական ենթակառուցվածքների կատարելագործում, մասնավորապես, վճարային համակարգերի, քլիրինգային մեխանիզմների և ֆինանսական կարգավորման տարբեր համակարգերի զարգացում, որոնք նպաստում են տարածաշրջանային անդրսահմանային գործարքների դյուրինացմանն ու ֆինանսական համակարգի կայունացմանը.
3. ֆինանսական կարգավորման ներդաշնակեցում, որը հանգեցնում է տարածաշրջանային փոխադարձ առևտրի և ներդրումների խոչընդոտների նվազեցմանը՝ նպաստելով ինտեգրացիոն խմբավորման անդամ երկրների ֆինանսական ինստիտուտների գործունեության արդյունավետության բարձրացմանը.
4. երկրների միջև համատեղ ջանքերի գործադրում՝ ուղղված տարածաշրջանային արտաքին ֆինանսատնտեսական մարտահրավերների հաղթահարմանը՝ շնորհիվ ինտեգրացիոն գործընթացներին մասնակից երկրների կողմից կառավարման արդյունավետ կառուցվածքների ներդրման, քաղաքականությունների համակարգման և տնտեսական համաչափ զարգացման մեխանիզմների մշակման:

***Եզրակացություն***

Այսպիսով, արժութաֆինանսական ինտեգրման գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինտեգրման ընտրված մոդելի իրագործելիությամբ, այդ գործընթացին մասնակից երկրների համապատասխան օրենսդրությունների ներդաշնակությամբ, միասնական արժութաֆինանսական ենթակառուցվածքների ձևավորմամբ, որի համար անհրաժեշտ է արժութաֆինանսական ոլորտում տարածաշրջանային փոխգործակցության մակարդակի բարձրացում, մասնավորապես, հետևյալ ուղղություններով.

- միասնական ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների իրականացման համար անհրաժեշտ արդյունավետ գործող ընդհանուր

ֆինանսավարկային կառույցների և համատեղ ֆինանսավորման հիմնադրամների ձևավորում,

- միջբանկային հաշվարկների իրականացման միջպետական համակարգերի ստեղծում,
- մասնակից երկրների ազգային արժութավարկային շուկաների միավորում,
- ընդհանուր արժութաֆինանսական կարգավորման և հսկողության միասնական չափանիշների ու ստանդարտների ներդրում և կիրարկում:

Չնայած բազմաթիվ հետազոտությունների արդյունքներ ցույց են տալիս, որ արժութաֆինանսական ինտեգրումը հիմնականում դրական ազդեցություն է թողնում դրա մասնակից երկրների տնտեսությունների վրա՝ այդուհանդերձ, պետք է նշել, որ դրա արդյունավետությունը կախված է ինտեգրացիոն խմբավորման շրջանակներում երկրների տնտեսական կայուն զարգացման պայմանների առկայությունից, ազգային տնտեսությունների միջազգային մրցունակության մակարդակից, ինչպես նաև ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի միասնական շուկաների գործունեությունից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրների արդյունավետ արժութաֆինանսական ինտեգրումը ենթադրում է նաև ընդլայնված վերահսկողական մեխանիզմների ներդրում՝ անհրաժեշտ է այդ գործընթացի խորացմանը զուգահեռ՝ մշակել և ներդնել տարածաշրջանային արժութաֆինանսական կայունության ապահովման հնարավոր սպառնալիքները բացահայտելուն և կանխարգելելուն ուղղված միջոցառումներ և նախազգուշական համակարգեր: Վերջիններս կարող են ներառել ֆինանսական շուկաների զարգացման միտումների, կապիտալի հոսքերի և արտաքին ֆինանսական խոցելիության հետևողական վերլուծություններ, սթրես-թեսթերի պարբերական իրականացում, ռիսկերի գնահատման քանակական մոդելների կատարելագործում, երկրների համապատասխան կառույցների միջև տեղեկատվության փոխանակում և համակարգում, ֆինանսական անվտանգության ցանցերի կատարելագործում (տարածաշրջանային ֆինանսավորման նոր համակարգերի, պահուստային մեխանիզմների, արժութային ռիսկի զսպման գործիքների ձևավորում և զարգացում, տեխնիկական աջակցության տրամադրում):

***Գրականության ցանկ***


1. Գալոյան Դ., Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ասպեկտները. Մասն. խմբագիր Ա.Խ. Մարկոսյան, Երևան, Հեղ. Հրատ., 2014, 294 էջ
2. Lypko, Nazarii. "Reassessment of the «Optimum Currency Area» theory in the European Union." *Journal of European Economy, Vol. 22, 1*(84), (2023): 70-93.
3. Nazim, Jahangirzadeh Nijat. "Theoretical basis of features of fiscal and monetary policy." *BBC* 6 (2023): 18.
4. Булатова, Елена, and Т. Марена. "Эволюция и современные формы развития процессов региональной валютной интеграции." *Buletinul ştiinţific al Universităţii de Stat” Bogdan Petriceicu Hasdeu” din Cahul, Seria” Ştiinţe economice”* 6.2 (2011): 116-127.

5. Буторина, Ольга Витальевна. "Закономерности валютно-финансовой интеграции: мировой опыт и СНГ." *Деньги и кредит* 8 (2005): 42-50.
6. Новокшонова, Людмила Васильевна, and Н. В. Шмелева. "Глобализация и регионализация в валютной сфере экономики." Нижний Новгород: Изд-во Нижегородского госуниверситета им. Н.И. Лобачевского, (2014)., 171 с.
7. Петрукович, Н. Г. "Валютно-финансовая интеграция в контексте экономической науки." *Экономика и банки* 1 (2014): 32-39.
8. Чаплыгин, В. Г. "Генезис валютно-финансовой интеграции." *Вестник Оренбургского государственного университета* 6 (2003): 129-133.

## CURRENT FEATURES OF REGIONAL MONETARY FINANCIAL INTEGRATION

***Misak Avagyan***
*PhD in Economics, Associate Professor*
*EUA, Chair of Management*
*misakav@rambler.ru*

***Abstract***

In recent decades, the processes of regional economic integration, which include the entire complex of economic relations, have received great attention not only from developed but also developing countries. In that context, the integration of the monetary and financial sphere is especially important, due to the stable development of national financial systems and ensuring the stability of exchange rates. Taking into account the fact that it covers a number of key areas of the financial system, the formation of a single monetary and financial system between the countries of a certain region is increasingly important for the joint solution of the most frequently emerging economic problems under the current conditions of the development of international economic relations.

In the conditions of globalization, the current patterns of regional economic integration, as well as the current trends in the development of the international monetary system, further increase the need to deepen the monetary and financial relations between countries, aimed at ensuring financial stability and economic security, which is the basis of the expediency of studying monetary and financial integration as the highest level of economic cooperation between countries.

The purpose of the article is to analyze the forms and features of regional monetary and financial integration, as well as to indicate ways of increasing its effectiveness.

***Keywords:*** Monetary and financial integration, globalization, monetary policy, single currency, coordination, unification, supranational regulation

Ներկայացվել է՝ 28.02.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 07.05.2024թ.

# ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

https://doi.org /10.59982/18294359-24.15-kh-03

*Հովիկ Հրաչիկի Գրիգորյան*
*տնտ. թ., դոցենտ*
*ՀԵՀ, Կառավարման ամբիոն*
*hovig@mail.ru*

*Ամփոփագիր*

Շատ երկրներում տեղի են ունենում ժողովրդագրական փոփոխություններ, որոնցում նկատվում է բնակչության ծերացում՝ կյանքի տևողության աճի և ծնելիության մակարդակի նվազման պատճառով: Կառավարությունները, քաղաքական գործիչները և այլ շահագրգիռ կողմեր պարբերաբար քննարկում և իրականացնում են կենսաթոշակային համակարգերում փոփոխություններ՝ ի հայտ եկած մարտահրավերներին դիմակայելու, արդարություն ապահովելու և արդյունավետությունը բարելավելու նպատակով: Կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ այսօր ընդունված որոշումները կարող են անդառնալի հետևանքներ ունենալ ապագա սերունդների համար: Կենսաթոշակային բարեփոխումների ուսումնասիրությունը կարող է նաև օգնել հասկանալ աշխարհի տարբեր երկրների կողմից ընդունված տարբեր մոտեցումները: Այս մոտեցումների համեմատությունն ու հակադրումը կարող են օգնել բացահայտելու լավագույն փորձը, քաղված դասերը և ընդհանուր կենսաթոշակային մարտահրավերների նորարարական լուծումները: Աշխատության համար տեսական հիմք են ծառայել կենսաթոշակային համակարգի մշակման և ներդրման վերաբերյալ արտասահմանյան բազմաթիվ մենագրություններ և գիտական աշխատություններ, այդ թվում՝ միջազգային մասնագիտական կազմակերպությունների գիտական, գիտավերլուծական և մեթոդաբանական նյութեր, ինչպես նաև պետության սոցիալական ու կենսաթոշակային ծրագրերի իրականացման ուղղությունները ու նպատակները: Աշխատանքի տեղեկատվական բազայի համար հիմք են ծառայել Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական տեղեկագրերը, ոլորտին առնչվող գերատեսչությունների պաշտոնական տվյալները, գիտահետազոտական հրապարակումները, ինչպես նաև Համաշխարհային բանկի վիճակագրական պետական կոմիտեի և համանման այլ միջազգային ֆինանսական ու վիճակագրական մարմինների պաշտոնական տվյալներն ու կանխատեսումները, ՀՀ գործող օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը:

***Հիմնաբառեր.*** Կենսաթոշակային համակարգ, բարեփոխում, միջազգային, տարիքային սահմանափակում, տնտեսություն, ֆինանսներ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ներածություն*

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Իր տնտեսական և քաղաքական բնույթով սոցիալական ապահովությունը նյութական բարիքներ ստեղծող և անաշխատունակ հասարակության տնտեսական շահերի համակցությունն է, որի կարևոր մասն է կազմում կենսաթոշակային ապահովությունը: Չնայած այն հանգամանքին, որ կենսաթոշակային համակարգերը ստեղծվել են ավելի քան հարյուր տարի առաջ և ենթարկվել բազմաթիվ փոփոխությունների, բնակչության կենսաթոշակային ապահովության ոլորտում դեռևս բազմաթիվ խնդիրներ կան:

Միջազգային փորձը բերել է այն եզրահանգման, որ բարեփոխումները, որոնք տեղի են ունենում կենսաթոշակային համակարգում, առաջացնում են սոցիալական դժգոհություն, քանի որ դրանք հիմնականում կապված են կենսաթոշակային տարիքի բարձրացման, արտոնյալ կենսաթոշակներից հրաժարվելու կամ կենսաթոշակային հիմնադրամներում ներդրումների ավելացման հետ:

Ավելին, կենսաթոշակային բարեփոխումների վերաբերյալ այսօր ընդունված որոշումները կարող են անդառնալի հետևանքներ ունենալ ապագա սերունդների համար: Կենսաթոշակային բարեփոխումների ուսումնասիրությունը կարող է նաև օգնել հասկանալ աշխարհի տարբեր երկրների կողմից ընդունված տարբեր մոտեցումները: Այս մոտեցումների համեմատությունն ու հակադրումը կարող է օգնել բացահայտելու լավագույն փորձը, քաղված դասերը և ընդհանուր կենսաթոշակային մարտահրավերների նորարարական լուծումները:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները**: Մշակել կենսաթոշակային համակարգի ամենահրատապ խնդիրները լուծելու արդյունավետ ռազմավարություն՝ հաշվի առնելով տարբեր երկրների փորձն ու զարգացման միտումները, վերլուծելով և քննարկելով օտարերկրյա կենսաթոշակային համակարգերի բարեփոխումները և բացահայտելով դրանց հետևանքները: Նպատակը իրագործված կհամարվի, եթե մշակվի կոնկրետ ռազմավարություն՝ կենսունակ քայլերով և ժամանակացույցով, ինչի համար առանձնացվել են հետևյալ խնդիրները՝

1. Որոշել կենսաթոշակային համակարգերի բաղադրիչներն ու տեսակները, ձևակերպել դրանց էության սահմանումը;
2. ՈՒսումնասիրել միջազգային կենսաթոշակային համակարգերի փոփոխությունները, միտումները և օրինաչափությունները՝ վերլուծելով նյութերը վերջին 5 տարիների ընթացքում;
3. Իրականացնել միջազգային և ազգային կենսաթոշակային համակարգերի ցուցանիշների համեմատական վերլուծություն, որտեղ իրականացվել են բարեփոխումներ՝ հաշվի առնելով առնվազն 5 տարիների ընթացքում կատարված փոփոխությունները;

**Հետազոտության օբյեկտը և առարկան**: Հետազոտության օբյեկտը միջազգային կենսաթոշակային համակարգն է, իսկ առարկան՝ միջազգային կենսաթոշակային համակարգերի բարեփոխումները:

Հետազոտությունը նկարագրում է այն մեթոդներն ու ընթացակարգերը, որոնք օգտագործվում են հետազոտության որոշակի թեմային վերաբերող տեղեկատվությունը

բացահայտելու և վերլուծելու համար: Այն ներառում է հետազոտության բոլոր կարևոր ասպեկտները, ներառյալ հետազոտության ձևավորումը, տվյալների հավաքագրման տեխնիկան, տվյալների վերլուծության տեխնիկան և ընդհանուր կառուցվածքը, որի շրջանակներում իրականացվում են հետազոտությունները: Չնայած այս կետերը կարող են օգնել հասկանալ, թե ինչ է հետազոտության մեթոդաբանությունը, նաև պետք է իմանալ, թե ինչու է կարևոր ընտրել ճիշտ մեթոդաբանություն:

Հետազոտական մեթոդները կարելի է բաժանել երկու հիմնական տեսակի՝ քանակական և որակական: Այս մեթոդները տարբերվում են տվյալների հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման իրենց մոտեցմամբ: Բացի այդ, կան նաև խառը մեթոդներ, որոնք համատեղում են ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդների տարրերը:

Կենսաթոշակային համակարգի միջազգային բարեփոխումները վերլուծելու և ուսումնասիրելու համար ընտրվել է խառը մեթոդաբանական մոտեցում՝ ներառելով հետազոտության և՛ որակական, և՛ քանակական մեթոդներ [ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին»]: Այս մոտեցումն ընտրվել է վերլուծության ամբողջականությունն ու խորությունն ապահովելու և բարեփոխման տարբեր ասպեկտների և միջազգային քաղաքականության վրա դրանց ազդեցության ավելի ամբողջական գնահատման համար: Որակական հետազոտության մեթոդները թույլ տվեցին ավելի խորը հասկանալ բարեփոխումների մասնակիցների տեսակետները, կարծիքները և փորձը: Հարցազրույցները, փաստաթղթերի խորը վերլուծությունները և դիտարկումները բացահայտեցին նուրբ ասպեկտներ, որոնք միշտ չէ, որ հնարավոր է ֆիքսել քանակական մեթոդներով:

Նիդեռլանդներում սոցիալական գործընկերներն ունեն DC կենսաթոշակային սխեմաների երեք տեսակի ընտրություն: Ճկուն սխեման մասնակիցներին հնարավորություն է տալիս ինքնուրույն ընտրել ներդրումներ իրենց անհատական կենսաթոշակային խնայողությունների համար: Կոլեկտիվ սխեման նախատեսում է միասնական ներդրումային քաղաքականություն բոլոր մասնակիցների համար՝ օգտագործելով կյանքի ցիկլի ներդրումային ռազմավարությունները: Երկու սխեմաներում էլ մասնակիցների վճարումները նույնն են, և վճարումները կատարվում են փոփոխական անուիտետային դրույքաչափով՝ կախված ներդրումների եկամտաբերությունից: Երրորդ տիպի սխեման՝ DC-ն, գործում է 2011 թվականից և ներառում է գործատուներին վճարումներ կատարել անհատական հաշիվներում, իսկ կենսաթոշակի անցնելուց հետո աշխատողն օգտագործում է կապիտալը՝ ապահովագրողից կենսաթոշակային ապրանք գնելու համար: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների մեծ մասն այժմ հաշվի է առնում ամբողջ կյանքի ընթացքում ստացված եկամուտը կենսաթոշակային նպաստները հաշվարկելիս: Վերջերս այս խմբին միացել են Ավստրիան, Չեխիան, Հունաստանը և Նորվեգիան: Այնուամենայնիվ, այնպիսի երկրներում, ինչպիսիք են Կոլումբիան, Կոստա Ռիկան, Ֆրանսիան, Պորտուգալիան,

Սլովենիան, Իսպանիան և Միացյալ Նահանգները, կենսաթոշակները դեռևս հաշվարկվում են՝ հաշվի առնելով միայն աշխատանքային կյանքի որոշակի ժամանակահատվածի վաստակը (Տե՛ս, Գծապատկեր 1) [ How inflation challenges pensions]:

***Գծապատկեր 1***




***Մասնավոր հատվածի աշխատողների աշխատավարձը հաշվարկելու համար օգտագործվող տարիների թիվը****

*Գծապատկերը կազմվել է մեր կողմից՝ հիմք ընդունելով [Bańkowski et al.]

Իսպանիան որոշել է կենսաթոշակների հարցում էական փոփոխություններ չանել, սակայն ընտրել է կարճաժամկետ երկարաձգում և երկար անցումային շրջան: 2022 թվականից կենսաթոշակային նպաստների բազային վճարման ժամկետը դարձել է կարիերայի վերջին 25 տարին՝ այն ավելացնելով 2013 թվականի նախորդ 15 տարվա համեմատ: Փոփոխությունը նշանակում է, որ 2044 թվականից թոշակի անցած մարդկանց համար հաշվի են առնվելու իրենց կարիերայի վերջին 29 տարիների վերջին 27 տարիների լավագույն եկամուտները: Մինչև 2044 թվականը մարդիկ կկարողանան ընտրել առավել շահավետ հաշվարկման եղանակը, որը կբերի կենսաթոշակային նպաստների և ծախսերի ավելացման:

Կոստա Ռիկան 2024 թվականի հունվարին բարձրացրել է արդյունավետ ներդրման դրույքաչափերը աշխատանքի առաջին 25 տարիների համար: Այժմ 25 տարվա աշխատանքային փորձ ձեռք բերելու համար անհրաժեշտ է նախորդ 20 տարվա փոխարեն 43%-ից 52,5% հավաքել՝ հաշվի առնելով տարիքը և աշխատավարձի մակարդակը: Զուգահեռաբար փոխվել է հիմնական աշխատավարձի հաշվարկման ժամանակաշրջանը. կենսաթոշակն այժմ կհաշվարկվի լավագույն 300 ամիսների (25 տարվա) միջին աշխատավարձի հիման վրա, այլ ոչ թե կարիերայի վերջին 20 տարիների ընթացքում: Իռլանդիայում կառավարությունը որոշել է բարելավել պետական կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը՝ աստիճանաբար

ավելացնելով սոցիալական վճարները: Աշխատողների և գործատուների համար վճարումների դրույքաչափը 2024 թվականի հոկտեմբերին կավելանա 0,1 տոկոսային կետով և ակնկալվում է, որ հետագա տարիներին կավելանա:

Ընդհանուր առմամբ, այս երկրների կողմից որդեգրված բազմազան մոտեցումներն ընդգծում են կենսաթոշակային բարեփոխումների բարդ բնույթը և հարմարեցված լուծումների անհրաժեշտությունը, որոնք հավասարակշռում են հարկաբյուջետային կայունությունը սոցիալական հավասարության և անհատական կարիքների հետ: Քանի որ ժողովրդագրական տեղաշարժերը և տնտեսական մարտահրավերները շարունակում են ձևավորել կենսաթոշակային համակարգերը ամբողջ աշխարհում, շարունակական հարմարվողականությունը կարևոր նշանակություն կունենան ներկայում և ապագայում թոշակառուների բարեկեցությունն ու անվտանգությունն ապահովելու համար:

**Ցածր եկամուտ ունեցողների կենսաթոշակային պաշտպանության բարելավում:** 65+ տարեկան մարդիկ, ընդհանուր առմամբ, ունեն ավելի ցածր տնօրինվող եկամուտ՝ համեմատած ՏՀԶԿ շատ երկրների ընդհանուր բնակչության հետ: ՏՀԶԿ երկրներում միջին հաշվով 66-75 տարեկան մարդկանց տնօրինվող եկամուտը կազմում է ընդհանուր բնակչության տնօրինվող եկամտի 93%-ը, մինչդեռ 75-ից բարձր մարդկանց համար այս ցուցանիշը իջնում է մինչև 81%: Այնուամենայնիվ, երկրների միջև կան էական տարբերություններ. որոշ երկրներում, ինչպիսիք են Էստոնիայում, Կորեայում և Լիտվայում, 66-75 տարեկան խմբի հարաբերական եկամուտը կազմում է ընդհանուր բնակչության 80%-ից պակաս, իսկ 75 տարեկանից բարձր խմբի համար այն 65%-ից պակաս է: Բայց կան նաև երկրներ, որտեղ տարեցների հարաբերական եկամուտը գերազանցում է ողջ բնակչության միջին եկամուտը: Օրինակ՝ Իսրայելում, Իտալիայում և Լյուքսեմբուրգում 66–75 տարեկան մարդկանց հարաբերական եկամուտը գերազանցում է 110%-ը, իսկ Լյուքսեմբուրգում՝ նույնիսկ ամբողջ բնակչության եկամուտը (տե՛ս, Աղյուսակ 1), [Կենսաթոշակային բարեփոխումներ, հանրային իրազեկում] :

*Աղյուսակ 1.*

| Երկրներ | Բոլորը 65 ում. %-ով | 66-75. %-ով | 75 ից բարձր. %ով |
|---|---|---|---|
| Ավստրալիա | 76,9 | 81,6 | 69,8 |
| Ավստրիա | 94,5 | 97,3 | 90,9 |
| Բելգիա | 77,7 | 81,7 | 72,6 |
| Կանադա | 89,3 | 91,8 | 85,2 |
| Չիլի | 93,5 | 95,8 | 90,0 |

| | | | |
|---|---|---|---|
| Կոստա Ռիկա | 104,1 | 109,3 | 95,9 |
| Չեխիա | 77,3 | 80,3 | 72,2 |
| Դանիա | 82,0 | 86,9 | 75,0 |
| Էստոնիա | 69,0 | 75,3 | 61,3 |
| Ֆինլանդիա | 83,6 | 89,2 | 75,9 |
| Ֆրանսիա | 99,8 | 103,9 | 94,5 |
| Գերմանիա | 87,6 | 90,2 | 85,3 |
| Հունաստան | 96,9 | 104,7 | 87,4 |
| Հունգարիա | 87,0 | 89,0 | 83,7 |
| Իսլանդիա | 95,0 | 103,8 | 77,5 |
| Իռլանդիա | 83,0 | 89,1 | 73,8 |
| Իսրայել | 105,2 | 110,7 | 96,2 |
| Իտալիա | 103,0 | 111,6 | 94,2 |
| Ճապոնիա | 85,2 | 91,8 | 78,0 |
| Կորեա | 68,0 | 75,3 | 58,6 |
| Լատվիա | 72,0 | 80,6 | 60,4 |
| Լիտվա | 67,4 | 71,5 | 63,0 |
| Լյուքսեմբուրգ | 110,1 | 112,4 | 106,4 |
| Մեքսիկա | 102,3 | 106,5 | 95,6 |
| Նիդեռլանդներ | 79,2 | 85,3 | 69,8 |
| Նոր Զելանդիա | 80,1 | 86,5 | 69,7 |
| Նորվեգիա | 90,0 | 99,5 | 77,0 |
| Լեհաստան | 85,7 | 85,5 | 86,0 |
| Պորտուգալիա | 95,7 | 102,6 | 88,1 |
| Սլովակիա | 86,6 | 88,5 | 82,9 |
| Սլովենիա | 86,5 | 86,9 | 85,9 |

| | | | |
|---|---|---|---|
| Իսպանիա | 99,0 | 107,7 | 89,2 |
| Շվեդիա | 86,5 | 98,1 | 71,9 |
| Շվեցարիա | 80,8 | 86,4 | 74,2 |
| Թուրքիա | 97,3 | 101,0 | 90,6 |
| Միացյալ Թագավորություն | 86,4 | 90,5 | 81,0 |
| Միացյալ Նահանգներ | 93,2 | 99,1 | 83,8 |
| **ՏՀԶԿ** | **88,0** | **93,2** | **80,9** |

*Միջին եկամուտն ըստ տարիքային խմբի՝ ընդհանուր բնակչության միջին եկամտի %-ով**

* Աղյուսակը կազմվել է մեր կողմից հիմք ընդունելով [Insee.fr]

ՏՀԶԿ շատ երկրներում տարեց մարդիկ ավելի հավանական է որ աղքատության մեջ լինեն, քան այլ տարիքային խմբերը: ՏՀԶԿ-ի տվյալներով՝ 66-75 տարեկան մարդկանց 12,5%-ը և 76+ տարեկանների 16,6%-ն ապրում են միջինի 50%-ից ցածր եկամուտներով, մինչդեռ ընդհանուր բնակչության համար այդ ցուցանիշը կազմում է 11,4%: Որոշ երկրներում տարեցների շրջանում աղքատության մակարդակը գերազանցում է 25%-ը, իսկ Բալթյան երկրներում և Կորեայում նույնիսկ հասնում է 40%-ի և ավելի բարձր 76+ խմբի համար: 2022 թվականի հունվարին Չիլին իր նպատակային պետական կենսաթոշակային սխեման փոխարինեց գրեթե համընդհանուր սխեմայով: Նոր սխեմայի համաձայն, համընդհանուր երաշխավորված կենսաթոշակը, որն ի սկզբանե հասանելի էր 65+ տարեկան մարդկանց ստորին 90%-ին, 2023 թվականի փետրվարին տարածվեց բնակչության ստորին 90%-ի 65+ տարեկան բոլոր մարդկանց վրա: Շահառուների թիվն աճել է մոտավորապես 4%-ով: Նպաստների մակարդակը նույնպես նախորդ սխեմայի համեմատ ավելացել է 4%-ով՝ կազմելով միջին համախառն եկամուտի մոտ 19%-ը [Institute national de la statistique] (Տե՛ս, Աղյուսակ 2):

*Աղյուսակ 2*

| Երկրներ | 65 ից բարձր | | | | | Ամբողջ բնակչությունը |
|---|---|---|---|---|---|---|
| | Ամբողջը | Ըստ տարիքի | | Ըստ սեռի | | |
| | | 66-75 | 75-ից բարձր | Տղամարդիկ | Կանայք | |
| Ավստրալիա | 22,6 | 19,7 | 27,0 | 18,2 | 26,6 | 12,6 |
| Ավստրիա | 10,6 | 9,6 | 12,0 | 7,3 | 13,2 | 9,6 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բելգիա | 8,6 | 5,9 | 12,2 | 7,3 | 9,8 | 7,3 |
| Կանադա | 12,1 | 11,0 | 13,9 | 9,2 | 14,6 | 8,6 |
| Չիլի | 17,6 | 17,7 | 17,4 | 17,6 | 17,5 | 16,5 |
| Կոստա Ռիկա | 22,4 | 21,4 | 24,0 | 22,8 | 22,1 | 20,3 |
| Չեխիա | 5,1 | 4,9 | 5,5 | 2,3 | 7,2 | 5,3 |
| Դանիա | 4,3 | 2,8 | 6,3 | 3,2 | 5,2 | 6,5 |
| Էստոնիա | 34,6 | 27,6 | 43,0 | 20,8 | 41,8 | 15,8 |
| Ֆինլանդիա | 6,3 | 4,9 | 8,3 | 4,5 | 7,7 | 6,7 |
| Ֆրանսիա | 4,4 | 4,0 | 4,9 | 3,3 | 5,2 | 8,4 |
| Գերմանիա | 11,0 | 12,1 | 9,8 | 8,6 | 12,7 | 10,9 |
| Հունաստան | 9,3 | 8,8 | 10,0 | 7,0 | 11,2 | 13,0 |
| Հունգարիա | 6,1 | 6,9 | 4,6 | 4,4 | 7,1 | 8,7 |
| Իսլանդիա | 3,1 | 4,0 | 1,1 | 4,5 | 1,7 | 4,9 |
| Իռլանդիա | 14,7 | 12,4 | 18,1 | 11,2 | 17,8 | 7,7 |
| Իսրայել | 17,0 | 15,2 | 20,1 | 14,3 | 19,3 | 16,9 |
| Իտալիա | 10,3 | 10,3 | 10,4 | 7,7 | 12,4 | 13,5 |
| Ճապոնիա | 20,0 | 16,4 | 23,9 | 16,4 | 22,8 | 15,7 |
| Կորեա | 40,4 | 31,4 | 52,0 | 34,0 | 45,3 | 15,3 |
| Լատվիա | 32,2 | 24,7 | 42,3 | 19,0 | 38,6 | 16,0 |
| Լիտվա | 27,0 | 25,7 | 28,4 | 13,9 | 33,8 | 14,1 |
| Լյուքսեմբուրգ | 5,2 | 4,9 | 5,7 | 4,9 | 5,4 | 9,8 |
| Մեքսիկա | 19,8 | 18,2 | 22,3 | 18,9 | 20,4 | 16,6 |
| Նիդեռլանդներ | 6,5 | 4,4 | 9,7 | 6,1 | 6,9 | 8,5 |
| Նոր Զելանդիա | 16,8 | 14,3 | 20,9 | 13,2 | 20,1 | 12,4 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Նորվեգիա | 3,8 | 2,7 | 5,4 | 2,3 | 5,1 | 7,9 |
| Լեհաստան | 13,2 | 13,7 | 12,3 | 7,6 | 16,8 | 9,1 |
| Պորտուգալիա | 13,8 | 12,5 | 15,2 | 10,4 | 16,2 | 12,8 |
| Սլովակիա | 6,6 | 6,2 | 7,6 | 4,4 | 8,2 | 7,8 |
| Սլովենիա | 10,7 | 10,2 | 11,6 | 7,1 | 13,4 | 7,0 |
| Իսպանիա | 11,3 | 9,9 | 12,8 | 10,1 | 12,2 | 15,4 |
| Շվեդիա | 11,1 | 8,3 | 14,5 | 7,2 | 14,5 | 9,2 |
| Շվեցարիա | 18,8 | 16,1 | 22,1 | 16,9 | 20,6 | 9,9 |
| Թուրքիա | 13,7 | 11,9 | 17,0 | 12,1 | 15,0 | 15,0 |
| Միացյալ Թագավորություն | 13,1 | 11,0 | 16,0 | 11,1 | 14,9 | 11,2 |
| Միացյալ Նահանգներ | 22,8 | 20,1 | 27,2 | 19,8 | 25,3 | 15,1 |
| **ՏՀԶԿ** | **14,2** | **12,5** | **16,6** | **11,1** | **16,5** | **11,4** |

***Տնային տնտեսությունների տնօրինվող եկամտի 50%-ից պակաս եկամուտ ունեցողների եկամուտը տոկոսներով*** *[OECD Income (IDD) and Wealth (WDD) Distribution Databases]*

Առաջին մակարդակի նպաստներում փոփոխություններ են կատարել նաև Կանադան, Էստոնիան, Ֆրանսիան, Իտալիան, Լիտվան, Իսպանիան, Շվեդիան և Թուրքիան: 2022 թվականի հուլիսին Կանադան 10%-ով ավելացրել է 75 և ավելի տարեկանների համար կացության հիմնական կենսաթոշակը: 2023 թվականի հունվարին Էստոնիան բարձրացրել է հիմնական և թիրախային կենսաթոշակները 20 եվրոյով, ինչը մոտավորապես 7%-ով բարձր է ինդեքսավորման ցուցանիշից: Շվեդիան նաև 12%-ով ավելացրել է թիրախային կենսաթոշակային նպաստները 2022 թվականի օգոստոսին: Ֆրանսիան, Իտալիան, Լիտվան, Իսպանիան և Թուրքիան որոշել են բարձրացնել նվազագույն ապահովագրական կենսաթոշակները [What Is the Right Price Index for the Social Security COLA]:

Որպես ֆինանսական կայունության բարելավմանն ուղղված ավելի լայն բարեփոխումների մաս՝ Ֆրանսիան զգալիորեն բարձրացրել է ընդհանուր նվազագույն կենսաթոշակը մինչև զուտ նվազագույն աշխատավարձի 85%-ը՝ 2023 թվականին կազմելով մոտ 1200 եվրո ամսական, ինչը 9%-ով ավել է: Իտալիան բարձրացրել է

նվազագույն կենսաթոշակները 1,5%-ով մինչև 75 տարեկան թոշակառուների համար և 6,4%-ով 75+ տարեկան թոշակառուների համար: Լիտվան փոխել է նաև հիմնական կենսաթոշակ ստանալու կանոնները՝ նվազեցնելով վճարումների պահանջվող ժամկետը մինչև 15 տարի:

*Եզրակացություն*

Ժողովրդագրական փոփոխությունների, տնտեսական մարտահրավերների և գլոբալիզացիայի պայմաններում շատ երկրներ բախվում են կենսաթոշակային համակարգերի հիմնանորոգման անհրաժեշտությանը:

Կենսաթոշակային բարեփոխումները կարող են ներառել.

1. Կենսաթոշակային տարիքի բարձրացում. Բազմաթիվ երկրներ բախվում են բնակչության ծերացման և ընդհանուր բնակչության մեջ թոշակառուների աճող համամասնության խնդրին: Կենսաթոշակային տարիքի բարձրացումը այս մարտահրավերը հաղթահարելու ամենատարածված միջոցներից մեկն է:
2. Անցում դեպի կուտակային համակարգեր. որոշ երկրներ բարելավում են իրենց կենսաթոշակային համակարգերը՝ անցնելով վճարովի համակարգերից, որտեղ ընթացիկ կենսաթոշակները ֆինանսավորվում են ներկայիս բնակչության վճարումների հաշվին, դեպի կուտակային համակարգեր, որտեղ անհատական կենսաթոշակային խնայողությունները ներդրվում են շուկայում:
3. Կենսաթոշակային ծառայությունների բազմազանություն. ի պատասխան բնակչության փոփոխվող կարիքների և նախասիրությունների, որոշ երկրներ առաջարկում են կենսաթոշակային մի շարք ծառայություններ, ինչպիսիք են մասնավոր կենսաթոշակային հաշիվները, ինդեքսավորված կենսաթոշակները և լրացուցիչ ապահովագրության տարբերակները:
4. Ֆինանսական կայունության ամրապնդում. շատ կենսաթոշակային համակարգեր բախվում են ֆինանսական մարտահրավերների, ինչպիսիք են՝ դեֆիցիտները և անբավարար միջոցները՝ պարտավորությունները ծածկելու համար: Հետևաբար, միջազգային բարեփոխումները կարող են ներառել նաև կենսաթոշակային համակարգերի ֆինանսական կայունության ամրապնդմանն ուղղված միջոցառումներ:

Այսպիսով, կենսաթոշակային բարեփոխումները բարդ և բազմակողմ գործընթաց են, որոնք հավասարակշռություն են պահանջում տնտեսական անհրաժեշտության և սոցիալական արդարության միջև: Եվ հենց դրանց իրականացումը կարող է հանգեցնել կենսաթոշակառուների կենսապայմանների էական բարելավմանը և բնակչության սոցիալական պաշտպանության մակարդակի բարձրացմանը:

*Գրականության ցանկ*

1. ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին», ընդունված 2010թ.
2. Կենսաթոշակային բարեփոխումներ. Հանրային իրազեկում (05 ապրիլի 2024), www.armstat.am:

3. Bańkowski Krzysztof, Cristina Checherita-Westphal, Julia Jesionek , Philip Muggenthaler, The effects of high inflation on public finances in the euro area, (eds.) (2023), ECB Eurosystem Occasional Paper Series No 332.
4. How inflation challenges pensions (April 03, 2024), https://www.oecd.org/pensions/How-inflation-challenges-pensions.pdf
5. Insee.fr, (April 05, 2024), https://www.insee.fr/fr/statistiques/fichier/2832246/FCSP_2015.pdf.
6. Institute national de la statistique, (April 05,2024), https://www.insee.fr/fr/statistiques/6464639
7. *OECD Income (IDD) and Wealth (WDD) Distribution Databases], April 05, 2024,* http://www.oecd.org/social/income-distribution-database.htm
8. What Is the Right Price Index for the Social Security COLA (April 08, 2024), https://crr.bc.edu/what-is-the-right-price-index-for-the-social-security-cola/

## THE INTERNATIONAL EXPERIMENT ON SOCIO-ECONOMIC SYSTEMS CHANGE

***Hovik Grigoryan***
*PhD in Economics, Associate Professor*
*EUA, Chair of Management*
*hovig@mail.ru*

***Abstract***

Significant societal changes are occurring in many countries, leading to discussions and implementations of socio-economic system transformations. These changes are driven by demographic shifts, including population growth, changes in life expectancy, and declining birth rates. The purpose of these transformations is to address challenges related to improving living standards and reducing societal inequality.

Governments, policymakers, and other stakeholders are actively engaged in these discussions and implementations. The outcomes of these transformations have far-reaching implications for future generations. Research into socio-economic transformations helps in understanding the various strategies adopted by different countries. By comparing and contrasting these strategies, valuable insights are gained, contributing to more effective experimentation and the development of innovative solutions to global socio-economic challenges. This study utilizes national statistical reports, official field documents, academic literature, as well as international financial and statistical assessments to comprehensively analyze the socio-economic landscape also including actual laws and sub-laws in Republic of Armenia.

***Keywords:*** Pension system, reform international, age limit, economy, finances.

Ներկայացվել է՝ 10.04.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 16.05.2024թ.

# IN-SITU ԵՎ EX-SITU ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ ԲԱՑՕԹՅԱ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ

https://doi.org /10.59982/18294359-24.15-ia-04

*Արմինե Սարգսի Մատենցյան*
*ՀԵՀ, Զբոսաշրջության և սպասարկման ամբիոն*
*matentsyana@gmail.com*

***Ամփոփագիր***

*Հոդվածում ներկայացված են բացօթյա թանգարանների գործունեության առանձնահատկությունները, որոնք ձևավորվել են թանգարանների այս տեսակի գոյության շուրջ 130 տարիների ընթացքում՝ ապահովելու յուրահատուկ պատմամշակութային լանդշաֆտների պաշտպանությունը, վերարտադրումը և մոդելավորումը: Պատմամշակութային լանդշաֆտն իրենից ներկայացնում է մարդու և բնության համատեղ ստեղծագործության արդյունք, որը բնութագրվում է տարածքային հստակ կազմակերպմամբ, որում բնական և ձեռակերտ տարրերը կազմում են անբաժանելի ամբողջություն՝ ձևավորելով յուրահատուկ բնամշակութային համալիր: Այսպիսի համալիրները, որպես կանոն, ցույց են տալիս որոշակի էթնիկ խմբերի և դրանց բնակավայրերի էվոլյուցիան, որը տեղի է ունեցել տարբեր՝ արտաքին և ներքին, բարենպաստ և անբարենպաստ, բնակլիմայական և սոցիալական գործոնների ազդեցության ներքո:*

*Այսօր պատմամշակութային լանդշաֆտները հանդիսանում են աշխարհի տարբեր տարաշածրջանների ժառանգության կարևորագույն օբյեկտներ, որոնց պահպանությունը և արդիականացումն իրականացվում է բացօթյա թանգարանացման միջոցով: Բացօթյա թանգարանն ինքնին ներկայացնում է թանգարանային հաստատության հատուկ ձևաչափ, որն այցելուներին հնարավորություն է տալիս ընկղմվելու անցյալ դարաշրջանների պատմական մթնոլորտում՝ միաժամանակ գնահատելով բնության և մարդու ներդաշնակ ու արարիչ համակեցության արդյունքը: Այս տիպի թանգարանների ուսումնասիրությունը կարևոր է հատկապես մշակութային բաղադրիչի կառավարման համատեքստում, որի համար կիրառվում են մշակութային ժառանգության պահպանման in-situ և ex-situ միջազգային իրավական սկզբունքները, որոնք ստացել են իրենց նորմատիվային ամրագրումը մի շարք միջպետական ակտերի և համաձայնագրերի վավերացման շնորհիվ:*

***Հիմնաբառեր.*** Բացօթյա թանգարան, մշակութային ժառանգություն, պահպանման in-situ և ex-situ սկզբունքներ, սկանսեն, ազգային պարկ, ճարտարապետալանդշաֆտային համալիր։

***Ներածություն***

Մշակութային ժառանգության պահպանման առանցքային և առաջնահերթ մոտեցումներից է in-situ (լատիներենից՝ in – մեջ, վրա; situs – դիրք, տեղադիրք, անշարժություն) միջազգային իրավական սկզբունքը, որը բառացի նշանակում է «տեղակայման վայրում» [*Lingua Latina, 376*]: Նեղ իմաստով սկզբունքը, այն է՝ մշակութային ժառանգության պահպանումն իր սկզբնական տեղակայման վայրում, ուղղակիորեն վերաբերում է մշակութային ժառանգության անշարժ (ճարտարապետական) օբյեկտներին, հնագիտական ժառանգությանը, ինչպես նաև ստորջրյա մշակութային ժառանգությանը, որը տարբեր պատճառներով հայտնվել է ծովերի, օվկիանոսների հատակում։ Լայն իմաստով in-situ միջազգային իրավական սկզբունքը նշանակում է ժառանգության պահպանություն առանց որոշակի պատմամշակութային միջավայրից և տարածքից այն առանձնացնելու։ Այսպիսով, սկզբունքի բովանդակությունը լայն իմաստով ներառում է երկու հիմնական փոխկապակցված բաղադրիչ՝

1. մշակութային (մշակութային ժառանգության օբյեկտի անխզելի կապը որոշակի ազգային մշակույթի, ավանդույթների, սովորույթների, կոնկրետ պատմական իրադարձությունների և գործընթացների հետ),
2. աշխարհագրական (մշակութային ժառանգության օբյեկտի անխզելի կապը որոշակի տարածքների, շրջանների, մայրցամաքների, կլիմայական գոտիների, ինչպես նաև վարչատարածքային միավորների/պետությունների հետ)։

Ex-situ պահպանման սկզբունքը (բառացիորեն՝ պահպանում տարածքից դուրս) իր առաջացման և զարգացման բնական միջավայրից դուրս որևէ օբյեկտի պաշտպանության գործընթացն է։ Ex-situ սկզբունքը առավել տարածված է կենսաբանության մեջ և կիրառվում է անհետացման վտանգի տակ գտնվող տեսակների և սորտերի պահպանման համար՝ պոպուլյացիայի մի մասը հեռացնելով վտանգված կենսամիջավայրից և տեղադրելով նոր, բնական միջավայրին նման արհեստական պայմաններում (կենդանաբանական և բուսաբանական այգիներ, սերմերի բանկեր և այլն), որտեղ մարդու խնամքի ներքո համապատասխան տեսակները կարող են ենթարկվել արհեստական սելեկցիայի և բազմացման։

Այս մոտեցումը կիրառվում է նաև մշակութային ժառանգության պահպանման ոլորտում, որտեղ ձևավորված պատմական ավանդույթն այնպիսին է, որ առաջնային և առավել նախընտրելի մոտեցումը in-situ սկզբունքն է։ Սակայն, եթե կան սպառնալիքներ, որոնք դժվար է հաղթահարել, և եթե անհնար է ամբողջությամբ կիրառել in-situ սկզբունքը, ապա ժառանգության առավելագույն պահպանման և ապագա սերունդներին փոխանցելու շահերից ելնելով օգտագործվում է ex-situ պահպանումը, ինչը նշանակում է

մշակութային ժառանգության օբյեկտների տեղափոխում կամ վերակառուցում (վերարտադրում) այլ վայրում, որը տարբերվում է դրանց ծագման միջավայրից:

Հետազոտության **նպատակն է՝** ներկայացնել in-situ և ex-situ սկզբունքների վրա հիմնված բնապատմական և մշակութային ժառանգության պահպանության միջազգային փորձը բացօթյա թանգարաններում:

Վերոնշյալ նպատակի իրականացման համար հոդվածում առաջադրվել են հետևյալ **խնդիրները՝** 1) վերլուծել ժառանգության պահպանման in-situ և ex-situ սկզբունքների նորմատիվաիրավական ամրագրումն ապահովող միջազգային ակտերը և համաձայնագրերը. 2) ուսումնասիրել բացօթյա թանգարանների զարգացման միջազգային փորձը՝ ներկայացնելով տարբեր տիպի բացօթյա թանգարանների հիմնական գործառույթները և առաջարկելով դրանց ամփոփ դասակարգումը. 3) բացահայտել բացօթյա թանգարանների դերը մշակութային ժառանգության պահպանման և զբոսաշրջության զարգացման գործում՝ ընդգծելով հատկապես in-situ և ex-situ սկզբունքների կիրառման առանձնահատկությունները:

Հետազոտության **օբյեկտն է՝** բացօթյա թանգարանը, որպես թանգարանային հաստատության հատուկ տեսակ, **առարկան՝** բացօթյա թանգարաններում in-situ և ex-situ սկզբունքների կիրառմամբ ժառանգության պահպանումը:

### *Միջազգային իրավական հիմնավորում*

Տեղին է դիտարկել միջազգային իրավունքի որոշ նորմեր, որոնք ամրագրում են մշակութային ժառանգության պահպանման in-situ սկզբունքի կարևոր դերը: Օրինակ, 1954 թվականի Եվրոպական մշակութային կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր պայմանավորվող կողմ պետք է իր վերահսկողության տակ գտնվող եվրոպական մշակութային արժեք ներկայացնող օբյեկտները համարի Եվրոպայի ընդհանուր մշակութային ժառանգության անբաժանելի մաս, համապատասխան միջոցներ ձեռնարկի դրանք պաշտպանելու և հանրության համար դրանց ողջամիտ հասանելիությունն ապահովելու համար [*European Cultural..., 1954*]: Այս նորմը հստակորեն ամրագրում է մշակութային ժառանգության պահպանման in-situ սկզբունքը լայն իմաստով: Սկզբունքի աշխարհագրական բաղադրիչն այս դեպքում որոշվում է մշակութային ժառանգության անխզելի կապով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տարածքի հետ, և ոչ թե եվրոպական մայրցամաքի տարածքի հետ: Մինչդեռ մշակութային բաղադրիչը որոշվում է եվրոպական մշակույթի հետ իր կապով՝ որպես Եվրոպա մայրցամաքի ամբողջական մշակույթի անբաժանելի մաս:

Այնուամենայնիվ, առաջին միջազգային իրավական ակտը, որն ուղղակիորեն սահմանում է մշակութային ժառանգության in-situ պահպանման սկզբունքը, ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1956 թվականի հանձնարարականն է, որը սահմանում է հնագիտական պեղումների միջազգային կարգավորման սկզբունքները [*UNESCO Rec., 1956*]: Հանձնարարականի 8-րդ կետի համաձայն՝ հուշարձանները, որոնց պահպանումը

տեղում անհրաժեշտ է համարվում, կարող են տեղափոխվել միայն համապատասխան մարմինների նախնական թույլտվությամբ:

Հիմք ընդունելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հանրային և մասնավոր աշխատանքներով վտանգված մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ 1968 թվականի հանձնարարականի 9-րդ կետը, պետությունները պետք է պատշաճ առաջնահերթություն տան նման աշխատանքներով վտանգված մշակութային արժեքները տեղում պահելու համար անհրաժեշտ միջոցառումներին՝ պահպանելու պատմական կապերը և տեղանքի մշակութային մթնոլորտը [*UNESCO Rec., 1968*]: Հանձնարարականի այս դրույթը որոշակիորեն արտացոլում է մշակութային ժառանգության in-situ պահպանման միջազգային իրավական սկզբունքի բովանդակությունը՝ ինչպես նեղ, այնպես էլ լայն իմաստով: Մշակութային արժեքները տեղում պահպանելու սկզբունքի առաջնահերթությունը սահմանվում է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1968թ.-ի հանձնարարականի 22-րդ կետում, համաձայն որի անհրաժեշտ է մանրակրկիտ հետազոտություններ կատարել ցանկացած վայրում շատ առաջ որևէ հանրային կամ մասնավոր աշխատանքների մեկնարկից, որոնք կարող են վտանգի ենթարկել մշակութային արժեքները:

Հնագիտական ժառանգության պաշտպանության մասին 1992 թվականի եվրոպական կոնվենցիայի 4-ii հոդվածը սահմանում է Կոնվենցիայի յուրաքանչյուր կողմի պարտավորությունը միջոցներ ձեռնարկել հնագիտական ժառանգության ֆիզիկական պաշտպանության համար՝ ապահովելով, ըստ հանգամանքների, դրա պահպանումը և խնամքը խիստ նախընտրելի in-situ սկզբունքով [*Convention…, 1992*]:

Հիշատակված միջազգային իրավական ակտերի հետ մեկտեղ պետք է նշել ինչպես 1985 թվականի Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի նախագիծը, այնպես էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ստորջրյա մշակութային ժառանգության պաշտպանության մասին 2001 թվականի կոնվենցիան, որը պարունակում է ամենամեծ թվով կանոններ, որոնք կարգավորում են մշակութային ժառանգության պահպանությունը հայտնաբերման վայրում, մասնավորապես՝ ստորջրյա թանգարանացման եղանակով [*UNESCO Convention…, 2001*]: Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի (ICOMOS – International Council on Monuments and Sites) մշակութային ժառանգության պաշտպանության և կառավարման 1996 թվականի խարտիայի [*ICOMOS Charter…, 1996*] 1-ին հոդվածը և նույն ICOMOS-ի հնագիտական ժառանգության պաշտպանության և կառավարման 1990 թվականի խարտիան [*ICOMOS Charter…, 1990*] սահմանում են մշակութային ժառանգության in-situ պահպանումը՝ որպես նախընտրելի տարբերակ:

Վերոնշյալ ակտերն ու համաձայնագրերը հսկայական ազդեցություն են ունեցել in-situ միջազգային իրավական սկզբունքի նորմատիվային ամրագրման վրա՝ այն սահմանելով որպես աշխարհում մշակութային ժառանգության պահպանման առաջնահերթ մոտեցում:

## *Բացօթյա թանգարանների էությունը, դասակարգման մոտեցումները, պահպանման սկզբունքների կիրառման օրինակները*

Բացօթյա թանգարանները մշակութային հաստատություններ են, որտեղ պատմամշակութային արտեֆակտները, ճարտարապետական կառույցները և այլ օբյեկտները պահպանվում և ցուցադրվում են բաց երկնքի տակ: Նման թանգարանները սովորաբար ներառում են այգիներ կամ այլ բնական տարածքներ, որտեղ գտնվում են ինչպես բնօրինակ, այնպես էլ վերարտադրված արտեֆակտներ: Այս վայրերն այցելուներին թույլ են տալիս բառացիորեն քայլել պատմության միջով, շփվել արտեֆակտների հետ, զգալ անցյալի մթնոլորտը և ավելի լավ ընկալել մշակութային ժառանգությունը: Բացօթյա թանգարանների գլխավոր հայեցակարգն այն է, որ դրանք կենտրոնացած են տարածքի բնական գեղեցկությունը պատմամշակութային տարրերի հետ համատեղելու վրա, որի արդյունքում ձևավորվում են յուրահատուկ բնամշակութային լանդշաֆտներ: Այսպիսի թանգարանները կարող են ներառել հնագույն բնակավայրերի վերականգնում, ինքնատիպ պատմական շենքերի, ճարտարապետական հուշարձանների և քանդակների ցուցադրություն, հնագիտական պեղումների արդյունքների ցուցադրություն, ազգագրական գյուղերի ստեղծում՝ տարածաշրջանի եզակի ժողովրդական մշակույթն ու ավանդական կենցաղը պահպանելու նպատակով, ինչպես նաև հնարավորություն են ընձեռում կազմակերպելու թեմատիկ միջոցառումներ, կրթական ծրագրեր և ինտերակտիվ ցուցահանդեսներ:

Աշխարհում թանգարանագիտության նշանակալի հարցերից մեկը բացօթյա թանգարանների դասակարգման խնդիրն է, ինչը նշանակում է դրանց ուսումնասիրություն և խմբավորում ըստ որոշակի չափանիշների:

Բացօթյա թանգարանների դասակարգման հիմնական կազմակերպչական և բովանդակային բնութագրերն են ստեղծման նպատակը և եղանակը, աշխարհագրական սկզբունքը և կառուցվածքային պլանավորումը, թեմատիկ բովանդակությունը և նկարագիրը: Իհարկե, այս հիմքերը չեն ընդգրկում բացօթյա թանգարանների գործունեության բոլոր ասպեկտները, և աշխարհում այդպես էլ չեն ձևավորվել նման թանգարանների դասակարգման բացարձակապես նույնական մոտեցումներ, ինչի արդյունքում առկա է այս թանգարանների տեսակների և դրանց համար կիրառվող անվանումների հսկայական բազմազանություն [*Laven, 5-18*]:

Ամփոփելով առկա տեղեկատվությունը, կարող ենք ասել, որ բացօթյա թանգարանները սովորաբար բաժանվում են երկու մեծ խմբի՝ **1) տրանսլոկացիոն,** այսինքն՝ շարժական, երբ կիրառվում է պահպանության ex-situ սկզբունքը, և **2) ստացիոնար**, որոնք ստեղծվում են in-situ սկզբունքով:

*Սկանսեններ, ազգագրական կամ կենդանի պատմության թանգարաններ*

Բացօթյա թանգարանների դասական և ամենավաղ տեսակները սկանսեններն են (շվեդերեն՝ skansen, նշանակում է ապաստան կամ պաշտպանական ծածկ), որոնք արտացոլում են գյուղական կամ քաղաքային ճարտարապետության պատմական էվոլյուցիան, ինչպես նաև ներկայացնում որոշակի տարածաշրջանի և պատմական ժամանակաշրջանի մարդկանց ավանդական ապրելակերպի և կենցաղի օրինակներ, ինչն այս թանգարաններին հաղորդում է հստակ ազգագրական բնույթ: Բացօթյա թանգարանների այս տեսակը առաջացել է 19-րդ դարի վերջին Սկանդինավիայում, և skansen տերմինը դարձել է ազգագրական թանգարանների ընդհանուր անվանումը եվրոպական լեզուների մեծ մասում:

Ամերիկյան մշակույթում նման թանգարանները կոչվում են «կենդանի պատմության թանգարաններ» (living history museums): Առաջին կենդանի պատմության թանգարանները բացվել են 1920-ականների վերջին ԱՄՆ-ում, որտեղ և ստացել են ամենամեծ զարգացումը:

Սկանսեն, ազգագրական կամ կենդանի պատմության թանգարանների կազմակերպչական ամենակարևոր սկզբունքը տրանսլոկացիայի կամ փոխադրման գաղափարն է, որը նշանակում է արժեքավոր ճարտարապետական հուշարձանների տեղաշարժ և ցուցադրում արհեստականորեն ստեղծված տարածքում, որը լցված է, այսպես ասած, իրական կյանքով: Գործարար և բնակելի տարածքներում, ի թիվս այլ բաների, պահպանվում են կահավորանքը, կենցաղային իրերը, գործիքները, տարազները, զենքն ու զրահը, իսկ թանգարանի աշխատակիցների օգնությամբ ցուցադրվում են առօրյա կյանքի ոճն ու դրվագները:

Աշխարհում կան բազմաթիվ բացօթյա ազգագրական կամ կենդանի պատմության թանգարաններ, օրինակ՝ Դանիայի, Չեխիայի, Նորվեգիայի, Էստոնիայի և Լատվիայի *սկանսեն* տեսակի թանգարանները, Տիրոլյան ֆերմաների թանգարանը Ավստրիայում, Լեհական գյուղի թանգարանը Վարշավայի մոտակայքում, «Բոքրեյկ» թանգարանը Բելգիայում, Թբիլիսիի բացօթյա ազգագրական թանգարանը, Հարավային Կորեայի Գյոնգի քաղաքում գտնվող «Կորեական ազգագրական գյուղ» թանգարանը և այլ վայրեր:

Այս տեսակի թանգարաններից թերևս ամենահայտնին շվեդական սկանսենն է:

Skansen Park-ը՝ Շվեդիայի առաջին բացօթյա թանգարանը, գտնվում է Ստոկհոլմի Յուրգորդեն կղզում [*Skansen*]: Թանգարանը հիմնադրվել է 1891 թվականին ազգագրագետ Արթուր Հասելիուսի կողմից և դարձել է ամբողջ աշխարհի համար բացօթյա թանգարանի օրինակելի մոդել: Skansen Park-ը կարծես պատմական Շվեդիայի մանրակերտը լինի, քանի որ այստեղ հավաքված են XIV-XX դարերի ավելի քան 160 տներ և ագարակներ ամբողջ երկրից, որոնք ներկայացնում են տարբեր շրջանների և խավերի ներկայացուցիչների կյանքը՝ գյուղացիներից մինչև ազնվականներ: Այստեղ այցելուները կարող են զբոսնել պուրակում, քայլել պատմական փողոցներով, հյուրասիրվել ավանդական հացատներում, համերգ լսել, պարել, այցելել բազմաթիվ հուշանվերների խանութներ և արհեստագործական կենտրոններ, մասնակցել գյուղատնտեսական

աշխատանքներին պատմական ֆերմաներում: Ավանդական տարազներով թանգարանի աշխատակիցները էքսկուրսիաներ են անցկացնում բազմաթիվ ագարակներով և ֆերմաներով:

Skansen-ը, որը ներկայացնում է երկրի բազմազան բնական և կլիմայական գոտիները, որոնք ունեն տարբեր պատմական անցյալ, բնակչության բազմազան ռասայական, էթնիկ և կրոնական կազմ, մշակութային զբոսաշրջիկների համար գրավիչ նպատակակետ է, գաստրոնոմիական մշակույթի հանրահռչակման կենտրոն: Այսօր այն Շվեդիայի ամենահայտնի տեսարժան վայրերից մեկն է. վերջին հարյուրամյակի ընթացքում թանգարան է այցելել ավելի քան 180 միլիոն զբոսաշրջիկ:

Գաղութային Ուիլյամսբուրգի (Colonial Williamsburg) կենդանի պատմության թանգարանը, որը գտնվում է ԱՄՆ Վիրջինիա նահանգում, ստեղծվել է 1920-ականների վերջին: Սա կենդանի պատմության աշխարհի խոշորագույն բացօթյա թանգարան-քաղաքն է, որը ներկայացնում է 18-րդ դարի բրիտանական գաղութի կյանքը՝ վերարտադրելով 1750-80-ական թվականների քաղաքի տեսքը՝ Անկախության պատերազմից առաջ և ընթացքում [*Colonial Williamsburg*]: Թանգարանն օգտագործում է ժամանակաշրջանի տեխնոլոգիաներն ու արհեստները՝ գաղութային Ամերիկայում կյանքի մթնոլորտը վերստեղծելու համար: Պատմական տարազներով թանգարանի աշխատակիցները, ինչպես նաև ավելի քան 1500 դերասաններ ամեն օր քայլում են քաղաքի փողոցներով և զրուցում տարբեր թեմաների շուրջ՝ դարբնի աշխատանքի առանձնահատկություններից մինչև այն ժամանակվա գաղութարարներին անհանգստացնող քաղաքական խնդիրներ: Այստեղ, վերարտադրելով ժամանակի ոգին, մշտապես գործում են պատմական խանութներ, արհեստանոցներ, պանդոկներ, տպագրատներ, թատրոն և այլ սոցիալական կառույցներ, այդ թվում՝ Դատարանը, որը ներկայացնում է գաղութային քաղաքի արդարադատության սկզբունքները:

Քաղաք-թանգարանի 500 շենքերից 88-ը աուտենտիկ են, այսինքն՝ իրական պատմական, որոնցից մի քանիսը տեղափոխվել են այլ շրջանից: Մնացածները վերստեղծվել են 18-րդ դարի շինարարական տեխնոլոգիաներով և կահավորվել պատմական ժամանակաշրջանի իրերով: Այսինքն՝ կարող ենք ասել, որ տվյալ բացօթյա թանգարանում մշակութային ժառանգության պահպանությունն իրականացվում է in-situ և ex-situ սկզբունքների համատեղման եղանակով:

Քաղաք-թանգարանում գործում է հինգ պատմական հյուրանոց, 12 սննդի սպասարկման հաստատություն՝ պանդոկներ և ռեստորաններ, երկու գոլֆ-ակումբ, SPA-կենտրոն, երկու գեղարվեստի պատկերասրահ, ձիարան, որն առաջարկում է 18-րդ դարի կառքերով զբոսանքներ: Թանգարանում իրականացվում են բազմաթիվ կրթական և հետազոտական ծրագրեր դպրոցականների և ուսանողների համար: Բացի դա, այստեղ գործում է Գաղութային Ուիլյամսբուրգի ուսուցիչների ինստիտուտը (Colonial Williamsburg Teacher Institute), որն ԱՄՆ-ի պատմության ուսուցիչներ է պատրաստում երկրի բոլոր նահանգների դպրոցների համար:

Մնացած բոլոր տեսակի բացօթյա թանգարանները ստեղծվել են բացառապես in-situ սկզբունքով, որը դարձել է նշանակալի համալիրների/անսամբլների պահպանման ամենաարդյունավետ ձևը: In-situ թանգարանը հիմնված է թանգարանացման հետևյալ սկզբունքի վրա՝ օբյեկտների պահպանում իրենց բնական միջավայրում: Նման թանգարանը ցուցադրում է պատմության և բնության հուշարձանները և տեսարժան վայրերը որպես ձևավորված ամբողջական համակարգ, որի նպատակն է պայմաններ ապահովել որոշակի տարածքի բնական միջավայրի և պատմամշակութային հուշարձանների պաշտպանության և հանրահռչակման համար՝ հաշվի առնելով նրանց միջև առկա պատմական կապը: Նման թանգարանները միջազգային դասակարգումներով համարվում են **միջավայրային** (որոշակի մշակութային և բնական միջավայր պահպանող) և կարող են կոչվել հետևյալ կերպ.

- Համալիրներ, օրինակ՝ ճարտարապետալանդշաֆտային համալիր, բնաճարտարապետական համալիր, պատմաճարտարապետական համալիր.
- Արգելոց-թանգարաններ, այդ թվում՝ հնագիտական արգելոցներ, որոնք ստեղծվում են պեղումների վայրերում.
- Ազգային պարկեր, որոնք նախատեսված են բնության եզակի հուշարձանների և էկոհամակարգերի պահպանման համար, իսկ պատմամշակութային հուշարձաններով հարուստ պարկերը կարող են կոչվել նաև բնապատմական կամ պատմամշակութային պարկեր:

***Բացօթյա հնագիտական թանգարաններ***

Բացօթյա հնագիտական թանգարաններն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում թանգարանային ոլորտում՝ բացառիկ հնարավորություն ընձեռելով ուսումնասիրելու հնագիտական գտածոներն իրենց հայտնաբերման բնական միջավայրում: Թանգարանները հաճախ ներառում են հնագույն բնակավայրերի պեղումներ, որտեղ այցելուները կարող են հետևել գիտահետազոտական գործընթացին և գնահատել գտածոների մասշտաբները: Այս թանգարանները կարևոր դեր են խաղում հնագիտական ժառանգության պահպանման, ուսումնասիրման և ցուցադրման գործում:

Որոշ թանգարաններ հագեցած են վերականգնողական լաբորատորիաներով, որտեղ այցելուները կարող են հետևել հնագիտական գտածոների վերականգնման գործընթացին: Նման լաբորատորիաները սովորաբար ստեղծվում են մասնագիտացված գիտական ծրագրերի շրջանակներում և մշակում են միջոցառումներ բաց տարածքներում գտնվող հնագիտական վայրերի իսկությունը և ամրությունը պահպանելու համար:

Կարելի է բերել բացօթյա հայտնի հնագիտական թանգարանների հետևյալ օրինակները՝ Եփեսոսի հնագիտական բացօթյա թանգարանը Թուրքիայում, Կնոսոսի (Կրետե կղզի) և Սկիրոնի (Սկիրոս կղզի) համալիրները Հունաստանում, Հռոմեական ֆորումի բացօթյա թանգարանը Հռոմի կենտրոնում, Մահենջոդարո հնագույն քաղաքի բացօթյա թանգարանը Պակիստանում, Կարնակ և Լուքսոր հնագույն տաճարային

համալիրները Եգիպտոսում և այլն: Ներկայացնենք առավել հայտնի հնագիտական բացօթյա թանգարաններից երկուսը:

Պոմպեյը (իտալ.՝ Pompei) և Հերկուլանումը (իտալ.՝ Ercolano) հին հռոմեական քաղաքներ են Իտալիայում, Նեապոլի մոտ՝ Կամպանիա շրջանում, որոնք ամբողջությամբ թաղվել են հրաբխային մոխրի շերտի տակ՝ 79 թվականին Վեզուվ հրաբխի ժայթքման հետևանքով [*Помпеи и Геркуланум*]: Այժմ դրանք աշխարհի ամենամեծ բացօթյա թանգարաններից են, որոնք ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Ավերված քաղաքների վայրերում պեղումները սկսվել են 18-րդ դարի կեսերին և ընդհատումներով իրականացվել գիտնականների տարբեր խմբերի կողմից: Պոմպեյում վերջին գտածոն թվագրվում է 2023 թվականի մայիսին, երբ հնագետները հայտնաբերել են երկրաշարժից մահացած 2 մարդու մնացորդները: Մինչ օրս Պոմպեյի մոտավորապես 80%-ն արդեն պեղվել է: Զբոսաշրջության տեսանկյունից Պոմպեյն ավելի հայտնի տեսարժան վայր է, քան Հերկուլանումը: Բացօթյա հնագիտական թանգարանը ներկայացնում է ամբողջական փողոցներ և հրապարակներ, տաճարներ, թատրոններ, բնակելի շենքեր, հասարակական բաղնիքներ և զուգարաններ, հացահատիկի պահեստներ, ախոռներ և բազմաթիվ այլ շինություններ:

***Ճարտարապետալանդշաֆտային համալիրներ***

Ճարտարապետալանդշաֆտային համալիրներն ապահովում են պատմական ճարտարապետական կոթողները բնության գեղեցկության հետ համադրելու և որոշակի դարաշրջանի մթնոլորտը վերստեղծող յուրահատուկ մշակութային տարածք ձևավորելու փորձ: Այդ համալիրները կարող են ներառել պատմական շենքեր, ինչպիսիք են պալատական համալիրները, ազարակապուրակային անսամբլները, վանական համալիրներն իրենց բնական միջավայրով և այլ տարրեր, որոնք վավերական պայմաններ են ստեղծում տվյալ վայրի մշակութային ժառանգությունը պահպանելու, տարբեր ճարտարապետական ոճերի և ավանդույթների էվոլյուցիայի ուսումնասիրման համար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգման համաձայն՝ այսպիսի համալիրները կոչվում են նաև ձեռակերտ մշակութային լանդշաֆտներ, որոնք բնութագրվում են տարածքային հստակ կազմակերպմամբ, ունեն կուռ նախագծային լուծում, դրանց արտաքին տեսքը ամբողջովին ենթարկված է մարդու ստեղծագործական գաղափարին, և արդյունքում առաջանում է բնական և ճարտարապետական տարրերի անքակտելի ամբողջականություն [*Веденин, Кулешова*]:

Շենքերի ներսում պահպանվում կամ վերստեղծվում են կահույքով, կենցաղային իրերով և համապատասխան դարաշրջանների գեղարվեստական գործերով հագեցած ինտերիերներ: Բացի ճարտարապետական տարրերից, այսպիսի համալիրները ներառում են խնամված պուրակներ, որտեղ այցելուները կարող են զբոսնել և վայելել բնության գեղեցկությունը: Երբեմն դրանք կանոնավոր այգիներ են՝ սիզամարգերի և ծառուղիների խիստ երկրաչափական դասավորությամբ: Կարող են լինել ջրային տարրեր՝ շատրվաններ, լճակներ կամ գետեր, որոնք հարստացնում են համալիրի

լանդշաֆտային դիզայնը: Համալիրներում կարող են տեղադրվել արվեստի օբյեկտներ և քանդակներ՝ լրացնելով ճարտարապետական և բնական տարրերը և ստեղծելով որոշակի դարաշրջանի յուրահատուկ էսթետիկա:

Ընդգծենք, որ ճարտարապետալանդշաֆտային համալիրները կարող են լինել և՛ աուտենտիկ (կազմված իրական պատմական ճարտարապետական կոթողներից), և՛ վերականգնված/վերստեղծված:

Դառնալով զբոսաշրջային գրավչության կենտրոններ՝ ճարտարապետալանդշաֆտային համալիրները նպաստում են զբոսաշրջային ենթակառուցվածքների (հյուրանոցների, սննդի օբյեկտների, այլ ծառայություններ մատուցող կազմակերպությունների) զարգացմանը՝ դրանով իսկ նպաստելով տարածաշրջանների տնտեսական զարգացմանը, ներառյալ տեղական բիզնեսի խթանումը և նոր աշխատատեղերի ստեղծումը:

Մաչու Պիկչու ճարտարապետալանդշաֆտային թանգարան-արգելավայրը (Machu Picchu Architecture and Landscape Museum-Reserve) ներկայացնում է ինկերի խորհրդավոր քաղաքակրթության հնագույն քաղաքը՝ Մաչու Պիկչուն, աշխարհի ամենահայտնի զբոսաշրջային վայրերից մեկը: Սա ճարտարապետության իսկական գլուխգործոց է՝ ստեղծված բնության հետ լիակատար ներդաշնակությամբ: Քաղաքը գտնվում է պերուական Անդերում, 2430 մ բարձրության վրա, արևադարձային անտառով շրջապատված, երկու լեռնագագաթների միջև, որտեղ զրեթե ուղղահայաց ժայռերը առաջացնում են 450 մ խորությամբ անդունդ [*История места*]:

Բավականին լավ պահպանված քարե քաղաքը, ենթադրաբար, կառուցվել է 15-րդ դարում և հարյուր տարի անց լքվել է իր բնակիչների կողմից: Մաչու Պիկչուի թաղումների մնացորդների վերջին ռադիոածխածնային հետազոտությունը ցույց է տվել, որ մարդիկ այստեղ ապրել են 1420-ից 1532 թվականներին, ինչը համընկնում է ինկերի երկիր իսպանացիների ներխուժման ժամանակի հետ: Վարկածներից մեկի համաձայն՝ իսպանացիների ներխուժումից հետո քաղաքում սննդի պաշարները սպառվել են, խմելու ջրի աղբյուրն անհետացել է, տղամարդիկ մեկնել են կռվելու իսպանացի նվաճողների դեմ և չեն վերադարձել, ծերերը մահացել են, կանայք չեն ծննդաբերել, և քաղաքը արագորեն դատարկվել է:

Քաղաքը մոռացության մեջ էր մոտ չորս դար, մինչև ամերիկացի գիտնական, հետազատող Հայրամ Բինգհեմը (Hiram Bingham) հայտնաբերեց այն 1911 թվականին: Մաչու Պիկչուի բնական լանդշաֆտը և ճարտարապետությունը կազմում են մեկ ամբողջություն: Քաղաքում կա մոտ 200 շինություն՝ պալատներ, տաճարներ և սրբավայրեր, հրապարակներ և բնակելի տներ, արձաններ և շատրվաններ, հենապատեր և գյուղատնտեսական գործունեության համար նախատեսված բազմաշերտ տեռասներ, որոնք լցված են գետահովտից բարձրացված պարարտ հողով: Եվ այս ամենը կառուցված է սրբատաշ, խնամքով մշակված քարից՝ առանց որևէ ամրացնող լուծույթի:

1983 թվականին Մաչու Պիկչուն ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցանկում: Այսօր «ինկերի կորուսյալ քաղաքը» Հարավային Ամերիկայի

ամենագրավիչ պատմամշակութային վայրն է, ուր տարեկան միջինում 1.6 մլն զբոսաշրջիկ է այցելում:

Բաց երկնքի տակ ճարտարապետալանդշաֆտային բազմաթիվ թանգարաններ կան Ռուսաստանի Դաշնությունում, որոնցից առավել հայտնիները ներկայացնում են Հյուսիս-արևմտյան Ռուսաստանի՝ XVI-XIX դարերի ավանդական փայտե ճարտարապետությունը:

ՌԴ Արխանգելսկի մարզում գտնվող «Մալիյե Կորելի» («Малые Корелы») համալիրը՝ փայտե ճարտարապետության ամենամեծ թանգարանն է աշխարհում: Այստեղ կարելի է տեսնել Ռուսական Հյուսիսը ներկայացնող 100-ից ավել եկեղեցիներ և տաճարներ, հարուստ վաճառականների կալվածքներ և գյուղացիական տներ, գոմեր, ջրաղացներ, ախոռներ և այլ ավանդական շինություններ: Համալիրը բացօթյա թանգարանի կարգավիճակ է ստացել 1973 թվականին [*Музей «Малые Корелы»*]:

«Կիժի» թանգարան-արգելոցը (Музей-заповедник «Кижи») գտնվում է Կարելիայում, Օնեգա լճի Կիժի կղզում: Ճարտարապետական համալիրի կենտրոնում է Տիրոջ Պայծառակերպության եկեղեցին՝ 18-րդ դարի սկզբի եզակի կառույց, որի հատակագիծը, ըստ լեգենդի, Պետրոս I կայսրն ինքը ձեռնափայտով նկարել է ավազի վրա: Բացի եկեղեցուց, թանգարան-արգելոցի տարածքում կան 18-19-րդ դարերի մի քանի վերականգնված գյուղացիական տներ և շրջանի բնիկ ժողովուրդների կյանքին ու մշակույթին նվիրված ցուցահանդեսներ: «Կիժի» թանգարան-արգելոցը 1990թ. ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ [*Музей-заповедник «Кижи»*]:

Այս երկու թանգարանների առանձնահատկությունն այն է, որ դրանք ներկայացնում են ռուսական փայտե ճարտարապետության բացառիկ մի ավանդույթ. բոլոր շինությունները կառուցվել են առանց մեկ մեխի, միայն կացնի օգնությամբ:

***Ազգային բնապատմական և պատմամշակութային պարկեր***

Ազգային բնապատմական և պատմամշակութային պարկերը եզակի տարածքներ են, որոնք համատեղում են բնական լանդշաֆտները և պատմական արտեֆակտները՝ պահպանելու և ցուցադրելու մշակութային ժառանգությունը: Այս պարկերը գործում են որպես բացօթյա թանգարաններ, որոնք այցելուներին հնարավորություն են տալիս շփվելու բնության և պատմության հետ, պարունակում են ճարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են բերդերը, վանքերը, կամուրջները, որոնք պահպանել են իրենց սկզբնական տեսքը կամ վերականգնվել: Այնուամենայնիվ, նման կառույցների վերականգնումը պետք է ճշգրտորեն արտացոլի համապատասխան պատմական ժամանակաշրջանի ճարտարապետական ոճը:

Ազգային բնապատմական և պատմամշակութային պարկերը ներառում են լանդշաֆտային այգիներ, անտառներ և բնական արգելավայրեր, որոնք պահպանում են բնական էկոհամակարգերը և հնարավորություն են տալիս բացօթյա հանգստի և բնության ուսումնասիրության համար: Նման այգիները հաճախ ներառում են գետեր, լճեր և այլ ջրային օբյեկտներ, որոնք հարստացնում են այցելուների բնաճանաչողական և

ռեկրեացիոն փորձը: Որոշ այգիներ պարունակում են երկրաբանական կազմավորումներ, այդ թվում՝ բնական և պատմական արժեք ներկայացնող լեռնաշղթաներ, քարանձավներ, բնության հուշարձաններ:

Պարկերում, որպես կանոն, կազմակերպվում են տուրեր և էքսկուրսիաներ: Դրանք հաճախ ունենում են տեղեկատվական կենտրոններ, որտեղ այցելուներին տրամադրվում է ողջ անհրաժեշտ ինֆորմացիան, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ, վարպետության դասեր, տարածաշրջանի պատմությանը, մշակույթին և բնությանը նվիրված կրթական ծրագրեր:

Պարկերում կարող են կազմակերպվել թատերականացված շոուներ, որոնք վերստեղծում են որոշակի պատմական դարաշրջաններ և իրադարձություններ, ինչպես նաև փառատոններ և տոնավաճառներ, որոնք նպաստում են տեղական ավանդույթների, արհեստների և արտադրանքի տարածմանը: Այսպիսի պարկերի շուրջ զբոսաշրջությունը խթանում է տեղական տնտեսությունը, հյուրընկալության ենթակառուցվածքների բարելավումը, աշխատատեղերի ստեղծումը և փոքր բիզնեսի զարգացումը:

Նշենք, որ տարբեր երկրներում այս տիպի բացօթյա թանգարանները կարող են տարբերվել թե՛ իրենց մեծությամբ՝ զբաղեցնելով շատ մեծ տարածքներ, թե՛ ունենալ տարբեր անվանումներ, օրինակ՝ ազգային պատմամշակութային պարկ, ազգային բնապատմական արգելավայր, պատմամշակութային թանգարան-արգելոց և այլն:

«Գյորեմե» (թուրք.՝ Göreme) ազգային բնապատմական պարկը թանգարան է բաց երկնքի տակ՝ Թուրքիայի Նևշեհիր նահանգում, որը զբաղեցնում է Կենտրոնական Անատոլիայի Կապադովկիա պատմական շրջանի մի մասը: Պարկի տարածքն իր մեջ ներառում է հրաբխային ծագման շատ հետաքրքիր լանդշաֆտ, անթիվ քարե սյուներ, մ.թ.ա. 1-ին հազարամյակի ստորգետնյա բնակավայրեր և բազմաթիվ քարանձավային եկեղեցիներ, որոնք ստեղծվել են քրիստոնեության վաղ ժամանակաշրջանում: 1985 թվականից Գյորեմե ազգային պարկը և Կապադովկիա քարանձավային բնակավայրը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային Ժառանգության օբյեկտների ցանկում [*Göreme*]:

Կապադովկիան առանձնանում է անկրկնելի երկրաբանական կառուցվածքով, որը ձևավորվել է 65-62 միլիոն տարի առաջ: Հրաբուխների ժայթքման ժամանակաշրջանում տեղանքը ծածկվել է տուֆով և այլ հրաբխային ապարներով: Այնուհետև, սողանքների և հողմահարումների ժամանակաշրջանում հրաբխային ապարներից առաջացել են առանձին բլուրներ, կոներ, սյուներ և սնկանման գոյացություններ:

Կապադովկիայի քարանձավային քաղաքները յուրօրինակ համալիր են կազմում, որը ստեղծվել է բազմաթիվ դարերի ընթացքում: Այն իր մեջ ներառում է մի քանի ստորգետնյա բնակավայրեր և ժայռերի մեջ փորված եկեղեցիներ: Մ.թ. I դարից սկսած Հռոմեական կայսրության առաջին քրիստոնյաներից շատերը, փախչելով իշխանությունների հալածանքներից, պատսպարվել են Կապադովկիայի քարանձավներում, որտեղ և հիմնել են իրենց եկեղեցիները: VI-IX դարերում Գյորեմեն Մերձավոր Արևելքի քրիստոնեական ամենախոշոր կենտրոններից էր, որտեղ կար 400-

ից ավելի եկեղեցի։ Այսօր դրանցից պահպանվել են ընդամենը վեցը։ Բոլոր եկեղեցիների պատերը և առաստաղները ծածկված են որմնանկարներով, որոնք հանդիսանում են բյուզանդական ուղղափառ սրբապատկերագրության իրական կոթողներ։

Գյորեմեի շուրջ ձևավոնվել է զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածք. հարակից քաղաքներից ազգային պարկ կարելի է հասնել կանոնավոր ավտոբուսային հաղորդակցության միջոցով, պարկի տարածքում գործում են տարբեր տիպի հյուրանոցներ՝ այդ թվում քարանձավային, կան տուրիստական գրասենյակներ, որոնք ազգային պարկում էքսկուրսիաներ են անցկացնում։

«Ուդանշան» (Wudangshan) ազգային բնապատմական պարկը գտնվում է կենտրոնական Չինաստանի սրտում՝ Հուբեյ նահանգում։ Այն ներառում է Ուդանշան լեռնային համակարգի 72 լեռնագագաթ և 24 հովիտ։ Առասպելական Ուդան լեռը համարվում է դաոսիզմի բնօրրան և, ըստ լեգենդի, արևելյան մարտարվեստների ծննդավայրերից մեկը։ Հենց այստեղ է ծնունդ առել կունգ-ֆուի Տայչի ոճը և դաոսական դպրոցը, որը հիմնված է դաոսական փիլիսոփայության սկզբունքների վրա։ Ուդանշանի ամենաբարձր հատվածում է այսպես կոչված «Արգելված քաղաքը», որի տարածքում գտնվում է 7-րդ դարի դաոսական վանական համալիրը՝ մարտարվեստների, չինական ավանդական բժշկության և դեղագործության կենտրոնը։ Այսօր էլ այստեղ գործում են մարտարվեստի մի քանի դպրոցներ։ Հոկտեմբերին անց է կացվում կունգ-ֆուի ամենամյա միջազգային մրցաշարը։

Ուդանշանի լեռներում VII-XV դարերում կառուցված 33 վանական համալիրները ձգվում են 80 կմ տարածության վրա և կապվում են միմյանց հետ սալածածկ կածաններով։ Վանքերը ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում՝ որպես Չինաստանի բարձրալեռնային ավանդական ճարտարապետության գլուխգործոցներ։

Պարկի տարածքում գործում են մի քանի փոքր, համեստ հյուրանոցներ և հյուրատներ, մատուցվում են ուղեկցորդ-էքսկուրսավարի ծառայություններ *[Best National…]*։

***Եզրակացություն***

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բացօթյա տարածքների թանգարանացումը, ընդհանուր առմամբ, միտված է ներկայացնելու օբյեկտներ և արտեֆակտներ, որոնք պահպանել են իրենց եզակիության բավարար նյութական և ոչ նյութական ապացույցներ և դարձել պատմականորեն կայացած թանգարանային համալիրների հիմքը։ Դրանցից առանձնանում են այն տարածքները, որտեղ պատմության և բնության հուշարձանները պահպանվում են կենդանի ավանդույթի շրջանակներում՝ դինամիկ տեսքով։ Մյուս խումբը բաղկացած է տարածքներից, որոնք կորցրել են իրենց պատմական խկությունը և արհեստականորեն լցված են թանգարանային ցուցանմուշներով։ Ըստ այդմ, մենք կարող ենք տարբերակել՝

- պատմականորեն ձևավորված համալիրներ (հնագիտության և ճարտարապետության ավանդական թանգարաններ, խառը տիպի թանգարաններ, թանգարան-արգելոցներ),
- արհեստականորեն ստեղծված համալիրներ կամ թանգարան-պուրակներ (սկանսեններ և կենդանի պատմության այգիներ),
- մշակութային և էկոլոգիական զարգացող համալիրներ (պատմամշակութային ուղղվածության ազգային պարկեր)։

Բոլոր այն հաստատությունները, որոնք կարելի է անվանել բացօթյա թանգարաններ, ուղղակիորեն համատեղելով զբոսայգու և թանգարանի գործառույթները ու ձևավորելով ներդաշնակ բնամշակութային լանդշաֆտներ, դառնում են տարածաշրջանների հանրահռչակման արդյունավետ միջոց, բարելավում են դրանց ռեկրեացիոն հնարավորությունները և մեծացնում մշակութային և զբոսաշրջային գրավչությունը՝ դրանով իսկ նպաստելով դրանց տնտեսական զարգացմանը։ Այսպիսով, ժամանակակից աշխարհում բացօթյա թանգարան կոչվող եզակի մշակութային տարածքները ներկայացնում են թանգարանային հաստատությունների հատուկ ձևաչափ, որն այցելուներին հնարավորություն է տալիս ընկղմվել անցյալ դարաշրջանների պատմության, մշակույթի և ճարտարապետության մեջ՝ գտնվելով բնության գրկում։ Այս տեսակի թանգարանների ուսումնասիրությունը կարևոր է հատկապես մշակութային ժառանգության պահպանման առանձնահատկությունները հասկանալու տեսանկյունից։

Պատմականորեն ձևավորվել է մշակութային ժառանգության պահպանման, մոդելավորման և արդիականացման երկու հիմնական մոտեցում, դրանք են՝ in-situ և ex-situ սկզբունքները, որոնք կարևոր դեր են խաղում արժեքավոր առանձին արտեֆակտների և ամբողջական տարածքների պահպանության գործում։ Մի կողմից, in-situ սկզբունքը ենթադրում է ժառանգության պահպանում իր ծագման միջավայրում, ինչը նպաստում է օբյեկտների մշակութային համատեքստի և պատմական նշանակության կարևորմանը և թույլ է տալիս ավելի լավ հասկանալ այս կամ այն տարածաշրջանի, էթնիկ խմբի պատմությունն ու մշակույթը։

Մյուս կողմից, ex-situ սկզբունքը ենթադրում է ժառանգության օբյեկտների տեղափոխում ավելի ապահով միաջավայր և բաց երկնքի տակ հատուկ թանգարանային հավաքածուների ստեղծում։ Այս մոտեցումը թույլ է տալիս ավելի լավ պաշտպանել արտեֆակտները շրջակա միջավայրի վնասակար ազդեցություններից, ինչպես նաև ավելի հանգամանալից ուսումնասիրել դրանք, ինչը կարող է հանգեցնել նոր գիտական բացահայտումների։

Կարևոր է հասկանալ, որ պահպանման այս երկու մոտեցումները փոխկապակցված են և լավագույն արդյունքների հասնելու համար կարող են օգտագործվել միասին։ Ներկայումս նկատվում է դրանց որոշակի սերտաճում կամ սինթեզ, որն արտահայտվում է մասնավորապես ճարտարապետապարկային համալիրների դեպքում։ Այսպիսով, in-situ և ex-situ սկզբունքների համադրությունը այսօր համարվում է բաց երկնքի տակ

պատմամշակութային ժառանգության պահպանման և ապագա սերունդներին փոխանցելու առավել արդյունավետ մոտեցում:

Ամփոփելով հետազոտությունը՝ կարող ենք ձևակերպել բացօթյա թանգարանների ուսումնասիրման արդիականությունը հիմնավորող մի քանի կարևոր ասպեկտներ:

*Կենդանի փորձ և ներգրավվածություն.* Բացօթյա թանգարանները հնարավորություն են տալիս ոչ միայն դիտել ցուցադրությունները, այլև ընկղմվել պատմական ժամանակաշրջանների մթնոլորտում: Այսպիսի տպավորություններն ապահովում են մշակութային ժառանգության ավելի խորը գնահատում և ըմբռնում, ինչպես նաև բացառիկ զբոսաշրջային փորձառություն:

*Ինտերակտիվ առանձնահատկություններ.* Շատ բացօթյա թանգարաններ ինտեգրում են ինտերակտիվ տարրեր՝ թույլ տալով այցելուներին շփվել ցուցանմուշների հետ: Սա նպաստում է սովորելուն և ներգրավվածությանը՝ թանգարանի այցելությունը դարձնելով ավելի հետաքրքիր և հիշարժան:

*Եզակի արտեֆակտների պահպանում.* Բացօթյա թանգարաններում ցուցադրված բազմաթիվ արտեֆակտներ եզակի են և դժվար վերարտադրվող: Այս արտեֆակտների պաշտպանությունն իրենց բնական միջավայրում դառնում է մշակութային ժառանգության հարատևության համար պայքարի կարևոր խնդիր և հիմնական սկզբունք:

*Տարածաշրջանի պատմության հանրահռչակում.* Բացօթյա թանգարաններն առանցքային դեր են խաղում որոշակի շրջանների պատմության և ավանդույթների պահպանման և տարածման գործում: Սա հատկապես կարևոր է տեղական համայնքների, փոքր էթնիկ խմբերի ինքնության և եզակի մշակութային ժառանգության պահպանման համար:

*Զբոսաշրջություն և տնտեսական զարգացում.* Այս թանգարանները գրավում են այցելուների՝ խթանելով զբոսաշրջության ոլորտի զարգացումը տարածաշրջանում: Տնտեսական ազդեցությունը կարող է զգալի լինել՝ աջակցելով տեղական բիզնեսի զարգացմանը և ստեղծելով նոր աշխատատեղեր:

*Կրթական հնարավորություններ.* Բացօթյա թանգարանները հաճախ իրականացնում են կրթական ծրագրեր, որոնք ընդգրկում են թեմաների լայն շրջանակ՝ պատմություն, մշակույթ, հնագիտություն, բնագիտություն և վերականգնման տեխնոլոգիաներ: Այսպիսի ծրագրերը խթանում են այցելուների կրթաճանաչողական մոտիվացիան և նպաստում գիտելիքների տարածմանը՝ հատկապես երիտասարդների շրջանում:

*Սոցիալական արժեք.* Բացօթյա թանգարանների սոցիալական արժեքը կայանում է նրանում, որ դրանք հասարակության համար հաղորդակցվելու և գիտելիքների փոխանակման տեղ են ապահովում՝ աջակցելով ընդհանուր մշակութային հիշողության ձևավորմանը, ինչն իր հերթին նպաստում է ազգային ինքնության ամրապնդմանը:

*Փոփոխություններին դիմակայում.* Բացօթյա թանգարանները խթանում են ժամանակային փոփոխության նկատմամբ մշակույթի կայունությունը՝ ապահովելով

նյութական արտեֆակտների և կենդանի ավանդույթների պահպանությունը, միևնույն ժամանակ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, ինչը կարևորվում է ժամանակակից հասարակությունների բնապահպանական իրազեկության աճի պայմաններում: Այս թանգարանների արդիականությունը գալիս է ապացուցելու նաև այն մեծ նշանակությունը, որ մարդիկ տալիս են պատմությանը և մարդկության մշակութային բազմազանության պահպանմանը գլոբալացման դարաշրջանում:

***Գրականության ցանկ***


1. Colonial Williamsburg (02.Feb.2024) - https://www.colonialwilliamsburg.org
2. Göreme Open-Air Museum (05.Feb.2024) - https://cappadociavisit.com/goreme-open-air-museum/
3. Laven, Anna. Open-air Museums and Heritage Interpretation: Theoretical Framework, 2018 (06.Feb.2024) - https://www.researchgate.net/publication/359073326_Open-air_Museums_and _Heritage _Interpretation _Theoretical _Framework
4. Lingua Latina. Латинско-русский словарь. 2-е изд., доп. и испр. (редакторы Подосинов А.В., Козлова Г.Г., Глухов А.А.) – М.: Флинта; Наука, 1999.
5. National Parks in China (06.Feb.2024) - https://www.chinadiscovery.com/china-heritage-tour
6. Skansen Park, the world’s oldest open-air museum (08.Feb.2024) - https://skansen.se/en/
7. Веденин Ю.А., Кулешова М.Е. Культурный ландшафт как объект наследия // «Хранители наследия», 23/08/2017 (14, фев., 2024) - https://hraniteli-nasledia.com/articles/khraniteli/yuriy-vedenin-kulturnyy-landshaft-kak-obekt-naslediya/
8. История места: Мачу-Пикчу (14, фев., 2024) - https://travel.mts.ru/media/marshruty/machu-pikchu?utm_referrer=https% 3A%2F%2Fyandex.ru%2F
9. Музей-заповедник «Кижи» (14, фев., 2024) - https://kizhi.karelia.ru
10. Музей «Малые Корелы» (14, фев., 2024) - https://www.korely.ru
11. Помпеи и Геркуланум (10, фев., 2024) - https://latuaitalia.ru/art/vyhodnye-v-pompeyah-i-gerkulanume/
12. Convention for the Protection of the Archaeological Heritage of Europe (1992, Valetta)
13. European Cultural Convention (1954, Paris)
14. ICOMOS Charter on the Protection and Management of Cultural Heritage (1996, Sofia)
15. ICOMOS Charter on the Protection and Management of Archaeological Heritage (1990, Lausanne)
16. UNESCO Recommendation on International Principles Applicable to Archaeological Excavations (1956, New Delhi)
17. UNESCO Recommendation concerning the Preservation of Cultural Property Endangered by Public or Private Works (1968, Paris)
18. UNESCO Convention on the Protection of Underwater Cultural Heritage (2001, Paris)

# INTERNATIONAL EXPERIENCE OF HERITAGE CONSERVATION IN OPEN-AIR MUSEUMS BASED ON THE IN-SITU AND EX-SITU PRINCIPLES

***Armine Matentsyan***
*EUA, Chair of Tourism and Service*
*matentsyana@gmail.com*

***Abstract***

The article presents the activity features of different open-air museums, which have been formed within the 130 years of existence of these types of museums to ensure the protection, reproduction, and modeling of unique historical and cultural landscapes. The historical and cultural landscape is a result of the joint creation of man and nature, which is characterized by a clear territorial organization in which the natural and man-made elements form an inseparable whole, forming a unique natural and cultural complex. Such complexes, as a rule, show the evolution of certain ethnic groups and their settlements, which took place under the influence of various external and internal, favorable and unfavorable, climatic and social factors.

Today, historical and cultural landscapes are the most important heritage objects of different regions of the world, whose preservation and modernization are carried out through open-air museology. The open-air museum itself presents a special format of a museum institution, which gives visitors the opportunity to immerse themselves in the historical atmosphere of past eras while appreciating the result of the harmonious and creative coexistence of nature and man. The study of this type of museum is especially important in the context of cultural component management, for which the international legal principles of in-situ and ex-situ preservation of cultural heritage are applied. These principles have received normative support through the ratification of a number of intergovernmental acts and convention

***Keywords:*** Open-air museum, cultural heritage, principles of in-situ and ex-situ conservation, skansen, national park, architectural landscape complex.

Ներկայացվել է՝ 16.02.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 06.05.2024թ.

# ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԲԱԽՈՒՄՆԱԾԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՐԱ

*https://doi.org /10.59982/18294359-24.15-km-05*

*Մարինա Արշակի Պետրոսյան*
*Հայցորդ*
*ՀԵՀ, Կառավարման ամբիոն*
*armmarmarnar@gmail.com*

*Ամփոփագիր*

Վերջին ժամանակաշրջանում կառավարման տեսական և գործնական մոտեցումներում կարևորվում է կորպորատիվ մշակույթը, որը սոցիալ-տնտեսական կատեգորիա է և հանդիսանում է բուհի գործունեության արդյունավետության, հոգևոր և սոցիալական կարիքների և պահանջմունքների բավարարման առանցքային գործոններից մեկը: Այն ուղղակիորեն կապված է բուհական անձնակազմի համատեղ աշխատանքի անհրաժեշտության և օգտակարության գիտակցման հետ: Կորպորատիվ մշակույթը ցանկացած կառավարման կառուցվածք ունեցող բուհի ներքին միջավայրում տիրող մթնոլորտն է, որի առկայությունը թելադրում է կառավարման, անձնակազմի համար աշխատանքային պայմանների ստեղծման, անձնակազմի վարքագծային և միջանձնային նոր որակների և պահանջների գնահատման բոլորովին նոր մոտեցումներ: Այն վարքագծային մոդելների ամբողջությունն է, որոնց ձեռք բերումը նպաստում է բուհի կողմից արտաքին միջավայրին հարմարվելուն և ներքին ինտեգրացիայի ձևավորմանը:

Հոդվածում դիտարկվում է կորպորատիվ մշակույթի ազդեցությունը բուհական անձնակազմի բախումնածին վարքագծի վրա, որը ցանկացած բուհի անբաժանելի մասն է: Կորպորատիվ մշակույթի այնպիսի տարրեր, ինչպիսիք են ղեկավարների կառավարման մոտեցումները, առաջնորդության ոճը և աշխատողների մեծամասնության արժեքների, նորմերի և կանոնների առկայությունը, ամենամեծ նշանակությունն ունեն բուհական անձնակազմի վարքագծային շեղումների կանխարգելման և լուծման համար: Հոդվածում քննարկվում են կորպորատիվ մշակույթի կառուցվածքվածքային և գործառնական առանձնահատկությունների ազդեցությունն ու կարևորությունը՝ բուհական անձնակազմի բախումնածին վարքագծի կառավարման համատեքստում:

***Հիմնաբառեր.*** Կորպորատիվ մշակույթ, արժեքային համակարգ, վարքագծի նորմեր, վարքագծային կառավարում, լարվածության հաղթահարում, բուհական անձնակազմ, բախումնածին վարքագիծ:

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ներածություն*

Բուհի աշխատանքային գործունեության արդյունքում ծագող բարդություններն ու լարվածությունները, ներքին և արտաքին միջավայրի փոփոխությունները, ժամանակի՝ որպես կարևոր ռեսուրսի ռացիոնալ և ճիշտ կառավարումը, տեղեկատվության և նոր գիտելիքների ստացման ծավալի և արագության աճը մեծացնում են բուհի ներսում անձնակազմի վարքագծային կառավարման վրա ազդող գործիքների և մեթոդների տեսագործնական ուսումնասիրության և կատարելագործման անհրաժեշտությունը:

Բուհական անձնակազմը տարբեր բնավորություններ, հայացքներ ունեցող սուբյեկտների խումբ է, որտեղ կան ղեկավարներ, առաջնորդներ, ենթականեր և անձնակազմի կողմից ընդունվող կամ չընդունվող աշխատակիցներ: Որպեսզի ապահովվի աշխատանքային պայմանների և աշխատանքի որակի բարելավմանը նպաստող բարենպաստ աշխատանքային միջավայր, անհրաժեշտ է համակարգել, հնարավորինս ճիշտ և գրագետ կազմակերպել բուհի անձնակազմի վարքագծային կառավարումը, սահմանել կառավարման ոճ, աշխատանքային փոխհարաբերությունների ընդունելի ձև:

Բուհում անձնակազմի վարքագծային կառավարման արդյունավետ և հիմնարար մեթոդներից մեկը կորպորատիվ մշակույթն է: Այն պետք է կատարելագործել և ներդնել անձնակազմի կառավարման գործընթացում, որը կարող է ձևավորվել և՛ երկար քննարկումների, և՛ մտածված գործողությունների արդյունքում, և՛ տարիների ընթացքում աշխատակիցների կողմից ներմուծված սովորույթների, ավանդույթների, մեծամասնության կողմից ընդունելի և ընկերության շահերի և նպատակների հետ համընկնող, պարբերաբար կրկնվող երևույթների հիման վրա [Վարդանյան, 101]:

**Հետազոտության նպատակն է** բուհական անձնակազմի բախումնածին վարքագծային կառավարման գործիքակազմում կորպորատիվ մշակույթի առանձնահատկությունների վերհանումը:

**Հետազոտության օբյեկտն է**՝ բուհերում կորպորատիվ մշակույթի՝ որպես անձնակազմի վարքագծային կառավարման գործիքի ուսումնասիրությունը, **առարկան**՝ կորպորատիվ մշակույթը և անձնակազմի վարքագծային կառավարումը:

Որպես **նորույթ**՝ դիտարկվում է կորպորատիվ մշակույթի միջոցով կառավարելի և կառուցողական դարձնել բուհական անձնակազմի վարքագծային դրսևորումները և լարված իրավիճակները, որը կնպաստի նաև բուհական համակարգի արդյունավետ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը:

Խնդրի **արդիականությունը** պայմանավորված է բուհական անձնակազմի վարքագծային կառավարման գործիքակազմում կորպորատիվ մշակույթի դերի, տեսակի ազդեցությամբ և առանձնահատկությունների կարևորությամբ՝ անձնակազմի վարքագիծը բացահայտելու, կանխելու, անխուսափելի լարված իրավիճակները կառուցողական դարձնելու անհրաժեշտությամբ:

**Հետազոտության մեթոդներ** են ընտրվել ինդուկտիվ մտահանգման՝ մասնավորից ընդհանուրի դիտարկումով, էմպիրիկ և տեսական հետազոտության մեթոդները,

համապատասխանաբար՝ հարցումը, դիտարկումը և վերլուծությունը՝ բացահայտելու համար կորպորատիվ մշակույթի և անձնակազմի բախումնածին վարքագծի կառավարման պատճառահետևանքային կապը։

Կորպորատիվ մշակույթը նյութական, հոգևոր և սոցիալական կանոնների ամբողջություն է, արժեքների համակարգ, չգրված կանոններ և համաձայնություններ, վարքագծի նորմեր և հարաբերություններ, որոնք ձևավորվում են կազմակերպությունում աշխատանքի ընթացքում։ Այն գործում է որպես հզոր ռազմավարական գործիք, որն ակտիվացնում է հաստատության աշխատակիցների նախաձեռնողականությունն ու արդյունավետ փոխգործակցությունը [ Корецкая, 47]։

Բուհի արդյունավետ գործունեությունը միշտ ուղեկցվում է կորպորատիվ մշակույթի զարգացման բարձր մակարդակով։ Խնդրահարույց, լարված իրավիճակները, որոնք առաջանում են զարգացած կորպորատիվ մշակույթ ունեցող բուհերում, լուծվում են ավելի կարճ ժամանակում և ավելի քիչ կորուստներով [Шагидаева, 8]։ Ա. Ռուշևան նշում է, որ կորպորատիվ մշակույթը կազմակերպության բոլոր աշխատակիցների համար ընդհանուր արժեքների, համոզմունքների, հարաբերությունների համակարգ է, որը կանխորոշում է վարքի նորմերը [Рушева, 368]։ Է. Շեյնը համարում է, որ կառավարման մշակույթի ձևերը կոչված են երկու հիմնական մարտահրավերների բավարարմանը, որոնց բախվում է ցանկացած կազմակերպություն։ Այն է, արտաքին միջավայրի ազրեսիվությունը և ներքին տարրալուծումը։ Որպեսզի կազմակերպությունը գործի միասնականության սկզբունքով, անհրաժեշտ է իրականացնել երկու հիմնական գործառույթ՝ ադապտացվել միջավայրում և ներքին ինտեգրում։ Ինտեգրումը դիտարկվում է որպես կազմակերպության անձնակազմի արդյունավետ գործնական հարաբերությունների զիտակցում, այդ թվում խնդիրների լուծման մեջ աշխատակիցների մասնակցության չափի մեծացում, արդյունավետ լուծման ուղիների բացահայտում [Спивак, 84]։ Ցանկացած հեղինակի տեսակետի վերլուծություն հանգեցնում է կորպորատիվ մշակույթի կարևորությանը և որոշիչ դերակատարությանը։

Անձնակազմի կառավարման համատեքստում կորպորատիվ մշակույթը համարվում է նաև կազմակերպչական և կառավարչական փոփոխությունների և անձնակազմի մոտիվացիոն մոբիլիզացման խորհրդանշական մեխանիզմ՝ բուհի կողմից հաստատված արժեքները կատարելու համար։

Կորպորատիվ մշակույթի կառուցվածքն ունի հետևյալ տեսքը. (Տե՛ս, Գծապատկեր 1) [Персикова՝ 211]։

**Գծապատկեր 1**

**Կորպորատիվ մշակույթ**

**Հիմնական կանոնները,** որոնց հետևում են բուհի աշխատակիցներն իրենց վարքագծում և գործողություններում:

**Արժեքներ,** որոնք կողմնորոշում են, թե որ վարքագիծը կարելի է համարել թույլատրելի կամ ոչ թույլատրելի:

**«Սիմվոլիզմ»,** որի միջոցով բուհի աշխատակիցների կողմից արժեքային կողմնորոշումներ են ձեռք բերվում:

*Կորպորատիվ մշակույթի կառուցվածքը*

Հարկ է նշել, որ անհատական անձնային արժեքները ազդում են կորպորատիվ ռազմավարության վրա, իսկ առաջնորդների արժեքները ազդում են կազմակերպչական վարքագծի բոլոր ձևերի վրա, ներառյալ մոտիվացիոն համակարգի ընտրությունը, ղեկավար-ենթակա հարաբերությունների, մասնագիտական և գործարար հաղորդակցությունների, անհատական և խմբային վարքագծի և լարվածության մակարդակների: Արժեքների հետ մեկտեղ կորպորատիվ մշակույթը ներառում է ներքին կազմակերպչական նորմեր, չափանիշներ և սոցիալական դերեր: Նորմերը վարքագծի ընդհանրացված կանոններ են, չափանիշներ, որոնք կարգավորում են բուհի աշխատակիցների վարքագիծը և հանգեցնում են բուհի նպատակների իրականացմանը:

Կորպորատիվ մշակույթի մեջ ներառված են սովորույթները, ավանդույթները, ծեսերը: Վերջինիս մշակույթի կառուցվածքում որոշվում են տարբեր խնդիրների լուծման ուղիներն ու մեթոդները, որոնք ազդում են համագործակցության հասնելու, փոխզիջումների վրա և նվազեցնում են աշխատուժի լարվածության մակարդակը [Корпоративная культура и лидерство, 120]:

Հստակ է այն, որ կորպորատիվ մշակույթը ցանկացած կազմակերպության գոյության հիմնարար տարրն ու պայմանն է: Արժեքների համակարգը, նորմերը և վարքագծի չափանիշները, բուհում ընդունված մշակութային օրինաչափությունները էապես ազդում են բուհի աշխատակիցների գործունեության տարբեր ասպեկտների վրա, և հետևաբար, անձնակազմի փոխհարաբերությունների և փոխազդեցությունների վրա ևս:

Ընդգծելու համար, թե ինչպիսի ազդեցություն ունի բուհի ներսում կորպորատիվ մշակույթը անձնակազմի կառավարման վրա, քննարկենք նրա գործառույթներից մի քանիսը՝ [Удачина, 57-63]:

1. ***պաշտպանիչ***. այս գործառույթը ներառում է արտաքին միջավայրի վնասակար միտումների, ոչ պատշաճ արժեքների ներթափանցման կանխումը բուի, որոնք կարող են վնասել բուհական գործունեության արդյունավետությանը և բացասաբար ազդել գործընթացի որակի վրա:
2. ***Ինտեգրում.*** ապահովում է թիմի անդամների վարքագծի հետևողականությունն ու կանխատեսելիությունը, որոշում աշխատողների վարքագծի պաշտոնական և ոչ պաշտոնական կանոնները, հաղորդակցության բնույթը:
3. ***Հարմարվողականություն.*** այս գործառույթը դրսևորվում է նոր աշխատողների շրջանում բուհում սահմանված կանոններին և նորմերին հավատարմության ձևավորմամբ: Նախկին աշխատավայրում ստեղծված, բայց նոր կազմակերպության համար անհամապատասխան արժեքները ճնշվում են:
4. ***Մոտիվացնող.*** այս գործառույթը նախատեսված է աշխատողների մոտ աշխատանքային մոտիվացիայի մակարդակը բարձրացնելու համար, ինչը դրական ազդեցություն կունենա աշխատանքի արտադրողականության վրա:
5. ***Հաղորդակցություն*** գործառույթը տեղեկատվության կարիքը բավարարելն է: Ձևավորվում է հաղորդակցության դաշտ, պարզեցվում են կապի գործընթացները [Яныкина, 500]:
6. ***Նորարարական*** գործառույթը մշտապես նոր բան փնտրելն է, որն ապահովում է բուհի մրցակցային առավելությունները, նրա շարունակական զարգացումը:
7. ***Կազմակերպության իմիջի ձևավորում***. կարող ենք ասել, որ կորպորատիվ մշակույթը ամենակարևոր դերն է խաղում բոլոր շահագրգիռ կողմերի, ծառայությունների սպառողների շրջանում հաստատության մասին ճիշտ տպավորություն ստեղծելու գործում [Дзецина, 123]:

Կայուն կորպորատիվ մշակույթի տեսական մոդելը պարունակում է հետևյալ դրույթները.

- ամբողջ անձնակազմի և առանձին աշխատողների գործունեության մեջ փոխազդեցության առկայություն,
- բուհական անձնակազմի միջև հարաբերությունների որոշակի մակարդակ (այսպես կոչված «թիմային ոգի»),
- հիմնարար կորպորատիվ արժեքները աջակցվում և կիսվում են բուհի գրեթե բոլոր աշխատակիցների կողմից,
- բուհական անձնակազմի համախմբվածություն, թիմում բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ,
- անձնակազմի նպատակների և բուհի նպատակների համընկնում,
- վարքագծի մշակույթ լարված իրավիճակներում,
- նորարարությունների ներդրում [Беликова, 81]:

Կորպորատիվ մշակույթը ցանկացած բուհի ներքին միջավայրի կարևորագույն բաղադրիչն է, որի հիմնական գործառույթը տվյալ հաստատությանը ճկունություն հաղորդելն է:

Բուհերում բախումների և անձնակազմի վարքագծային կառավարման համատեքստում կորպորատիվ մշակույթի տեսակը, առանձնահատկություններն ու ազդեցությունը պարզելու նպատակով, իրականացվել է հարցում ՀՀ Շիրակի մարզի Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ ԳՄ), Հայաստանի Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղերում (ՀԵՀ ԳՄ) և Շիրակի պետական համալսարանում (ՇՊՀ)[6]:

Հարցմանը մասնակցել են 61 աշխատակից, այդ թվում՝ վարչական աշխատողներ (29.5%), պրոֆեսորադասախոսական անձնակազմ (54,1%) և 2-ը միասին (16.4%) (Տե՛ս, Գծապատկեր 2) : Հարցվողների տարիքը՝ 20-58 տարեկան:

***Գծապատկեր 2***




***Հարցմանը մասնակցող աշխատակիցներ***

Հարցման մասնակիցների 52,5%-ի կարծիքով, կորպորատիվ մշակույթը նպաստում է բախումնածին գործոնների չեզոքացմանը, իսկ 47.5%-ի կարծիքով՝ կարգուկանոնի պահպանմանը (Տե՛ս, Գծապատկեր 3): Ենթադրելի է, որ բուհի ղեկավարների կողմից մշակված կարգուկանոնի պահպանման սկզբունքը կորպորատիվ մշակույթի կարևոր բաղադրիչ է, որին հետևողական լինելը հանգեցնում է լարվածության մթնոլորտի թուլացման և, հետևաբար, բախումնածին գործոնների չեզոքացման: Երկու դեպքում էլ բախումների հավանականությունը քչանում է և աշխատակիցների վարքը դառնում է կառավարելի:

[6] Հարցում հեղինակի կողմից:

**Գծապատկեր 3**




*Կորպորատիվ մշակույթի դերը բուհում*

Բուհական անձնակազմի մեծամասնությունը (62.3%) կորպորատիվ մշակույթը համարում է և՛ որպես բախումների կառավարման գործիք, և՛ որպես բախումների կառավարման մեթոդ (Տե՛ս, Գծապատկեր 4)։ Ուսումնասիրության մեջ շեշտադրվում է բախումների կառավարման կարևորությունը կորպորատիվ մշակույթի դիտակետից, քանի որ ցանկացած բախում (հատկապես ապակառուցողական բախումները) դժվարացնում է անձնակազմի վարքագծի կառավարումը, իսկ կորպորատիվ մշակույթը, փաստորեն, կարող է ծառայել՝ որպես անձնակազմի վարքագծի կառավարման գործիք կամ մեթոդ։

**Գծապատկեր 4**




*Կորպորատիվ մշակույթը՝ որպես լարվածության կամ բախումների կառավարման գործիք և որպես մեթոդ*

Ըստ հարցման արդյունքների՝ 70,2%-ի կարծիքով կորպորատիվ մշակույթը անձնակազմի վարքագծային կառավարման ներքին կանոնակարգ է (27,8%-ի կարծիքով՝

միանշանակ)։ Այս տեսակետին համաձայն չեն բուհական անձնակազմի ընդամենը 2%-ը (Տե՛ս, Գծապատկեր 5)։ Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ բուհական անձնակազմի կողմից կորպորատիվ մշակույթի կարևորությունը և նշանակությունը անձնակազմի վարքագծային կառավարման դիտակետից ակնառու է։

***Գծապատկեր 5***




### *Կորպորատիվ մշակույթը՝ որպես անձնակազմի վարքագծային կառավարման ներքին կանոնակարգ*

Բուհերի անձնակազմի 31,8%-ը կարևորում է նախաձեռնող կորպորատիվ մշակույթը, ինչը ենթադրում է, որ անձնակազմը կարևորում է աշխատակիցների նախաձեռնողականությունը (Տե՛ս, Գծապատկեր 6)։ Որպես աշխատանքային մոտիվացիայի խթան՝ կիրառվում են այնպիսի միջոցներ, որոնք նպաստում են բուհի աշխատակիցների ներուժի բացահայտմանը և ինքնիրացմանը, մասնավորապես՝ վերապատրաստումներ, գիտաժողովների մասնակցություն, հեռանկարային ծրագրերի մշակում և ներկայացում։ Հարցվողների 68,2%-ը նախընտրում է աշխատակիցների միասնականությունը, այսինքն՝ թիմային կորպորատիվ մշակույթը, որի հիմնական նպատակն է ապահովել աշխատակիցների միասնականությունը, թիմի ոգին և թիմային մոտեցումը։

*Գծապատկեր 6*




*Նախաձեռնողականությունը և միասնականությունը կազմակերպական մշակույթում*

Այսպիսով, ըստ հարցման արդյունքների, կարելի է ասել, որ նշված բուհերում կորպորատիվ մշակույթը կարևորվում է անհատների և թիմային աշխատանքների վարքագծային կառավարման տեսանկյունից: Կորպորատիվ մշակույթի թիմային տեսակը նպաստում է անձնակազմի պատասխանատվության, միասնականության և կազմակերպվածության զարգացմանը, այն դեպքում, երբ նախաձեռնողական տեսակն էլ նպաստում է տեղեկացվածության և սերտ միջանձնային փոխհարաբերությունների ձևավորմանը: Կարևորվում և շեշտադրվում է նախաձեռնողական և միասնական կամ թիմային մշակույթի ազդեցության շրջանակը:

### *Եզրակացություն*

Այսպիսով, կորպորատիվ մշակույթը անձնակազմի յուրաքանչյուրի կողմից տեսակետների, արժեքների, ակնկալիքների, ավանդույթների, վարքի նորմերի ամբողջական համադրությունն է, որը կապված է տվյալ բուհի առաքելության միասնական ընկալման և գիտակցման հետ: Այն նպաստում է անձնակազմի ընդհանուր վարքագծի ձևավորմանն ու պահպանմանը, նրանց ներուժի բացահայտմանն ու իրագործմանը, ներառում է բուհի զարգացման տեսլականը, կորպորատիվ ոճը, վարվելակերպի կանոնները, հաղորդակցման ընդունելի եղանակներ և այլ բաղադրիչներ: Կարևոր է ընդգծել կորպորատիվ մշակույթի անձնակազմի ներքին բովանդակային կողմը, որն էլ հենց ձևավորում է հավաքական «մենք»-ի կերպարը և հնարավորություն տալիս գիտակցել տվյալ բուհի առաքելությունը և համախմբել աշխատակիցներին արժեքային-իմաստային միևնույն մակարդակում:

Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվեց կորպորատիվ մշակույթի նախաձեռնողական և թիմային առանձնահատկությունների (աշխատակիցների միասնականության) կառուցվածքային և գործառնական կարևորությունը, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ պարունակում է անձնակազմի վարքագծային կառավարման վրա

ներազդելու յուրահատուկ տարրեր: Աշխատակիցների ներուժի բացահայտումը, ինքնիրացման հնարավորությունը, թիմային ոգին և մոտեցումը մոտիվացիայի աղբյուր են: Առաջարկվում է դիտարկել կորպորատիվ մշակույթի առանձնահատկությունները՝ որպես մեկ ազդեցատ և բուհերում ապահովել դրանց կիրառումը: Նման կորպորատիվ մշակույթը կդառնա աշխատակցի անհատական վարքային ռազմավարություն, վարքի ներազդման մեխանիզմ և կարգավորիչ:

Խելամիտ է կորպորատիվ մշակույթի դերն անձնակազմի բախումնածին վարքագծի կառավարման համատեքստում ընդունել՝ որպես ռազմավարական գործիք, որն ուղղորդում է բուհական անձնակազմի յուրաքանչյուր առանձին սուբյեկտի դեպի ընդհանուր նպատակն ու գաղափարը:

*Գրականության ցանկ*


1. Ջ. Վարդանյան «Մարդկային ռեսուրսների կառավարումը՝ որպես հաճախորդների սպասարկում», Էդիթ Պրինտ, 2022, 227 էջ :
2. Беликова, И.П. Организационная культура. – М.: Агрус, 2013, 110 с.
3. Дзецина Е.А. Влияние корпоративной культуры на управление конфликтами в организации // Направления модернизации современного инновационного общества: экономика, социология, философия, политика, право материалы, 2015, 864 с.
4. Корецкая Е.А. Роль организационной культуры в развитии образовательной организации // Актуальные проблемы современной психологии и педагогики. Сборник научных статей. Нефтекамск, 2017, 158 с.
5. Корпоративная культура и лидерство [Текст]: Учебное пособие – М.: Альпина Бизнес Букс, 2008, 160 с.
6. Персикова, Т.Н. Корпоративная культура /– М.: Логос, 2017, 288 с.
7. Шагидаева А.Б. Социальные аспекты активации лидерского потенциала в организациях // Социальная педагогика в России. Научно-методический журнал. – 2018, № 2, 270 с.
8. Яныкина А.П., Какадий И.И. Особенности современных технологий управления образованием и применение их в практической деятельности // Экономика и предпринимательство, 2017, № 5-1 (821), 560 с.
9. Спивак В. А., Организационная культура. СПб: Нева, 2004, 224 с.
10. Рушева А. В., Корпоративная культура как источник эффективности организации. // Вестник Нижегородского университета им. Н. И. Лобачевского, 2006, стр. 367-374.
11. Удачина Е.М. Корпоративная культура современной образовательной организации // Социально-экономические исследования, гуманитарные науки и юриспруденция: теория и практика, 2016, № 8, с 57-63.

# THE EFFECT OF CORPORATE CULTURE ON THE MANAGEMENT OF THE CONFLICT BEHAVIOR OF THE UNIVERSITY STAFF

***Marina Petrosyan***
*Researcher*
*EUA, Department of Management,*
*armmarmarnar@gmail.com*

***Abstract***

In the recent period, in the theoretical and practical approaches to management, corporate culture has been emphasized, which is a socio-economic category and is one of the key factors in the efficiency of university activity and the satisfaction of spiritual and social needs and demands. It is directly related to the realization of the necessity and usefulness of the joint work of the university staff. Corporate or organizational culture is the atmosphere prevailing in the internal environment of a university with any management structure, the presence of which dictates completely new approaches to management, the creation of working conditions for staff, and the and the assessment of new behavioral and interpersonal qualities and requirements of staff. It is a set of behavioral models, the acquisition of which contributes to the university's adaptation to the external environment and the formation of internal integration.

The article examines the impact of corporate culture on the confrontational behavior of university staff, which is an integral part of any university. Such elements of corporate culture as managers' management approaches, leadership style, and the presence of values, norms, and rules of the majority of employees are of the utmost importance in preventing and solving behavioral deviations among university staff. The article discusses the impact and importance of structural and operational features of corporate or organizational culture in the context of managing the conflictual behavior of university staff.

***Keywords:*** Organizational culture, value system, norms of behavior, behavioral management, overcoming tension, university staff, confrontational behavior.

Ներկայացվել է՝ 18.03.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 06.05.2024թ.

# ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՒ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐՈՒԺԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

https://doi.org /10.59982/18294359-24.15-eg-06

*Գևորգ Գագիկի Օրբելյան*
*Հայցորդ*
*ՀԵՀ, Կառավարման ամբիոն*
*orbelyangevorg@gmail.com*

***Ամփոփագիր***

*Հոդվածում դիտարկվում է Երևանի զբոսաշրջային ռեսուրսների ու ենթակառուցվածքների ներուժի զարգացման հակիրճ ակնարկը: Քանի որ, քաղաքային զբոսաշրջության զարգացման մեջ կարևոր նշանակություն ունեն ռեսուրսները և ենթակառուցվածքները, որոնք էլ համարվում են կայուն զբոսաշրջության նյութական հիմքը և զբոսաշրջության տնտեսական աճի ներուժը, ուստի փորձ է արվել համընդհանուր կերպով ներկայացնել և՛ ռեսուրսների, և՛ ենթակառուցվածքների դասակարգման կատեգորիաները և ընդհանուր ընկալումները: Հոդվածում տեղ են գտել բնական ռեսուրսներից մինչև սոցիալական ռեսուրսներ, իսկ ենթակառուցվածքներից՝ տրանսպորտի, կացարանների՝ ընդհուպ մինչև անվտանգության ու շրջակա միջավայրի կայունության բնորոշումները: Ինչպես հայտնի է, զբոսաշրջության ոլորտի ռացիոնալ զարգացումն ուղղակիորեն կապված է զբոսաշրջային ներուժի հետ, այնուամենայնիվ, բոլոր այն ռեսուրսները և ենթակառուցվածքները, որոնք փորձել ենք ներկայացնել Երևան քաղաքի համաժամանակյա նկարագրությունների միջոցով, կարող են նպաստել քաղաքի առավել արդյունավետ տեսլականի կառուցմանը, ինչպես նաև կարող են բավարարել զբոսաշրջիկների լայն հոսքի տարբեր կարիքները և ճիշտ օգտագործելու դեպքում նպաստել զբոսաշրջության զարգացմանը: Այս ուսումնասիրությունը միտված է օգնելու հայեցակարգեր և ռազմավարություններ ստեղծելու հարցում, որոնք կարող են քաղաքի ենթակառուցվածքներում անհրաժեշտ ներդրումներ կատարելու արդյունքում, խթանել պատասխանատու զբոսաշրջային գործիքակազմ, կատարել համընթաց քայլեր՝ զարկ տալու տեղական ենթակառուցվածքների զարգացմանը:*

***Հիմնաբառեր.*** *Երևան, քաղաքային զբոսաշրջություն, ռեսուրսներ, ենթակառուցվածքներ, ներուժ, զարգացում:*

## ***Ներածություն***

Ներկա ուսումնասիրության նպատակն է համընդհանուր ներկայացնել քաղաքային ռեսուրսների և ենթակառուցվածքների կարևորությունը տնտեսական զարգացման,

կյանքի որակի բարելավմանը միտված ընդհանուր բնորոշումները՝ բացահայտելով ՀՀ մայրաքաղաք Երևանը զբոսաշրջության տեսանկյունից: Որպես ուսումնասիրության օբյեկտ ներկայացվել և վերլուծվել են քաղաքային զբոսաշրջության այն բոլոր ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, որոնք կարող են արդյունավետ քաղաքային պլանավորման արդյունքում ստեղծել արդյունավետություն, կայունության, մատչելիություն և նորարարություն, որոնք էլ վճռորոշ նշանակություն կարող են ունենալ առավել կենսունակ, զբոսաշրջային առումով գրավիչ և ապրելու համար հարմարավետ քաղաք ստեղծելու համար: Խնդրի առարկա է հանդիսացել ուսումնասիրել Երևանի զբոսաշրջային այն ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, որոնք ճիշտ օգտագործելու և զարգացնելու հնարավորությունների դեպքում, կարող են հիմք հանդիսանալ բազմաթիվ նախագծերի, Երևան քաղաքի զբոսաշրջային ոլորտը խթանելու և հարմարավետ ու հյուրընկալ միջավայր ձևավորելու համար: Աշխատանքի գիտական նորույթի էությունը կայանում նրանում, որ առաջին անգամ է փորձ արվում մանրակրկիտ ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել Երևան քաղաքի զբոսաշրջային ռեսուրսների և ենթակառուցվածքների համընդհանուր պատկերը, որը կարևոր է ոլորտի արդյունաբերությունը հասկանալու ինչպես նաև նախանշելու քաղաքային ռեսուրսների և ենթակառուցվածքների մեջ ներդրումներ կատարելու և կառավարելու ցանկալի արդյունքներն ու նպատակները:

**Ռեսուրսների և ենթակառուցվածքների բնորոշումները**

Տնտեսագիտական գրականության մեջ ռեսուրսներ և ենթակառուցվածքներ հասկացության տարբեր սահմանումներ կան: Զբոսաշրջության համատեքստում **ռեսուրսների** (Զբոսաշրջային ռեսուրսներ տերմինը նկարագրում է բնական և տեխնածին գրավչությունները, ենթակառուցվածքները, ծառայությունները և այն պայմանները, որոնք գրավում են զբոսաշրջիկներին դեպի տարածք և կարող են նպաստել զբոսաշրջության վայրի ձևավորմանը) հասկացությունը վերաբերում է այն ակտիվներին, գրավչություններին և բաղադրիչներին, որոնք նպաստում են զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ու գրավչությանը, իսկ զբոսաշրջային **ենթակառուցվածք** (Սովետական Հանրագիտարանը պարունակում է մանրամասն հոդված, որում «ենթակառուցվածք» տերմինի (լատիներեն infra - ստորև, տակ և structura - կառուցվածք, տեղակայում) հայտնվելը տնտեսագիտության մեջ սկիզբ է առել 1940-ականների վերջին] տերմինը սահմանվում է որպես կառույցների, ցանցերի և ձեռնարկությունների մի ամբողջական համալիր, որը միտված է սպասարկելու զբոսաշրջիկներին և ապահովելու զբոսաշրջային ռեկրեացիոն հատվածի գործունեություն: Այն ներառում է արդյունաբերական և սոցիալական, ներառյալ հանգստի ենթակառուցվածքները: Այս համատեքստում ենթակառուցվածքը հասկացվում է որպես կառույցների, ինժեներական և կապի ցանցերի համալիր (ներառյալ հեռահաղորդակցությունը, ճանապարհները երկաթուղիներ, կայարաններ, տերմինալներ, օդային, գետային և ծովային երթևեկության կարգավորման համակարգեր) զբոսաշրջության ոլորտին առնչվող ձեռնարկություններ,

որոնք ապահովում են զբոսաշրջիկների բնականոն մուտքը դեպի զբոսաշրջային ուղղություն կամ դեստինացիա և դրանցում առկա ռեսուրսների պատշաճ օգտագործումը զբոսաշրջային նպատակներով՝ հնարավորություն է ընձեռում ապահովել զբոսաշրջության ոլորտի կենսական գործունեությունը:

Զբոսաշրջային ռեսուրսները համարվում են կայուն զբոսաշրջության նյութական հիմքը և զբոսաշրջության տնտեսական աճի ներուժը: Որպես զբոսաշրջային ռեսուրսների հետազոտման աշխատանքային չափանիշ և տեխնիկական ուղեցույց՝ զբոսաշրջային ռեսուրսների դասակարգման համակարգը աշխատանքի շատ կարևոր նախադրյալ է: Զբոսաշրջային ռեսուրսները կարելի է դասակարգել տարբեր կատեգորիաների (Տե՛ս, Նկար 1): Հարկ ենք համարում առանձնացնել զբոսաշրջային ռեսուրսների մի քանի ընդհանուր ընկալումներ.

*Նկար 1*




*Զբոսաշրջային ռեսուրսներ*

**Բնական ռեսուրսներ**. զբոսաշրջության մեջ բնական ռեսուրսները վերաբերում են եզակի և բնորոշ բնական առանձնահատկություններին և լանդշաֆտներին, որոնք կարող են գրավիչ լինել այցելուների՝ զբոսաշրջիկների համար: Սա ներառում է աշխարհագրական առանձնահատկություններ, ինչպիսիք են լեռները, լողափերը, գետերը, անտառները, վայրի բնությունը և ազգային պարկերը: Բնական ռեսուրսները հաճախ հիմնական գրավչություն են զբոսաշրջիկների համար, ովքեր փնտրում են բացօթյա հանգստի գործունեություն, էկոտուրիզմի փորձառություններ և բնության վրա հիմնված զբոսաշրջություն:

**Մշակութային ռեսուրսներ**. Մշակութային ռեսուրսները ներառում են նպատակակետի մշակութային ժառանգության նյութական և ոչ նյութական կողմերը: Սա ներառում է պատմական վայրեր, հնագիտական վայրեր, հուշարձաններ, տեսարժան

վայրեր, թանգարաններ, արվեստի և արհեստի առանձնահատկություններ, ավանդույթներ, բանահյուսություն, երաժշտություն, խոհանոց և տեղական սովորույթներ: Մշակութային ռեսուրսները նշանակալի դեր են խաղում մշակութային ժառանգության զբոսաշրջությամբ հետաքրքրվող զբոսաշրջիկներին ներգրավելու և տեղական ապրելակերպի ու փորձառական զբոսաշրջություն մասնակցության և հանրահռչակման գործում:

**Կառուցված ռեսուրսներ.** Կառուցված ռեսուրսները վերաբերում են տեխնածին կառույցներին և ենթակառուցվածքներին, որոնք մշակվել են զբոսաշրջության գործունեությանն աջակցելու համար: Սա ներառում է կացարաններ, ինչպիսիք են հյուրանոցները, հանգստավայրերը, ռեկրեացիոն վայրերը, հյուրատները և հանգստի տները, ինչպես նաև տրանսպորտային ենթակառուցվածքները, ինչպիսիք են օդանավակայանները, ծովային նավահանգիստները, ճանապարհները և երկաթուղիները: Այլ կառուցված ռեսուրսները կարող են ներառել ռեստորանները, զվարճանքի վայրերը, առևտրի կենտրոնները և տուրիստական տեղեկատվական կենտրոնները:

**Մարդկային ռեսուրսներ.** զբոսաշրջության մեջ մարդկային ռեսուրսները վերաբերում են այն մարդկանց, ովքեր նպաստում են զբոսաշրջության ոլորտին, ներառյալ տեղի բնակիչները, զբոսաշրջության մասնագետները և աշխատուժը: Սա ներառում է հյուրընկալության ոլորտի աշխատակիցներին, զբոսավարներին (էքսկուրսավարներին), տուրիստական գործակալներին, միջոցառումների կազմակերպիչներին և այլ ծառայություններ մատուցողներին: Մարդկային ռեսուրսները վճռորոշ դեր են խաղում զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ և փորձառություններ մատուցելու գործում:

**Ժամանցային ռեսուրսներ**. կամ ինչպես ընդունված է ասել ռեկրեացիոն ռեսուրսները վերաբերում են հանգստի և ժամանցի նպատակներով մշակված օբյեկտներին և գործունեությանը: Սա ներառում է թեմատիկ զբոսայգիներ, զվարճանքի պարկեր, ջրային պարկեր ու ատրակցիոններ, սպորտային օբյեկտներ, գոլֆի դաշտեր, արկածային զբոսաշրջության գործողություններ և հանգստի հարմարություններ, ինչպիսիք են՝ զբոսանքի քայլարշավային արահետները, հեծանվային ուղիները և ժամանցային տարածքները: Հանգստի ռեսուրսները հատկապես կարևոր են զվարճանքի, հանգստի և բացօթյա զբաղմունքներ փնտրող զբոսաշրջիկներին գրավելու համար:

**Սոցիալական ռեսուրսներ.** սոցիալական ռեսուրսները ներառում են սոցիալական և համայնքային հատկանիշները, որոնք նպաստում են զբոսաշրջության փորձին: Սա ներառում է տեղի բնակչության հյուրընկալությունն ու ընկերասիրությունը, համայնքային միջոցառումներն ու փառատոնները, էքսպոներն ու ցուցահանդեսները, մշակութային փոխանակման ծրագրերն ու հնարավորությունները և ընդհանուր սոցիալական մթնոլորտն ու միջավայրը:

Կարևոր է նշել, որ զբոսաշրջային ռեսուրսների դասակարգումը կարող է տարբեր լինել՝ կախված կոնկրետ ուղղությունից և դրա բնութագրերից: Բացի այդ, ուղղությունները հաճախ ունենում են տարբեր տեսակի ռեսուրսների համակցություն, որոնք կարող են բարձրացնել զբոսաշրջության վայրի ընդհանուր գրավչությունն ու մրցունակությունը:

**Զբոսաշրջության ենթակառուցվածքը** վերաբերում է ֆիզիկական, սոցիալական և կազմակերպչական բաղադրիչներին, որոնք աջակցում և հեշտացնում են զբոսաշրջային գործունեությունը տվյալ վայրում: Այն ներառում է հիմնական հարմարություններ, ծառայություններ և կառույցներ, որոնք բավարարում են զբոսաշրջիկների կարիքներն ու պահանջմունքները: Զբոսաշրջության ենթակառուցվածքը կարող է ներառել տարրերի լայն շրջանակ, ինչպիսիք են՝ տրանսպորտային ցանցերը, կացարանները, տեսարժան վայրերը, հարմարությունները, տեղեկատվական կենտրոնները և կապի համակարգերը [Mamirkulova, Gulnara et al.]: Հարկ ենք համարում առանձնանցնել նաև զբոսաշրջային ենթակառուցվածքների (Տե՛ս, Նկար 2) ընդհանուր ընկալումներմի և մի քանի հիմնական բաղադրիչներ.

**Տրանսպորտ.** Այն ներառում է օդանավակայաններ, ծովային նավահանգիստներ, երկաթուղիներ, ճանապարհներ, հասարակական տրանսպորտի համակարգեր և տրանսպորտի այլ տեսակներ, որոնք զբոսաշրջիկներին հնարավորություն են տալիս հեշտությամբ հասնել և տեղաշարժվել իրենց շուրջը:

*Նկար 2*




*Զբոսաշրջային ենթակառուցվածքներ*

**Կացարան**. Վերջինս վերաբերում է զբոսաշրջիկների համար մատչելի կացարանների տարբեր տեսակներին, ինչպիսիք են՝ հյուրանոցները, հյուրատները, (ամբողջությամբ դրանք են՝ հյուրանոց, մոթել, առողջարան, հոսթել, մասնագիտացված ճամբար կամ տուն, հանգստյան տուն (պանսիոն), ճամբարային բնակատեղի (քեմփինգ,

գլեմփինգ), զբոսաշրջային տուն (Բի ընդ Բի՝ B&B), հյուրատուն): Կացարանների ենթակառուցվածքը բավարարում է տարբեր տեսակի ճանապարհորդների կարիքները և ապահովում նրանց մատչելիությունն ու հարմարավետությունը:

**Գրավչություններ և տեսարժան վայրեր**. դրանք զբոսաշրջային տեսարժան վայրերն են, բնական լանդշաֆտները, մշակութային, հնագիտական, ճարտարապետական և պատմական վայրերը, թեմատիկ այգիները, թանգարանները, ժամանցի վայրերը և հանգստի վայրերը, որոնք այցելուներին հրավիրում են դեպի վայր և եզակի փորձառություններ են տալիս նրանց:

**Հասանելություն (Հարմարություններ և ծառայություններ)**. Սա ներառում է ռեստորաններ, սրճարաններ, առևտրի կենտրոններ, շուկաներ, սպա կենտրոններ, սպորտային օբյեկտներ և այլ հարմարություններ, որոնք բավարարում են զբոսաշրջիկների սննդի, գնումների, հանգստի և զվարճանքի կարիքները:

**Տեղեկատվություն և հաղորդակցություն**. Զբոսաշրջության ենթակառուցվածքը ներառում է այցելուների զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոններ **(Tourist Information Center),** զբոսաշրջային գրասենյակներ, առցանց հարթակներ, բջջային հավելվածներ և այլ հաղորդակցման ուղիներ, որոնք զբոսաշրջիկներին տրամադրում են համապատասխան և արդի տեղեկատվություն՝ նպատակակետի, նրա տեսարժան վայրերի և հասանելի ծառայությունների մասին:

**Անվտանգություն**. զբոսաշրջիկների անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է համապատասխան ենթակառուցվածք, ներառյալ շտապ օգնության ծառայությունները, ոստիկանական բաժանմունքները, առողջապահական հաստատությունները և հսկողության համակարգերը:

**Շրջակա միջավայրի կայունություն**. Կայուն զբոսաշրջային ենթակառուցվածքը կենտրոնացած է շրջակա միջավայրի վրա զբոսաշրջության բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու և բնական ռեսուրսների պահպանման վրա: Այն ներառում է թափոնների կառավարման համակարգեր, էկոլոգիապես մաքուր պրակտիկա, վերականգնվող էներգիայի աղբյուրներ և պահպանման նախաձեռնություններ:

Զբոսաշրջության ենթակառուցվածքը կենսական դեր է խաղում այցելուներ (զբոսաշրջիկներ) ներգրավելու, նրանց փորձառությունն ընդլայնելու և նպատակակետի զբոսաշրջության ոլորտի ընդհանուր զարգացմանը նպաստելու գործում [Sinclair, 1]: Լավ զարգացած և պահպանված ենթակառուցվածքը նպաստում է զբոսաշրջության աճի համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը, աջակցում է տեղական տնտեսություններին և խթանում դրական փոխգործակցությունը զբոսաշրջիկների և տեղական համայնքների միջև:

Չնայած զբոսաշրջության ոլորտի ռացիոնալ զարգացումն ուղղակիորեն կապված է զբոսաշրջային ներուժի հետ, այնուամենայնիվ բոլոր այն ռեսուրսները և ենթակառուցվածքները, որոնք ներկայացնում են տվյալ վայրը կամ քաղաքը, կարող են բավարարել զբոսաշրջիկների լայն հոսքի տարբեր կարիքները և ճիշտ օգտագործելու դեպքում նպաստել զբոսաշրջության զարգացմանը և զգալի բարելավմանը: Ինչպես

արդեն վերևում նշեցինք, զբոսաշրջային ռեսուրսները զբոսաշրջության ոլորտի հիմքն են և վճռորոշ դեր են կատարում ոլորտի զարգացման գործում: Զբոսաշրջային ենթակառուցվածքը վաղուց համարվում է զբոսաշրջության մաս և առանցքային դեր է խաղում զբոսաշրջիկների ներգրավման գործում [Seetanah et al., 92]: Հենց զբոսաշրջային ռեսուրսներն ու ենթակառուցվածքներն են զբոսաշրջային ուղևորությունների հիմնական պատճառը:

Ամենակարևորը, որը պետք է ունենան զբոսաշրջային ռեսուրսները, գրավչությունն է կամ «գայթակղությունը»՝ զբոսաշրջիկներին գրավելու ռեսուրսի կարողությունը: Տվյալ վայր կամ քաղաք այցելելու ևս մեկ լավ պատճառ է հանդիսանում որոշակի օբյեկտների առկայությունը, որոնք գտնվում են օրինակ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության մասնագիտացված գործակալության (այսուհետ՝ ՅՈՒՆԵՍԿՕ) համաշխարհային ժառանգության ցանկում, ինչը զգալիորեն բարձրացնում է նրա մրցունակությունը:

Հայաստանի Հանրապետության պատմամշակութային ժառանգությունը շատ հարուստ է և բազմազան: Առաջին հերթին հարկ է նշել ժայռապատկերների, քարանձավների, հնագիտական վայրերի միջնադարյան ճարտարապետական հուշարձանների, վանական համալիրների ու եկեղեցիների բազմազանության, մոնումենտալ քանդակագործ հուշարձանների, իրենց կատարելությամբ ճարտարապետական եզակի քարերի՝ խաչքարերի առատության մասին: Ցավոք, Երևանի տարածքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կարգավիճակ ունեցող օբյեկտներ առկա չեն, սակայն Հայաստանի տարբեր շրջաններում կան մի շարք մշակութային և պատմական օբյեկտներ, որոնք ներառված են համաշխարհային ժառանգության մեջ: Անկասկած, ոչ նյութական մշակութային ժառանգության վերը թվարկած արժեքները նույնպես կարևոր են և կարող են յուրատեսակ ռեսուրս ու ենթակառուցվածք համարվել զբոսաշրջության համատեքստում, այն արդեն փաստում է, որ յուրաքանչյուր վայրում (քաղաքում) համաշխարհային ժառանգության օբյեկտի կարգավիճակ ունեցող օբյեկտների առկայությունը առավել գրավիչ է դարձնում զբոսաշրջիկների համար, սակայն պետք է արձանագրել, որ պատմամշակութային վայրերից բացի, տվյալ տարածքի զբոսաշրջային ռեսուրսները և ենթակառուցվածքային օբյեկտները կարող են զբոսաշրջիկների հանգիստը դարձնել հարմարավետ և հիշարժան: Այս համատեքստում կարևոր են սննդի օբյեկտները, կացարանները և ժամանցի օբյեկտները [ Raina, 191] : Եվ պատահական չէ, որ քաղաքային զբոսաշրջությունը կարևորվում է նրանով, որ այն ունի մի շարք առանձնահատկություններ և գրավչություններ, ինչը հատուկ չէ գյուղական շրջաններին կամ բնական միջավայրերին: Քաղաքային զբոսաշրջության զարգացման խթանիչներն են՝ քաղաքային միջավայրը, ճարտարապետությունը, դիզայնը, հուշարձանները, թանգարանները, հյուրանոցային տնտեսությունը, զարգացած ենթակառուցվածքները, հանգստի և ժամանցի վայրերը [Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ ]: Առհասարակ քաղաքները մարդու կողմից ստեղծված միջավայրեր են, որոնք նախագծված են մարդկանց համար որպես բարենպաստ և գոհացուցիչ

կենսագործունեության տարածք: Ընդհանրապես, քաղաքները նախատեսված են մարդկային գործունեության լայն շրջանակի համար և բավարարելու տարբեր կարիքներ, ներառյալ աշխատանքը, ժամանցը, սոցիալական փոխազդեցությունները, ինտելեկտուալ ձգտումները և մշակութային արտահայտությունները: Աշխարհի տարբեր քաղաքներում մարդկային միջամտությունների և փոփոխությունների արդյունքում՝ բնական լանդշաֆտները վերածվում են ֆունկցիոնալ քաղաքային տարածքների: Բնականաբար, նախքան Երևան քաղաքի պատմության մեջ խորանալը և նրա բնորոշ առանձնահատկությունները նկատի ունենալը, պետք է մատնանշել Հայաստանը որպես ամբողջություն, քանի որ Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է, բազային քաղաքը և զբոսաշրջիկների հիմնական ուղղությունը, ինչպես նաև հայկական սփյուռքի գլխավոր կենտրոնը:

Երևանը որպես Հայաստանի մայրաքաղաք զբոսաշրջության ոլորտում մշակել է տարբեր ենթակառուցվածքներ՝ այցելուներին տեղավորելու և սպասարկելու համար: Քաղաքը առաջարկում է զբոսաշրջային ռեսուրսների և ենթակառուցվածքների ոչ այնքան հարուստ տեսականի: Երևանում չկան ավանդական բնական ռեսուրսներ, պաշարներ, ինչպիսիք են՝ նավթը, գազը կամ օգտակար հանածոները: Այնուամենայնիվ, քաղաքում առկա են որոշակի նշանակալի բնական ռեսուրսներ և առանձնահատկություններ, որոնց միջոցով այն փոխհատուցում է մշակութային ժառանգությունը, պատմական տեսարժան վայրերը և մարդկային կապիտալն ու արժեքները: Փորձենք հակիրճ ներկայացնել քաղաքի հստակ ռեսուրսներն ու ենթակառուցվածքները: Երևանը և նրա հարակից տարածքները հայտնի են բարձրորակ շինարարական քարերի, այդ թվում՝ տուֆի և բազալտի առատ պաշարներով, որոնք լայնորեն օգտագործվել են և շարունակում են օգտագործվել քաղաքում բազմաթիվ պատմական և ժամանակակից շինությունների կառուցման մեջ: Հրազդանի գետը, կիրճը և Գետառը նույնպես համարվում են քաղաքի կարևորագույն բնական ռեսուրսներից: Երևանի հնագիտական հուշարձանները համարվում են բնական ռեսուրսների յուրատեսակ աղբյուր: Հրաշալի օրինակներ են Էրեբունին, Կարմիր բլուրը, որոնք Երևանի կարևոր հնագիտական վայրերից են և տալիս են պատկերացումներ քաղաքի վաղ պատմության և ուրարտական քաղաքակրթության մասին, իսկ օրինակ Շենգավիթը հնագույն բնակավայր է, որը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակով՝ դարձնելով այն տարածաշրջանի ամենահին ու հայտնի քաղաքային բնակավայրերից մեկը և այլն: Մշակութային ռեսուրսներում առանձնակի տեղ է հատկացվում Երևան քաղաքի հայտնի ճարտարապետական ժառանգությանը՝ որը պատմության ընթացքում միախառնելով տարբեր ոճեր և ազդեցություններ, ստեղծել է ինքնատիպ ճարտարապետություն: Այս համատեքստում կարող ենք փաստել, որ կառուցված ռեսուրսները բացարձակապես ուղիղ համեմատական են մշակութային և ժամանցային ռեսուրսներին: Օրինակ՝ Ժողովրդական ճարտարապետությունը, որ հայտնի է նաև որպես «Վարդագույն քաղաք», ներկայացնում է հայկական ավանդական ժողովրդական ճարտարապետություն՝ նեղ ոլորապտույտ փողոցներով, բակերով և տեղական քարից կառուցված տներով: Այս

պատմական շինությունները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել քաղաքի անցյալի և մշակութային ինքնության մասին: Քաղաքում առանձնանում են մեծ հասարակական շենքեր, բնակելի համալիրներ և մոնումենտալ կառույցներ, ինչպես օրինակ՝ Երևանի հայտնի Կասկադ համալիրը, որը ճարտարապետական մոնումենտալ սանդուղք է՝ կապելով Երևանի կենտրոնը քաղաքի հյուսիս-արևելյան բնակելի թաղամասերի հետ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Երևանում առաջացավ մի շարժում, որը հայտնի է որպես Հայկական դասական վերածնունդ: Այս ճարտարապետական ոճը ձգտում էր վերակենդանացնել և հարմարեցնել հայկական ավանդական ճարտարապետական տարրերը ժամանակակից կառույցների մեջ: Նմանատիպ նշանավոր օրինակներից է Հանրապետության հրապարակը, որը համարվում է քաղաքի կենտրոնական հրապարակը՝ շրջապատված ճարտարապետական գլուխգործոցներով և յուրատեսակ տեսարժան վայրերով, ներառյալ՝ Կառավարության տունը, Հայաստանի պատմության թանգարանը, Ազգային պատկերասրահը և այլն: Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը ճարտարապետական մեծ գոհար է, որի ապշեցուցիչ ճակատը և նրբագեղ ինտերիերը այն դարձնում են ներկայացումների և միջոցառումների մշակութային հանգույց: Երևանում կան նաև բազմաթիվ մշակութային տեսարժան վայրեր, ինչպիսին է Մատենադարանը՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, որը ցուցադրում է հայկական միջնադարյան ձեռագրերը և ունի տպավորիչ ճարտարապետական արտաքին տեսք [Harutyunyan, 68-69]: Այստեղ պահպանվում է հին հայկական ձեռագրերի հսկայական հավաքածու: Այն գիտնականների համար գանձարան է, իսկ այցելուների համար մշակութային գրավչություն: Բացառիկ տեսարժան վայր է համարվում Հայոց ցեղասպանությանը նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը՝ տարբերվող յուրօրինակ ճարտարապետական հորինվածքով, որը ներառում է Հայոց ցեղասպանության թանգարանը, անմար կրակը և խորհրդանշական հուշակոթողը:

Երևանում վերջին տարիներին նկատելի է ժամանակակից ճարտարապետական նախագծերի աճ: Քաղաքային լանդշաֆտը ներառում է ժամանակակից դիզայն՝ ապակե ճակատներով, նորարարական կառույցներով և խառը օգտագործման զարգացումներով ու տեխնիկայով շենք-շինություններ, որոնք ժամանակակից շունչ են հաղորդում քաղաքային միջավայրին:

Մշակութային և ճարտարապետական ռեսուրսները ընդգծում են տարբեր ազդեցություններ ու պատմական շերտեր, որոնք ձևավորել են Երևանի քաղաքային պատկերը՝ դարձնելով այն հետաքրքիր վայր ճարտարապետության սիրահարների և մշակութային առանձնահատկություններն ուսումնասիրողների համար:

Մարդկային ռեսուրսների տեսանկյունից Երևանն ունի բարձր կրթված և հմուտ աշխատուժ: Քաղաքը մի քանի համալսարանների և գիտահետազոտական հաստատությունների կենտրոն է, որը տարբեր ոլորտների համար ապահովում է

մարդկային ռեսուրսների արժեքավոր բազա, ներառյալ՝ տեխնոլոգիաները, հետազոտությունները և զարգացումը:

Ուսումնասիրելով Երևան քաղաքի ժամանցի ռեսուրսները կարող ենք փաստել, որ Երևանում ժամանցային ընտրության հնարավորությունները խիստ սահմանափակ են և հիմնականում պատկանում են մասնավոր ընկերություններին կամ կազմակերպություններին: Նկատելի են նաև վերջին տարիներին Երևանում բացված «Երազ Այգի» և «Երևան Պարկ» հանգստի և ժամանցի թեմատիկ այգիները: Պետական կամ համայնքապատկան ժամանցի վայրերից են Երևանի Կենդանաբանական այգին, Բուսաբանական այգին, որոնք որպես ժամանցային ռեսուրս և ենթակառուցվածք կարիք ունեն զարգանալու և կառավարվելու ժամանակի պահանջներին համապատասխան:

Ինչպես ընդունված է աշխարհի շատ քաղաքներում, քաղաքային իշխանություններն են տրամադրում տարածքներ հանգստի և ժամանցի համար: Զբոսայգիները, այգիները, հանգստի գոտիները թատրոններն ու թանգարանները և այլ քաղաքային հարմարությունները կարող են հանդիսանալ համայնքի բնակիչների հանգստի և ժամանցի վայրեր, իսկ մասնավոր հատվածին կարող են բաժին ընկնել այն սրճարանները, ռեստորանները, առևտրի կենտրոնները, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս հանգստանալու, շփվելու և զվարճանալու հանգստի զբաղմունքներով:

Ուսումնասիրելով սոցիալական ռեսուրսները, կարող ենք արձանագրել, որ վերջին տարիներին քաղաքում բազմազան փառատոների, ցուցահանդեսների, էքսպոների անցկացումը իր նպաստն է բերել բազմաթիվ սոցիակալան շփումների: Վառ օրինակ է Երևանի Գինու Փառատոնը, Գարեջրի փառատոնը, մի շարք գաստրոնոմիական ուղղվածությամբ միջոցառումները, որոնք խթանում են բնակչության հյուրընկալությունն ու ընկերասիրությունը, և ընդհանուր սոցիալական մթնոլորտն ու միջավայրը: Սրանք Երևանի զբոսաշրջային ռեսուրսների ընդամենը մի քանի օրինակներ են: Քաղաքի հարուստ պատմությունը, մշակութային ժառանգությունը և բնական միջավայրը այցելուներին տալիս են փորձառությունների և տեսարժան վայրերի բազմազան տեսականի՝ ուսումնասիրելու, բացահայտելու և հանրահռչակելու համար:

Ընդունված է, որ քաղաքային զբոսաշրջությունը կենտրոնանում է քաղաքների մշակութային, պատմական, ճարտարապետական և ժամանցային ասպեկտների ուսումնասիրության և փորձի վրա: Քաղաքային զբոսաշրջությանն աջակցող ենթակառուցվածքը ներառում է տարբեր բաղադրիչներ, օրինակ՝ քաղաքային կարևորգույն ենթակառուցվածքը տրանսպորտն է, քանի որ քաղաքի ներսում արդյունավետ տրանսպորտային ցանցերը կարևոր նշանակություն ունեն քաղաքային զբոսաշրջության համար: Սա ներառում է լավ կապակցված ճանապարհներ, հասարակական տրանսպորտի համակարգեր (ավտոբուսներ, տրամվայներ, մետրո), տաքսիներ, հեծանիվների փոխանակման ծրագրեր և հետիոտների համար հարմար ուղիներ: Ցավոք, պետք է արձանագրել, որ Երևանը չունի լավ զարգացած տրանսպորտային համակարգ՝ զբոսաշրջությունը հեշտացնելու համար: «Զվարթնոց»

միջազգային օդանավակայանը ծառայում է որպես քաղաքի գլխավոր դարպաս՝ առաջարկելով միջազգային չվերթներ: Քաղաքն ունի հասարակական տրանսպորտի ցանց՝ ներառյալ ավտոբուսներ, միկրոավտոբուսներ մետրոպոլիտեն, տրոլեյբուսային սակավ շարժակազմ:

Երևանն առաջարկում է կացարանների լայն տեսականի՝ տարբեր բյուջեներին և նախասիրություններին համապատասխան: Քաղաքում կան շքեղ հյուրանոցներ, բուտիկ հյուրանոցներ, հյուրատներ, հանրակացարաններ և սպասարկվող բնակարաններ: Այս հաստատություններից շատերը զբոսաշրջիկներին տրամադրում են հարմարություններ և սննդի ծառայություններ: Քաղաքի կացարանները հիմնականում տեղակայված են քաղաքի կենտրոնում՝ զբոսաշրջային վայրերին մոտ: Երևան քաղաքի աշխարհագրական հարմարավետ դիրքի և հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք խաչմերուկում գտնվելու շնորհիվ, օտարերկրյա ճանապարհորդները Հայաստանով անցնելիս, մշտապես կանգ են առել այստեղ և միջնադարյան Երևանի նրանց նկարագրություններն այսօր տեղեկատվության կարևոր աղբյուր են: 17-րդ դարում Երևանում հիշատակվել են մի շարք իջևանատներ, իսկ 19-րդ դարից սկսած, քաղաքի կենտրոնական հատվածներում գտնվող շենքերի 1-ին և 2-րդ հարկերը վերածվել են հյուրանոցների կամ հյուրատների, որտեղ իջևանել են քաղաք այցելած օտարերկրացիները: Նշված ժամանակաշրջանում քաղաքում գործել են «Գրանտ», «Մարսել», «Լիոն», «Արևելք», «Վիեննա»,«Ֆրանսիա», «Լոնդոն» և այլն [Սարգսյան, 187-189]:

Երևանում այժմ գործում է ավելի քան 590 հյուրանոց՝ սկսած պարզ, բայց հարմարավետ համարներից մինչև մրցանակակիր բուտիկ հյուրանոցներ: Marriott International, Radisson Hotel Group, Hilton, Accor, Best Western, Holiday Inn, Ramada by Wyndham և այլ հայտնի բրենդային հյուրանոցային ցանցեր ևս առկա են:

Քաղաքի բազմաթիվ հյուրանոցներ առաջարկում են կոնֆերանսների և հանդիպումների ամբողջովին կահավորված հարմարավետ սրահներ, որոնք բավարարում են բիզնեսի ոլորտի գրեթե բոլոր պահանջները:

Ուսումնասիրելով Երևան քաղաքի ենթակառուցվածքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ենթակառուցվածքների դասակարգման պարագայում այն կարող է բարձրացնել զբոսաշրջության վայրի ընդհանուր գրավչությունն ու մրցունակությունը: Օրինակ՝ քաղաքում կան բազմաթիվ գրավչություններ, սակայն դրանցից միայն մի քանիսն են, որ գտնվում են Երևանի քաղաքապետարանի անմիջական համակարգման ներքո: Որպես գրավչություն և տեսարժան վայր Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 5 համայնքապատկան թանգարան, 3 հնավայր, 3 թատրոն և 1՝ երկրի միակ կենդանաբանական այգին: Քաղաքային զբոսաշրջության ենթակառուցվածքը ներառում է այդ տեսարժան վայրերի պահպանումն ու առաջմղումը, դրանց հասանելիության ապահովումը և այցելուների համար այնպիսի հարմարություններ, ինչպիսիք են՝ տոմսերի վաճառքը, էքսկուրսիաները և տեղեկատվական հասանելիությունը:

Քաղաքային ժամանցի և հանգստի պարագայում ընդունված է, որ քաղաքային տարածքներն ու միջավայրերը առաջարկեն աշխույժ ժամանցի և հանգստի գոտիներ, ներառյալ թատրոնները, համերգասրահները, կինոթատրոնները, սպորտային մարզադաշտերը, այգիները, առևտրի թաղամասերը, ռեստորանները, սրճարանները և գիշերային կյանքի վայրերը: Ենթակառուցվածքն աջակցում է այս հաստատություններին և զբոսաշրջիկների համար տրամադրում է զվարճանքի բազմազան տարբերակներ: Եթե դիտարկենք «**Հասանելության**» (Հարմարություններ և ծառայություններ) և «**Մատչելության**» համատեքստում ապա, անչափ կարևոր են նաև ռեստորաններ, սրճարաններ, առևտրի կենտրոններ, շուկաներ, սպա կենտրոններ, սպորտային օբյեկտներ և այլ հարմարություններ, որոնք բավարարում են զբոսաշրջիկների սննդի, գնումների, հանգստի և զվարճանքի կարիքները: Վերջիններս հիմնականում գտնվում են մասնավոր հատվածի տիրույթում, սակայն այս ենթակառուցվածքը պետք է հաշվի առնի բոլոր այցելուների, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիությունը: Սա ներառում է մատչելի տրանսպորտի, կացարանների, տեսարժան վայրերի և հարմարությունների ապահովում, ինչպես նաև համապատասխան ցուցանակներ և հարմարություններ տարբեր շարժունակության կարիքներ ունեցող մարդկանց համար:

Ինչպես արդեն նշեցինք, տեղեկատվության և հաղորդակցության համատեքստում քաղաքային զբոսաշրջության ենթակառուցվածքը ներառում է այցելուների զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնը, զբոսաշրջային զրասենյակները, առցանց հարթակներ, բջջային հավելվածներ և այլ հաղորդակցման ուղիներ, որոնք զբոսաշրջիկներին տրամադրում են համապատասխան և արդի տեղեկատվություն նպատակակետի, նրա տեսարժան վայրերի և հասանելի ծառայությունների մասին: 2018 թվականից Երևանում գործում են առաջին համայնքապատկան զբոսաշրջային տեղեկատվական երկու կենտրոններ, որոնք այցելուներին տրամադրում են ուղեցույցներ, քարտեզներ, բրոշյուրներ, օժանդակում զբոսաշրջային վայրերի, իրադարձությունների, տրանսպորտի և այլ համապատասխան տեղեկությունների վերաբերյալ: Այս կենտրոնները արժեքավոր կառուցված ռեսուրս են զբոսաշրջիկների համար, ովքեր փնտրում են տեղեկատվություն և առաջարկություններ (Տե՛ս, Նկար 3)[7] Քաղաքն ունի զբոսաշրջային պաշտոնական «այցելիր Երևան» հարթակը, որը բաղկացած է եռալեզու կայքից և հավելվածից, որը գործում է 2022 թվականից:

[7] Ըստ մեր հարցումների 2018 - 2023 թ. դեկտեմբերի 30-ը Երևանի զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնները սպասարկել են 105.418 այցելու՝ աշխարհի շուրջ 75 երկրից:
**Թոփ երկրներն են**՝ ՌԴ, Իրան, ԱՄՆ,Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա, Հնդկաստան, ԱՄԷ, Չինաստան, Միացյալ Թագավորություն, Կորեա:
**Այցելուների կողմից տրված ամենաշատ հարցերը վերաբերվում են**՝ Երևանի և Հայաստանի քարտեզին, Երևանի և Հայաստանի մասին ընդհանուր տեղեկատվությանը, մարզային տրանսպորտին, Երևանից դեպի օդանավակայան գնացող երթուղուն, Երևան Սիթի Տուրի մասին տեղեկատվությանը, թանգարաններին, մետրոյի քարտեզին, տուրիստական գործակալություններին, Թբիլիսի գնացող տրանսպորտի և գնացքի մասին տեղեկատվությանը, տարադրամի փոխանակման կետերին:

**Նկար 3**




***«Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների» այցելությունների քանակական ցուցանիշները 2018-2023 թթ.***

Ժամանցի և հանգստի տեսանկյունից քաղաքը խնդիր ունի ժամանցային վայրերի բազմազանության: Քաղաքի թատրոնները, համերգասրահները և ցուցահանդեսային կենտրոնները, չնայած սակավաթիվ են, այնուամենայնիվ, տարվա ընթացքում հյուրընկալում են տարբեր մշակութային միջոցառումներ, փառատոններ, համերգներ և ցուցահանդեսներ:

Գնումների համատեքստում կարելի է համարել, որ Երևանում կան բազմաթիվ առևտրի կենտրոններ, հուշանվերների խանութներ և շուկաներ, որտեղ զբոսաշրջիկները կարող են ուսումնասիրել և գնել տեղական արհեստագործ պարագաներ, ավանդական ապրանքներ, հուշանվերներ և հայկական արվեստի գործեր: Որպես նմանատիպ ենթակառուցվածք, հրաշալի օրինակ է Երևանյան բացօթյա Վերնիսաժը:

Անվտանգության համատեքստում կարծես թե խնդիր չկա, բայց համեմատելով, Ուզբեկստանի, Իսրայելի և այլ երկրների քաղաքների հետ, Երևանում առկա չէ համայնքային ոստիկանությունը: Քաղաքային զբոսաշրջային ենթակառուցվածքը կենտրոնացած է զբոսաշրջիկների անվտանգության և անվտանգության ապահովման վրա: Սա ներառում է ոստիկանության ներկայությունը, արտակարգ իրավիճակների ծառայությունները, լավ լուսավորված փողոցները, հսկողության համակարգերը և այցելուների անվտանգության միջոցների մասին տեղեկատվություն: Սկսած 2023 թվականի հուլիսից Երևանում քաղաքային իշխանությունը դիտարկում է ստեղծել համայնքային ոստիկանություն [Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք]:

Ինչ վերաբերվում է շրջակա միջավայրի կայունությանը, ապա կայուն քաղաքային զբոսաշրջության ենթակառուցվածքը նպատակ ունի նվազագույնի հասցնել քաղաքներում զբոսաշրջության գործունեության շրջակա միջավայրի վրա

ազդեցությունը: Սա կարող է ներառել էկոլոգիապես մաքուր տրանսպորտային տարբերակներ, թափոնների կառավարման համակարգեր, էներգաարդյունավետ պրակտիկա և կայուն զբոսաշրջության պրակտիկաներ խթանող նախաձեռնություններ:

Քաղաքային զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները վճռորոշ դեր են խաղում զբոսաշրջիկների ներգրավման, նրանց հաճելի փորձառություններ տրամադրելու և տեղական տնտեսությանն աջակցելու գործում: Լավ զարգացած ենթակառուցվածքը բարձրացնում է քաղաքի մրցունակությունը որպես զբոսաշրջային վայր և նպաստում քաղաքային զբոսաշրջության փորձի ընդհանուր որակին:

***Եզրակացություն***

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ ներկա պահին Երևան քաղաքում քաղաքային զբոսաշրջության ոլորտում Երևանի ներուժը կարող է իրացվել ռազմավարական պլանավորման, շուկայավարման և ենթակառուցվածքների և մշակութային արժեքների մեջ շարունակական ներդրումների միջոցով: Քաղաքի կարևոր հնագիտական և մշակութային մի շարք ռեսուրսներ լիովին զարգացած չեն: Մեծ ներուժ ունեցող Երևանի քարայրը, որը բացառիկ հուշարձան է Հրազդանի գետի ափին, գտնվում է անմխիթար վիճակում: Հուշարձանին մոտենալու արահետ անգամ չկա, ցուցանակներ առկա չեն, պահպանության և կոնսերվացման մոտեցումներ ցուցաբերած չեն, որը կարող է հրաշալի ենթակառուցվածք դառնալ քաղաքի համար: Նմանատիպ վիճակում են գտնվում վերջին տարիներն հայտնաբերված գինու հնձանները Երևանի Դալմայի այգիների տարածքում: Այս ամենին անհրաժեշտ է պետական և համայնքային մոտեցում՝ ներդրումների միջոցով ձևավորել և զարգացնել արդեն գոյություն ունեցող ռեսուրսները: Խորհրդային Երևանում ստեղծված ճոպանուղին, որը կապում էր քաղաքի կենտրոնը Նորք-Մարաշ վարչական շրջանին, նույնպես գտնվում է անմխիթար վիճակում, այն չի գործում, բայց այն նույնպես ներդրումների արդյունքում կարող է լավ զարգացած և ժամանակակից ենթակառուցվածքի վերածվել: Զբոսաշրջության փոփոխվող միտումներին կանոնավոր գնահատումները և հարմարեցումները կարող են նպաստել քաղաքի երկարաժամկետ հաջողությանը որպես զբոսաշրջային ուղղություն:

Ամփոփելով վերոնշյալ ռեսուրսները և ենթակառուցվածքները, կարելի է փաստել, որ այնուամենայնիվ Երևան քաղաքի համար առկա են մի շարք փոփոխությունների կառավարման մեթոդներ,որոնցից են.

- Քաղաքի կառավարման մոդելների արդիականացումը,
- Քաղաքի նյութատեխնիկական բազայի, գույքի և ենթակառուցվածքների բարելավումը,
- Զբոսաշրջային և մշակութային հասանելիության ապահովումը, (նաև ներառականության / մատչելիության տեսանկյունից)
- Զբոսաշրջային և մշակութային ապակենտրոնացում
- Կրթամշակութային և փորձառնական ծրագրերի նախատեսում

Այս ենթակառուցվածքները բարելավելու արդյունքում, այն կնպաստի Երևան այցելող զբոսաշրջիկների համար հյուրընկալ և հարմար միջավայրի ստեղծմանը, ընդլայնելով նրանց փորձը և հնարավորություն տալով ուսումնասիրել քաղաքի հարուստ մշակութային ժառանգությունն ու տեսարժան վայրերը: Այսպիսով, զբոսաշրջային ենթակառուցվածքը զբոսաշրջության զարգացման հիմքն է: Զբոսաշրջային ենթակառուցվածքներում ներդրումները կարևոր են զբոսաշրջիկների ժամանումների ավելացման համար և նպաստում են այցելուների գոհունակությանը և մոտիվացիային:

Զբոսաշրջության արդյունաբերությունը չի կարող հաջողությամբ զարգանալ առանց համապատասխան զբոսաշրջային ենթակառուցվածքի, որն ապահովում է զբոսաշրջության նյութական բաղադրիչը և կարևոր դեր է խաղում զբոսաշրջիկների կարիքները բավարարելու գործում: Որպեսզի զբոսաշրջային ուղղությունները բավարարեն զբոսաշրջիկների պահանջները, անհրաժեշտ է մեծ գումարներ ներդնել տուրիստական ենթակառուցվածքներում: Այս առումով յուրաքանչյուր քաղաք պետք է խրախուսի առկա զբոսաշրջային ներուժի առավելագույն օգտագործումը, որի գրավչությունը կարող է գրավել զգալի թվով զբոսաշրջիկների:

Երևանում առկա ռեսուրսները և զբոսաշրջային ներուժը, որպես զբոսաշրջային ուղղություն, ընդունակ է հանդես գալ որպես առանձին զբոսաշրջային ուղղություն:

Կարծում ենք, որ զբոսաշրջային ենթակառուցվածքը զբոսաշրջության զարգացման և նպատակակետում առկա ռեսուրսների օգտագործման հիմքն է: Ինչպես արդեն նշեցինք, անհրաժեշտ է քաղաքի ենթակառուցվածքներում կատարել ներդրումներ, խթանել պատասխանատու զբոսաշրջային գործիքակազմ՝ կատարելու համընթաց քայլեր այն կառավարելու համար: Անհրաժեշտ է լուծել նաև մարդկային ռեսուրսների խնդիրը: Զբոսաշրջության շահագրգիռ կողմերի և տեղական համայնքի միջև համագործակցությունը կարող է վճռորոշ դեր խաղալ քաղաքի զբոսաշրջության երկարաժամկետ հաջողության համար, ուստի վերը թվարկված առաջարկությունները անհրաժեշտ է դիտարկել կայուն զբոսաշրջություն ապահովելու համատեքստում:

### *Գրականության ցանկ*


1. Mamirkulova, Gulnara, Jianing Mi, Jaffar Abbas, Shahid Mahmood, Riaqa Mubeen, and Arash Ziapour. 2020, New Silk Road Infrastructure Opportunities in Developing Tourism Environment for Residents Better Quality of Life. Global Ecology and Conservation 20: pp 1-19.
2. Sinclair, M. Thea. 1998. Tourism and economic development: A survey. Journal of Development Studies 34, p. 51.
3. Seetanah, Boopen, Thanika Devi Juwaheer, Matthew John Lamport, Sawkut Rojid, Raja Vinesh Sannassee, and Ushad Subadar Agathee. 2011. Does infrastructure matter in Tourism Development? University of Mauritius Research Journal 17, pp 89–108.
4. Raina A. Ecology, Wildlife and Tourism Development: Principes, Practices and Strategies. Delhi: Sarup & Sons, 2005, 336 p.

5. Tigran Harutyunan, Architectural Guide Yerevan, Dom publishers, 2018, pp 68-69.
6. Սարգսյան Հ., «Քարավանատնից մինչև ժամանակակից հյուրանոց», Երևան Գիտական Հոդվածների ժողովածու, Երևան 2006թ., էջեր 187-189:
7. Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման հայեցակարգ (վերջին մուտքը՝ 25.12.2023թ.) www.yerevan.am/uploads/media/default/0001/94/61229b9495224af7468c26d24738e8646d28bee8.pdf
8. Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայք, Քաղաքային տնտեսություն, զբոսաշրջություն (վերջին մուտքը՝ 12.02.2024թ.), https://www.yerevan.am/hy/tourism/

## THE MAIN POTENTIAL OF TOURIST RESOURCES AND INFRASTRUCTURES IN THE CONTEXT OF URBAN TOURISM IN YEREVAN

***Gevorg Orbelyan***
*Researcher*
*EUA, Chair of Management*
*orbelyangevorg@gmail.com*

***Abstract***

The current article provides a brief overview of the potential development of tourism resources and infrastructure in Yerevan. Since resources and infrastructure are important in the development of urban tourism, which is considered the material basis of sustainable tourism and the economic growth potential of tourism, an attempt has been made to globally represent the classification categories and general perceptions of both resources and infrastructure. The article includes definitions from natural resources to social resources, from infrastructure to transportation, accommodation, security, and environmental sustainability. As is well known, the rational development of the tourism sector is directly related to the tourist potential; however, all the resources and infrastructure that we have tried to present through the simultaneous descriptions of the city of Yerevan can contribute to the construction of a more effective vision of the city, can also satisfy the various needs of a wide flow of tourists, and, if used correctly, can contribute to the development of tourism. This study aims to help create concepts and strategies that, through the necessary investments in the city's infrastructure, promote a responsible tourism toolkit and take parallel steps to boost local infrastructure development. Naturally, the important role and significance of Yerevan in the tourist market of the Republic of Armenia have also been irreversibly established, as it is the center of the main cultural and tourist infrastructures of the state, the capital of all Armenians, and the main carrier of the country's human resources.

**Keywords:** Yerevan, urban tourism, resources, infrastructures, potential, development.

Ներկայացվել է՝ 18.03.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 06.05.2024թ.

# TAILORING EFFECTIVE USE MODEL OF BIG DATA IN MANAGERIAL CONTEXT: INSIGHTS FROM AN EMPIRICAL STUDY IN ARMENIAN COMPANIES

https://doi.org /10.59982/18294359-24.15-te-07

***Elen Grigoryan***
*Doctor in Management Science, Jean Moulin Lyon 3 University, France*
*French University in Armenia, Management Chair*
*iaelyon School of Management, Lyon, France*
*elen.grigoryan@gmail.com*

***Jean-Fabrice Lebraty***
*University professor, iaelyon School of Management, Lyon, France*
*Jean Moulin Lyon 3 University, France*
*jean-fabrice.lebraty@univ-lyon3.fr*

***Katia Lobre-Lebraty***
*HDR, iaelyon School of Management, Lyon, France*
*Jean Moulin Lyon 3 University, France*
*katia.lobre-lebraty@univ-lyon3.fr*

***Abstract***

This article explores the managerial dimensions of the big data phenomenon, focusing on the challenge of customizing an effective use model within companies. The central inquiry revolves around tailoring such a model to suit the specific needs of big data-user companies. To address this, the study adopts a conceptual framework proposed by Surbakti and his co-authors, which delineates the effective use of big data. The primary methodology involves quantitative analysis of data gathered from 211 surveys completed by Armenian industry professionals. Examination of the collected data through statistical analysis reveals the presence of two distinct cohorts within the realm of big data users: "novice users" and "advanced users." The main theoretical contribution that we aim for in this research is empirically proving the global validity of the studied model and demonstrating its flexibility of application in these two types of use cases of big data. While the conceptual model is found to be applicable to both types of users, its implementation varies significantly between the two groups. Therefore, from a managerial point of view, our results lead a manager to first think about the maturity of its company in terms of big data. Implementing a solution is not enough. By thinking in terms of novice vs. advanced, it creates two different managerial courses of action. Moreover, we propose the variables a manager has to analyze depending on this maturity.

***Keywords:*** Big data, effective use of big data, novice user, advanced user, Armenian context, effective use.

## *Introduction*

The question of how a company can effectively leverage big data today, that is, the "how" question, remains unanswered. To use big data effectively, companies face multiple challenges: technological [Falahat et al., 17], managerial [Liu et al., 362], societal [Ferreira et al., 1082], economic [Maroufkhani et al., 2]. These aspects potentially change the rules of the game related to the

management and the effective use of big data by companies, making assessing the impact of big data a critical consideration. In this article, we focus on the managerial aspects of big data within companies located in Armenia. The question we aim to address here is: "How to tailor the model of effective use of big data to the companies in the Armenian context?"

To examine this question, we will first justify the application of the conceptual model of effective use of big data. In the second step, we will present our methodology. Finally, in the third step, we will discuss our results and highlight their implications.

***Main body***

To comprehend the foundations of big data, one can rely on the relationships established among the three categories: "Data – Information – Knowledge." **Data** are facts representing a certain reality, independent of whoever uses them. **Information** is the data to which an individual or a group has added meaning. The transition from information to **knowledge** occurs through a mechanism of cognition. Gartner defines big data as "data of large volume and wide variety generated at high speed, requiring specific processing for better understanding, innovative decision-making and cost-effective process automation". This includes various data characteristics such as Volume, Velocity, Variety, Veracity, Value, Variability, Visualization [Seddon, Currie, 303]. According to "The Economist 2017", the volume of data is expected to reach 180ZB in 2025, noting that 1 zettabyte is equivalent to 250 billion DVDs [Vassakis et al., 5]. The simplistic idea that "more data collected leads to better decision-making" is challenged by the need to convert data, due to its volume, into applicable knowledge robustly and reliably. Companies often find themselves in a "blind zone," a counterproductive effect of the increased volume of data, leading to a decline in the percentage of data they can process, understand and analyze.

Consequently, the effective use of big data is considered a crucial component in creating business value from the data. The literature review on the subject of value creation from big data reveals two important tracks. First, much of the literature is written by consultants and practitioners, resulting in a lack of theoretical foundations and empirical tests [Gupta, George, 1053]. Second, imitating "big data success stories" often leads companies to significant financial losses [Kiron, 64]. These two tracks, which are of interest to both researchers and decision-makers in the field, lead us to focus on the finer and more profound aspects that improve the understanding of the subject, aiming to empirically and in-depth study the effective use of big data at the organizational level and its integration into the entire process of value creation.

To achieve this, we studied the effective use of big data in Armenian companies through the conceptual model developed by Surbakti and his co-authors.

The model integrates 41 factors grouped into 7 themes: data quality; data privacy and security and governance; perceived organizational benefit; process management; people aspects; systems, tools and technologies; organizational aspects [Surbakti et al., 11], (Table 1). These factors were identified based on a systematic literature review and grouped into themes through content analysis. The use of 45 case studies by Marr in 2016 allowed grouping these themes into three categories: motivational, operational and supporting mechanisms, with interrelations whose influence on the effective use of big data must be considered [Marr]. This model, being the most recent and comprehensive, can serve as a tool to develop the theory of the effective use of big data.

To address the proposed research question, our primary objective is to develop and apply a coherent methodological approach to empirically test the conceptual model developed by these authors. Our main approach involves gathering quantitative data through a survey of 211

professionals in the field, representing 16 Armenian companies that use big data. This quantitative study enables us to operationalize the variables of the model and conduct the necessary testing.

For collecting quantitative data, we have devised an instrument based on the bibliometric method to measure the effective use of big data. We analyzed 40 papers to identify scientifically sound measurement scales for assessing the 41 factors of the conceptual model. Additionally, eight professionals in the field and one academician were engaged to adapt the survey instrument to the research context and conduct a pilot study. To ensure the reliability of the structures, we retained an internal consistency coefficient of Cronbach's Alpha ≥ 0.9 (0.93) [Hair et al., 96].

***Table 1***

| Theme | Factor |
|---|---|
| F1: Perceived organizational benefit | f1.1: Perceived value<br>f1.2: Perceived risk<br>f1.3: Perceived usefulness<br>f1.4: Perceived ease of use<br>f1.5: Intention to use<br>f1.6: Perceived observability<br>f1.7: Cost–benefit analysis |
| F2: Process management | f2.1: Process orientation<br>f2.2: IT business process integration<br>f2.3: Data management |
| F3: Data privacy and security and governance | f3.1: Data privacy and security<br>f3.2: Data governance |
| F4: Data quality | f4.1: Data quality and information quality<br>f4.2: Data completeness<br>f4.3: Data currency<br>f4.4: Data access<br>f4.5: Data relevance<br>f4.6: Data accuracy<br>f4.7: Data consistency |
| F5: People aspects | f5.1: People's knowledge and skills<br>f5.2: Trust<br>f5.3: Champions<br>f5.4: Employee engagement<br>f5.5: User participation<br>f5.6: Individual Characteristic |
| F6: Organizational aspects | f6.1: Organizational cultural competence<br>f6.2: Talent management<br>f6.3: Change management program<br>f6.4: Strategic alignment<br>f6.5: Project management<br>f6.6: Performance management<br>f6.7: Organizational structure and size<br>f6.8: Interdepartmental collaboration<br>f6.9: Communication<br>f6.10: Top management support<br>f6.11: Environmental effect<br>f6.12: Clear goals<br>f6.13: Focus on innovation |
| F7: Systems, tools and technologies | f7.1: System quality<br>f7.2: IT infrastructure<br>f7.3: Vendor support |

*Themes and factors of the conceptual model*

The main study targeted professionals involved in the processing and use of big data, including Data Scientists, Data Analysts, Data Engineers and Big Data Processing Project Managers. When constructing the sample, we followed the guidelines of Bryant and Yarnold and "the law of 100" [Bryant, Yarnold, 99–136] due to the nature of our research, which required adapting non-probability sampling [Bidan, 187].

We statistically analyzed the 211 usable questionnaires according to the guidelines of Raguseo, which involve ranking and prioritization based on an order of variables according to their average values [Raguseo, 189]. To conduct this analysis, we utilized Excel software with its "Data Analysis" function and XLSTAT.

2. Deep Learning - AI technologies are advancing the machine learning model, where neural networks are used to mimic human cognitive thinking by creating their own analytical queries and tasks.
3. Natural Language Processing - AI technologies allow software to analyze human language.

4. Cognitive computing - AI technologies allow systems to conduct interaction with the environment, analyze, and learn, which increases their importance in management practices.

In our opinion, the highest potential for the application of artificial intelligence in the field of economics and management lies precisely in marketing management, where there is a need to improve the function of marketing market research. The practical role of marketing research is to provide information and analytical support for the enterprise management system, where measures are developed for the effective use and management of the advertising budget, optimization of the product portfolio and etc.

In addition, the application of artificial intelligence technology in market research will automatically improve the quality of communication links with consumers. It is also possible to identify formal leaders in each individual market segment in order to analyze these organizations in the role of a benchmark [Nikulin et al].

AI also improves the customer experience. It is used to personalize products and services, provide more accurate recommendations for improving customer service. Virtual assistants and chatbots are becoming more and more common tools for interacting with customers [Kurbanova, Bakhtiyarova].

Another area of application for AI technology is human resource management. For example, it is relevant to use artificial intelligence technology in personnel assessment, the role of which is to provide information and analytical support for the system of personnel management of the enterprise, where measures aimed at the effective use and management of human resources are developed. And to make this task as efficient as possible, it is necessary to analyze the labor of employees by various metrics, the combination and sum of which complicates the procedure, making it more time-consuming and saturated [Teslenko].

The application of artificial intelligence in the KPI system in the evaluation of enterprise personnel would enable a successful digitalization procedure. This would achieve the following results as:

1. Simplification of the labor efficiency evaluation procedure, which allows results to be obtained much faster.
2. Automate the process of evaluating key metrics and performance indicators, which will allow to delegate the task to fewer specialists, and optimize financial costs.
3. Create a real-time KPI tracking function to track labor results, allowing for adjustments to work goals, objectives, and responsibilities.

The scheme of Figure 4 shows the main benefits of the practical use of artificial intelligence technology for commercial organizations.

**Figure 4**




**Benefits of artificial intelligence technology for today's organizations**

**Conclusion**

As a result of the study, we can conclude that artificial intelligence technologies are of particular importance in improving many business processes of enterprises to achieve the goal of improving their economic performance and management. However, successful AI integrations require solving some pressing problems that hinder not only innovative business development, but the successful use of the latest developments and technologies in business process management.

For example, the main barrier to the introduction of artificial intelligence is the shortage of relevant personnel. AI requires certain specialists who can configure and apply the technology to operate many business processes, production chains and digitalization of control systems. Personnel training can take place inside organizations when management and owners are interested in financing professional training, inviting appropriate specialists and providing time and funds for the right employees to be trained in a third-party educational organization [Eskerkhanova et al].

Another popular problem of artificial intelligence technology in the practice of managing economic activities of organizations is security. It is important to build a strong secure in-house system for data transfer and remote access to business processes, applications and data to prevent the theft of sensitive information or a hacker attack. The most frequent cybercrimes occur against private IT companies (27%), which is not surprising since these are the organizations that have a close connection to commercial activities related to digital technologies and information resources [Riedel et al]

Thus, in conclusion of the article, let us summarize that artificial intelligence technologies are rightly considered leaders in terms of impact on aspects of digital transformation of economic systems and commercial organizations. Due to Al business process management is improved, economic efficiency of operations is increased, and financial performance indicators are improved. Implementation of artificial intelligence technology is possible in different areas and spheres of economic activity. The only limitation is the risks and threats to the information security of economic

systems, which requires the development of personnel skills and improvement of the data protection system.

**References**

1. Akhmatova D.R. Economic potential of artificial intelligence: world experience, Russian practice and prospects of EAEU countries. *Economics and Innovation Management*. 2023. № 3 (26). pp. 15-24.

2. Dementiev K.I. Analysis of global experience in the application of artificial intelligence for optimization of business processes of enterprises. *Management Consulting*. 2023. № 1 (169). pp. 107-120.

3. Eshtokin S.V. Russian fintech in the national financial system: protector of interests or hidden threat? *Economy, Entrepreneurship and Law*. 2021. Vol. 11, No. 8. pp. 1915-1944.

4. Eskerkhanova L.T., Amirova E.F., Batchayeva Z.B. Use of blockchain technology and artificial intelligence in the management of business processes. *First economic journal*. 2023. № 3 (333). pp. 98-105.

5. Filippova O.A. The role of artificial intelligence in the development of business ecosystems: monitoring and management. *Bulletin of V.N. Tatishchev Volga University*. 2023. Vol. 2. № 3 (52). pp. 205-214.

6. Gladilin L.Yu., Practical aspects of applying artificial intelligence in business. *Entrepreneur's Guide*. 2023. Vol. 16. № 4. pp. 128-133.
https://evnreport.com/creative-tech/armenian-techs-year-of-generative-ai/ (access date: 11.02.2024).

7. Ivanova S.P., Myasoedov A.I. Changes in the digital economy and its impact on society. *Economics. Sociology. Law*. 2023. № 1 (29). pp. 14-23.

8. Kochkin T.N., Analysis of the artificial intelligence market in the world and the attitude of business to it in Russia. *Young scientist*. 2022. № 4 (399). pp. 106-108.

9. Kurbanova Ya.K., Bakhtiyarova N.B. Artificial intelligence and the road to business of the future. *Matrix of scientific cognition*. 2023. № 10-1. pp. 354-356.

10. Nikulin L.F., Velikorossov V.V., Filin S.A., Lanchakov A.B. Artificial Intelligence and Management Transformation. *National interests: priorities and security*. 2020. Vol. 16. № 4 (385). pp. 600-612.

11. Raznova N.V., Wang X. World market of artificial intelligence systems and technologies: trends and prospects. In Proceedings: Intellectual Engineering Economics and Industry 5.0. *Proceedings of the International Scientific and Practical Conference. St. Petersburg*, 2023. pp. 293-295.

12. Riedel L.N., Ilyina I.V., Moiseeva K.A., Provornykh I.A. Artificial intelligence in business process management. *Global scientific potential*. 2022. № 11 (140). pp. 214-216.

13. Teslenko I.B., Artificial intelligence in personnel management. *Modern Science*. 2022. № 6-3. pp. 121-124.

14. Vorobyeva A.V., Ziborova E.S. World market of artificial intelligence: segmentation and development prospects. In Proceedings: *Youth and scientific and technological progress. Collection of reports of XVI International Scientific and Practical Conference of Students, Postgraduates and Young Scientists*. Gubkin-Stary Oskol, 2023. pp. 227-229.

15. Vyhodets R.S., Policy of EAEU countries in the field of artificial intelligence. *Eurasian integration: economics, law, politics*. 2022. №3 (41). pp. 106-117.

16. Yu. Vekilyan., Armenian Tech’s Year of Generative AI. URL: https://evnreport.com/creative-tech/armenian-techs-year-of-generative-ai/ (access date: 11.02.2024).

Ներկայացվել է՝ 01.03.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 23.05.2024թ.

# ՀՀ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎՐԱ

https://doi.org /10.59982/18294359-24.15-ha-10

*Անի Անդրանիկի Մկրտչյան*
*Հայցորդ*
*ՀՊՏՀ, Կառավարման ամբիոն*
*ani.mkrtchian@gmail.com*

## *Ամփոփագիր*

Հոդվածում ուսումնասիրվում է հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների կիրառման ազդեցությունը Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի վրա: Վերջինում մանրամասն քննարկվում է հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների փոխակերպող դերը Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում: Մասնավորապես՝ ինչպես են փորձագիտական զեկույցներում ներկայացված խորհրդատվությունները նպաստել հավատարմագրման գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Հանգամանորեն դիտարկվում է, թե ինչպես են փորձագիտական խմբերի զեկույցներից և ուսումնասիրություններից բխող այս առաջարկությունները փոխել կրթական մոտեցումները/պրակտիկան և նպաստել Հայաստանում բարձրագույն կրթության համակարգի արդյունավետության բարձրացմանը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջիններիս իրականացումը էական ազդեցություն է ունեցել հայաստանյան բուհերի որակի և մրցունակության վրա:

Ավելին, վստահորեն կարելի է ասել, որ հայաստանյան բուհերը ոչ միայն ընկալել, այլև ակտիվորեն տեղայնացրել են այս չափանիշները՝ ցուցադրելով գերազանցության և շարունակական կատարելագործման հանձնառություն: Հարկ է նշել, որ խորհրդատվությունների ազդեցությունը մեծ է նաև ազգային և միջազգային կրթական չափանիշներին համապատասխանեցման տեսանկյունից, ինչը նպաստել է առավել մրցակցային միջավայրի ստեղծմանը: Հետազոտությունը ցույց տվեց, որ վերջիններս հատկապես կարևոր են թափանցիկության և հաշվետվողականության կարևորման տեսանկյունից, ինչն էլ իր հերթին օգնել է համալսարաններին բավարարել հասարակության աճող պահանջները և համահունչ լինել համաշխարհային կրթական միտումներին: Ընդհանուր առմամբ, խորհրդատվությունները որոշիչ դեր են խաղացել Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում հաստատությունների գործունեության բարելավման և կրթական բարձր չափանիշների պահպանման գործում:

**Հիմնաբառեր.** Հավատարմագրում, չափանիշ, չափորոշիչ, ազդեցություն, արդյունավետություն

*Ներածություն*

**Հետազոտության նպատակն է** ՄՈՒՀ-երի փորձագիտական զեկույցներում նշված խորհրդատվությունների ուսումնասիրության միջոցով վեր հանել հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների կիրառության ազդեցությունը բարձրագույն կրթական համակարգի վրա։

Հետազոտության **օբյեկտը**՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշ/չափորոշիչներն են, իսկ **առարկան**՝ վերջիններիս կիրառելիության ազդեցությունը ՀՀ բարձրագույն կրթության համակարգի վրա։

Չափանիշ/չափորոշիչների արդյունավետությունն ու ազդեցությունը գնահատելու նպատակով նախ իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին և երկրորդ շրջափուլեր անցած բուհերի փորձագիտական զեկույցներում նշված խորհրդատվությունների **համեմատական ուսումնասիրություն**, ապա նաև **ֆոկուս խմբային** քննարկում հավատարմագրման գործընթացներում ներգրավված համակարգողների և **հարցազրույց** ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի հետ։

Յուրաքանչյուր կրթության համակարգ՝ մասնավորապես ուսումնական հաստատությունների շրջանավարտները հաճախ հայտնվում են մրցակցային մի միջավայրում, որը ձևավորվել է տեղական և ազգային կարիքներին, շուկայի առաջարկին և պահանջարկին, ինչպես նաև կրթությանը ներկայացվող միջազգային չափորոշիչներին համապատասխանությամբ։ Համաշխարհայնացմանը (գլոբալիզացիային) զուգընթաց միջազգային չափորոշիչների ազդեցությունը, թափանցիկության և հաշվետվողականության նկատմամբ հասարակական պահանջը նույնպես աճում է։ Հետևաբար կրթության մասնագետներն ու կրթական քաղաքականություն մշակողները հայտնվում են սեփական որակի ապահովման չափորոշիչները մշակելու մարտահրավերի առջև։ Այնպիսի չափորոշիչներ, որոնք կարտացոլեն իրենց շահակիցների յուրօրինակ պատմությունը, կարիքները և ակնկալիքները՝ համապատասխանաբար ներդնելով այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտան կիրառել այդ չափորոշիչները և մշտադիտարկել կրթության համակարգի կատարողականը։ Սա նաև հնարավորություն է տալիս համապատասխան միջոցառումներ ձեռնարկել նոր իրավիճակին հարմարվելու նպատակով [Materu, xxxi]։ Այս գործոնների հաշվի առնելու կարևորությամբ էլ պայմանավորված է սույն հոդվածի **արդիականությունը**։

***Հավատարմագրման չափանիշների եւ չափորոշիչների նշանակությունը կրթության որակի բարելավման գործընթացում***

Չափանիշները գնահատման/չափման կետեր կամ բենչմարքեր են, որոնք սահմանում են որոշակի նպատակների և/կամ չափորոշիչների ձեռքբերումը։ Չափանիշները որոշակի մանրամասնություններով նկարագրում են պահանջների առանձնահատկությունները և պայմաններ, որոնք պետք է բավարարվեն՝

համապատասխանաբար ապահովելով հիմքեր (քանակական և որակական) գնահատման վերաբերյալ եզրակացության համար [Vlasceanu et al, 35]:

«Չափորոշիչ» բառն ինքնին ստանդարտացված չէ: Չափորոշիչները ձևակերպումներ են, որոնք վերաբերում են պահանջների և պայմանների որոշակի ակնկալվող մակարդակներին, որոնց համեմատությամբ պետք է գնահատվի և ձեռք բերվի մասնագիտական հաստատության կամ կրթական ծրագրի անհրաժեշտ որակը՝ հավատարմագրվելու կամ արտոնագիր ստանալու համար: «Չափորոշիչ» եզրույթը նշանակում է և՛ ֆիքսված/ամրագրված չափանիշ (որի միջոցով կարող է չափվել արդյունքը), և՛ ձեռքբերման մակարդակը: Չափորոշիչները կարող են ստանալ քանակական ձև/արտահայտվել քանակապես/՝լինելով առավելապես բենչմարքինգի արդյունք, ինչպես նաև կարող են լինել որակական՝ մատնանշելով միայն առանձնահատուկ թիրախներ (կրթական արդյունավետությունը, կայունությունը, հիմնական պարտավորությունները և այլն): Քանակական չափորոշիչները ներառում են այն շեմային մակարդակները, որոնց ուսումնական հաստատությունները կամ կրթական ծրագրերը պետք է բավարարեն՝ հավատարմագրում ստանալու համար: Առավել հաճախ շեմային կամ «հիմնական/առանցքային չափորոշիչները» բնութագրում են որակի ընդունելի նվազագույն մակարդակը: Այլ դեպքերում չափորոշիչները վերաբերում են որակի առավելագույն մակարդակին՝ համարվելով «գերազանցության չափորոշիչներ»: Սրանք կարող են լինել բենչմարքինգի արդյունք կամ հաստատվել ոչ բացահայտ կերպով՝ կոլեգիալ ձևով ճանաչվելով /նույն մակարդակի/ փորձագետների կողմից: Չափորոշիչները կարող են ունենալ տարբեր հղման կետեր՝ ա) ներածումներ (օրինակ՝ բովանդակության չափորոշիչներ), բ) արդյունքներ (օրինակ՝ կատարողականի չափորոշիչներ), գ) գործընթացներ: Չափորոշիչները կարող են լինել ընդհանուր (աստիճանի մակարդակի համար, օրինակ՝ Բակալավրի աստիճան, Մագիստրոսի աստիճան) և առարկայական/ կոնկրետ (Մեծ Բրիտանիայում առարկայի բենչմարքինգի սահմանում): Չափորոշիչները կարող են տարբերվել՝ ըստ չափորոշիչների սահմանման տարբեր մեթոդների տեսակների (ինչպիսիք են՝ չափանիշների վրա հիմնվելու մեթոդը, նվազագույն կարողությունների մեթոդը կամ նպատակների սահմանման մեթոդը): Որպեսզի հնարավոր լինի պատշաճ ձևով որոշել, թե արդյոք որակի որոշակի չափորոշիչ բավարարվել է, թե ոչ, այդ չափորոշիչը պետք է հստակ սահմանվի և վերաբերի որոշակի չափանիշներին, որոնք հետագայում կարող են բաժանվել ցուցիչների [Որակի ապահովման տերմինաբանական բառարան, 86]: Սկզբունքորեն բոլոր չափորոշիչներն ունեն նորմատիվ գործառույթ. ապահովում են հաստատուն սանդղակներ և չափումներ, կարգավորում են գործողությունները, սահմաններ են դնում, նպաստում են համեմատությունների իրականացմանը և այլն: Այդուհանդերձ, անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրել, թե ինչպես են կառավարվում և կիրառվում այդ նորմերը: Մի կողմից չափորոշիչները կարող են դիտարկվել որպես հաստատուն պարամետրեր, որոնք մեծ ազատություն չեն տալիս ներգրավված դերակատարների գործունեությանը, մյուս կողմից՝ ճկուն հայեցակարգեր, որոնք դինամիկ կերպով արձագանքում են տեղի

ունեցող փոփոխություններին: Լրացուցիչ ուշադրություն պետք է դարձնել առկա քաղաքական գործոնների վրա, հատկապես երբ չափորոշիչները կիրառվում են կառավարման և վերահսկման գործընթացներում կենտրոնական ղեկավարության աջակցելու համար [Lueger, Vettor , 12]:

Չափորոշիչն ունի տարբեր իմաստներ՝ կախված նրանից, թե որքանով են չափորոշիչները նպաստում հաստատության որակի ապահովմանը/որակի բարելավմանը: Ինչը շատ հաճախ կարող է շփոթության պատճառ հանդիսանալ:

- Իմաստներից մեկը «մինիմալ շեմ»-ն է. կատարողականի մակարդակը, որին պետք է հասնել, օրինակ՝ հավատարմագրվելու, փորձաքննություն անցնելու և այլնի համար:
- Երկրորդ իմաստը վերաբերում է ավելի բարձր մակարդակին. «չափորոշչի կատարողական» ասելիս սովորաբար նկատի ունենք ոչ թե նվազագույն, այլ միջին մակարդակը:
- «Չափորոշիչ» բառի երրորդ կիրառումն ուշադրությունը հրավիրելու համար է: Նման մոտեցումը կիրառվում է որակի տարբեր գործակալությունների կողմից, որոնք կազմում են այն չափանիշների ցանկը, որին հաստատությունները պետք է ուշադրություն դարձնեն:

Բացի «չափորոշիչ» բառի բազմաթիվ իմաստներից՝ գոյություն ունի նաև մեկ այլ՝ նեղ իմաստ «ակադեմիական ձեռքբերման չափորոշիչ», որը երբեմն հետևյալ հասկացությունների միջև թյուրըմբռնման պատճառ է հանդիսանում.

- սահմանել չափորոշիչների շեմային մակարդակը,
- սահմանել չափորոշիչների այլ մակարդակները,
- չափել չափորոշիչների ձեռքբերումը,
- հավաստել չափորոշիչների միանմանությունը:

Այս ամենը կարող է դիտարկվել ակադեմիական համատեքստում, օրինակ՝ ընդհանուր մտավոր զարգացման կամ ուսումնառությունը շարունակելու պատրաստակամության առումով [Woodhouse, 14-15]:

Որակի չափորոշիչներն անվիճելի նշանակություն ունեն բարձրագույն կրթության ՈԱ համակարգերի բոլոր տեսակների (ինստիտուցիոնալ, տարածաշրջանային, ազգային կամ միջազգային) համար: Թեև արտահայտված են տարբեր ձևերով և պիտակներով, այս չափորորոշիչները առկա են աշխարհի հարյուրավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների կայքերի գլխավոր էջերում: Ներառված են ՈԱ տարբեր ուղեցույցներում և ԵԲԿՏ-ին առնչվող քաղաքական հայտարարությունների անբաժան մասն են: Անկասկած, պաշտոնապես ընդունված ընդհանուր չափորոշիչների ցանկացած շարք (հաճախ ներկայացված են նվազագույն պահանջների հիման վրա) կարող է հիմք ստեղծել որակի ապահովման համակարգերի ստեղծման համար՝ տրամադրելով հենանիշեր չափման ընթացակարգերի և համեմատությունների իրականացման: Ավելորդ է նշել, որ նման ռազմավարությունները ոչ միայն բավարարում են հանրային հաշվետվողականության պահանջները, այլև արտահայտում են բարձրագույն կրթության

ոլորտում աճող մրցակցային միտումները՝ հիմք դառնալով տարբեր վարկանիշավորումների կամ վարկանիշավորման ընթացակարգերի սահմանման համար:

Տարբեր չափորոշիչներ տարբեր կերպ են համապատասխանեցվում որակի ապահովման և որակի զարգացմանը նպաստող ու ազդող գործընթացներին: Պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել դրանց ներդրման եղանակների վրա, որպեսզի իրագործվի ընդհանուր նպատակը: Եթե անգամ որակի մշակույթի մոտեցումը հիմնականում «ով ենք մենք»–ի վերլուծության գործիք է, ոչ թե «ով ենք ուզում լինել»–ի, վերջին հարցի լուծումը մեր ազդեցությունից դուրս չէ: Որակի չափորոշիչների հետ զգուշավոր, մտածված և արդյունավետ աշխատանքն, անշուշտ, ճիշտ ուղղությամբ ընթացող խոստումնալից քայլ է [Lueger, Vettor, 11-16]:

***ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների կիրառման արդյունքում բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումները***

Գրեթե բոլոր եվրոպական երկրները ներդրել են որակի ապահովման իրենց համակարգը՝ հիմնված Բեռլինի կոմյունիկեում [Communique of the Conference of Ministers responsible] ամրագրված չափանիշների վրա՝ հատուկ շեշտադրելով համագործակցությունն ու նոր կապերի ստեղծումը: Այդուհանդերձ, կրթական հաստատություններին խրախուսվում է շարունակել իրենց գործունեությունը՝ որակի բարձրացմանն ուղղված ներքին մեխանիզմների պարբերաբար կիրառման և որակի արտաքին ապահովման հետ անմիջական կապ ստեղծելու միջոցով: Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամ բոլոր երկրները մշակել և ներդրել են Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի պահանջներին համապատասխան որակի ապահովման ազգային չափորոշիչներ և ուղենիշներ: Ինչպես նաև խրախուսվում է ներդնել որակի արտաքին գնահատման այնպիսի մոդել, որը մշակված կլինի ազգային առանձնահատկությունների հիմքի վրա, սակայն հաշվի կառնի միջազգայնորեն ընդունված ուղենիշներն ու չափանիշները [Standards and Guidelines]: Որակի ապահովման Եվրոպական ռեգիստրը (EQAR) [European Quality Assurance Register for Higher Education] առանձնահատուկ կարևորում է նաև գործակալությունների միջև համագործակցությունը, որը կարող է նպաստել հավատարմագրման գործընթացի փոխադարձ ճանաչման ընդլայնմանը կամ որակի ապահովման վերաբերյալ որոշումների շեշտադրմանը [The European Higher Education Area]: Այդ իսկ պատճառով դեռևս 2005թ.-ին Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների նախարարներն առաջարկեցին Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիային (ENQA) Եվրոպական ուսանողական միության (ESU), Բարձրագույն կրթական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի (EURASHE) և Համալսարանների եվրոպական ասոցիացիայի (EUA) հետ միասին մշակել որակի ապահովման համաձայնեցված չափորոշիչներ, ընթացակարգեր և ուղենիշներ՝ որակի արտաքին ապահովման կառույցների կամ հաստատությունների համար արդյունավետ

փորձաքննության համակարգ ապահովելու նպատակով հնարավոր ուղիներն ուսումնասիրելու և նախարարների հաջորդիվ գործողություններ իրականացնող խմբին (Follow-up group) հաշվետվություն ներկայացնելու նկատառումով: Այս գործընթացի շնորհիվ, հնարավոր կլիներ հաշվի առնել գործող որակի ապահովման ասոցիացիաների և ցանցերի մասնագիտական փորձը [Realising the European Higher Education Area]:

Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությունը, կիրառվող ընթացակարգերը և մեխանիզմները մշակված են Որակի ապահովման եվրոպական չափանիշներին և ուղենիշներին համապատասխան՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները [ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, 2015, 14]: Պետական հավատարմագրման չափանիշները [Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներ] հիմք են ծառայում ուսումնական հաստատությունների կողմից իրենց գործունեության և ՄԿԾ-ների ինքնավերլուծությունն իրականացնելու համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս բացահայտել մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՈՒՀ) առկա բարելավման կարիք ունեցող ոլորտները: Չափանիշները ձևակերպված են որակի ապահովման միջազգային նորմերին համապատախան, ապահովում են բազմազանություն և նորարարության բավարար ազատություն: Միաժամանակ, չափանիշները բավարար հստակ են սահմանված և հավաստում են, որ չափանիշների ձևակերպումներում առկա են որակի կարևոր տարրերը, անցել են նախնական գնահատում և կիրառելի են: ՀՀ-ում հավատարմագրում ստանալու համար հաստատությունները և կրթական ծրագրերը գնահատվում են սահմանված բոլոր չափանիշներով [ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ 2022, 27]:

Չափանիշ/չափորոշիչների արդյունավետությունն ու ազդեցությունը գնահատելու նպատակով նախ իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին և երկրորդ շրջափուլերն անցած բուհերի փորձագիտական զեկույցներում [Փորձագիտական զեկույցներ] նշված խորհրդատվությունների համեմատական ուսումնասիրություն, ապա նաև ֆոկուս խմբային քննարկում հավատարմագրման գործընթացներում ներգրավված համակարգողների և հարցազրույց ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի հետ: Քննարկումների ժամանակ անդրադարձել ենք ոչ միայն չափանիշ/չափորոշիչների կիրառման, մեկնաբանման հարցերին, այլև փորձագիտական զեկույցների, չափանիշների կիրառության ազդեցությանը բարձրագույն կրթական համակարգի բարելավման վրա: Ուսումնասիրությունը նպատակ է հետապնդել՝

- պարզել չափանիշ/չափորոշիչները և հավատարմագրման գործընթացն առհասարակ ինչ ազդեցություն է ունեցել կրթական համակարգի վրա,
- դուրս բերել՝ ինչպիսի փոփոխություններ են իրականացվել հավատարմագրման առաջին շրջափուլի արդյունքում:

Ստացված տվյալները համադրվել են փորձագիտական զեկույցների և խորհրդատվությունների ուսումնասիրությունների հետ։

Հիմնվելով ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարի հետ հարցազրույցի արդյունքների վրա՝ կարելի է առանձնացնել, որ հավատարմագրման գործընթացն արդյունավետորեն է իրականցվում թե՛ ընթացակարգային առումով, թե՛ կազմակերպչական առումով, թե՛ բովանդակային ապահովվածության առումով, որը նպաստում է երկրում ինչպես որակի մշակույթի ձևավորմանը, այնպես էլ կրթության որակի շարունակական բարձրացմանը։ Վերջինիս պնդմամբ չափանիշ/չափորոշիչների կիրառումը մեծապես նպաստել է ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգի ձևավորմանը։ ՄՈՒՀ-երն սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց գործունեության արդյունավետության վերլուծությանը։

ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննությության բաժնի ղեկավարը նշեց, որ հավատարմագրման գործընթացի ազդեցությունը հատկապես շոշափելի է նշված գործընթացներում՝

- ՄԿԾ-ների բարելավում և վերջնարդյունքահեն նկարագրում,
- ՄՈՒՀ-եր նոր ռազմավարության ընտրություն և ռազմավարական ծրագրերի վերանայում,
- ՄՈՒՀ-երի և ՄԿԾ-ների կառավարման մոտեցումների բարելավում,
- Դասախոսական կազմի կարիքների վերհանման, գնահատման և խրախուսման մոտեցումների բարելավում,
- Կրթություն և հետազոտություն փոխկապակցում,
- Ենթակառուցվածքային ռեսուրսների բարելավում,
- Միջազգայնացում և այլն։

Միևնույն ժամանակ նշեց, որ որակի մշակույթի լիարժեք ձևավորման տեսանկյունից դեռևս անելիքներ կան։ Փորձի փոխանցումն ուսումնական հաստատության ներսում դեռևս արդյունավետ մեխանիզմներով և համակարգված չի իրականացվում։

Բուհերի առաջին և երկրորդ շրջափուլերի հավատարմագրման զեկույցներում նշված փորձագիտական խորհրդատվությունների ուսումնասիրությունը հաստատեց վերոնշյալ պնդումը։ Եթե առաջին շրջափուլի ժամանակ փորձագետներն ուսումնական հաստատություններին խորհուրդ էին տվել հստակեցնել **ռազմավարական առաջնահերթություններն ու ուղղությունները**, մշակել և ներդնել ՌԾ-ի գնահատման և բարելավման հստակ մեխանիզմներ և գործիքներ, բարելավել բուհի տարբեր գործընթացներում արտաքին և ներքին շահակիցներին ներգրավման մեխանիզմները, ապա երկրորդ շրջափուլի ժամանակ գրեթե բոլոր ուսումնական հաստատությունները վերանայել են իրենց ռազմավարական ծրագրերը։ Համապատասխանաբար հստակեցվել են ուսումնական հաստատությունների ռազմավարական նպատակներն ու առաջնահերթությունները՝ ըստ ուղղությունների։ Այս փուլում կարևորվել է ՌԾ-ի

կատարողականի գնահատումն ըստ գնահատման առանցքային ցուցիչների իրականացումը:

Լուրջ բարելավումներ են իրականացվել **կառավարման համակարգերում**: Եթե առաջին շրջափուլի ժամանակ բուհերի կազմակերպական կառուցվածքը, ռազմավարական նպատակներն ու խնդիրները ոչ միշտ էին համահունչ, հստակեցված չէին կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների գործառույթներն ու պարտականությունները, որոշումների կայացումը մեծամասամբ մասնակցային չէր իրականացվում, հիմնականում թույլ էին միջամբիոնային կամ միջֆակուլտետային մակարդակով լավագույն փորձի տարածման մեխանիզմները, ապա երկրորդ շրջափուլի զեկույցներից պարզ է դառնում, որ վերանայվել են կազմակերպական կառուցվածքները, բարելավվել են որոշումների կայացման գործընթացներում շահակիցների ներգրավման մեխանիզմները, մշակվել են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլաններ, ներդրվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգեր: Արդեն կենտրոնացվածությունը տվյալների հավաքագրման մեխանիզմների և մշտադիտարկման իրականացման մեխանիզմների բարելավման վրա է:

Փորձագիտական զեկույցների և խորհրդատվությունների ուսումնասիրությունները հիմք են տալիս պնդելու, որ լրջագույն բարելավումներ են իրականացվել **ՄԿԾ-ների** տիրույթում: Եթե առաջին շրջափուլի ժամանակ արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ի մշակման, վերանայման գործընթացներում շատ ցածր էր, ՄԿԾ-ները, հիմնականում, ըստ վերջնարդյունքների մշակված չէին, վերջնարդյունք, դասավանդման ու ուսումնառության մեթոդ և գնահատում փոխկապակցված չէին, չէր իրականացվում հստակ մեթոդաբանությամբ բենչմարքինգ այլ միջազգային կրթական ծրագրերի հետ, ապա երկրորդ շրջափուլում պարզ է դառնում, որ գրեթե բոլոր ուսումնական հաստատություններում վերանայվել են ՄԿԾ-ը: Վերջիններս հստակ նկարագրված են ըստ ուսումնառության վերջնարդյունքների, վերանայվել են դասավանդման ու ուսումնառության մեթոդները, բուհերի կողմից կարևորվել է ձևավորող գնահատումը, ուսումնական հաստատությունները ներդրել են շահակիցների կարիքները վերհանելու մեխանիզմներ, մեկնարկել են կրթական ծրագրերի վերանայման և բարելավման աշխատանքները: Որոշ ուսումնական հաստատություններ ներդրել են կրթական ծրագրերի պատասխանատուներ: Երկրորդ շրջափուլի զեկույցներում սկսել են քննարկվել առավել խորքային և բովանդակային հարցեր, ինչպիսիք են՝ կամընտրական առարկաների կանոնակարգումը, դասընթացի ծավալը, պլանավորումը, ձևավորող գնահատման գործընթացում գործատուների ներգրավվածությունը, ըստ վերջնարդյունքների կրեդիտների բաշխումը և այլն:

Առաջին շրջափուլի խորհրդատվություններն ուսումնասիրելով կարելի է փաստել, որ նախկինում ըստ կրթական ծրագրերի չկային **պրոֆեսորադասախոսական կազմին** ներկայացվող հստակ պահանջներ, բավարար չափով ուշադրության չէին արժանանում դասախոսական կազմի վերապատրաստումներն ու մասնագիտական

զարգացումը, դասախոսների կարիքների վերհանման, գնահատման և խրախուսման մեխանիզմները ոչ միշտ էին հստակ և փոխկապակցված: Երկրորդ շրջափուլի ժամանակ արդեն հստակեցվել են դասախոսների կարիքներ վերհանման և գնահատման մեխանիզմներ, ներդրվել են մասնագիտական զարգացման հնարավորություններ: Սակայն դեռևս դասախոսների խրախուսման և մասնագիտական առաջխաղացման մեխանիզմները բարելավման անհրաժեշտություն ունեն:

Առաջին շրջափուլի արդյունքում զգալի փոփոխություններ են իրականացվել **կրթություն և հետազոտություն** փոխկապակցելու ուղղությամբ: Ուսումնական հաստատություններում ներդրվել են հետազոտության իրականացման կամ միջազգային գրախոսվող ամսագրերում հրատարակվելու համար խրախուսման մեխանիզմներ: ՄԿԾ-ներում սկսվել է շեշտադրվել հետազոտական բաղադրիչի առկայությունը, ուսանողների մոտ հետազոտական հմտությունների ձևավորումը: Այդուհանդերձ դեռևս ակտուալ է հետազոտության երկարաժամկետ և միջնաժամկետ հստակ ռազմավարությունների մշակման, ինչպես նաև հետազոտության արդյունքների առևտրայնացման և միջազգայնացման ուղղությամբ հարցերը:

Առաջին շրջափուլի արդյունքում շոշափելի փոփոխություններ են իրականացվել **ենթակառուցվածքների և ռեսուրսների** տիրույթում: Բարելավվել են ուսումնագիտական ենթակառուցվածքները, վերազինվել են լաբորատորիաները՝ հարստացվել նորագույն սարքերով և համապատասխան փորձարարական նյութերով: Մեծացել է միջազգային գրադարանային ֆոնդերին անդամակցությունը: Որոշ ուսումնական հաստատություններ ներդրել են համապատասխան պայմաններ առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Այդուհանդերձ երկրորդ շրջափուլի զեկույցներն ու փորձագիտական խորհրդատվությունները ցույց տվեցին, որ դեռևս ֆինանսական կառավարման համակարգի բարելավման անհրաժեշտություն կա, վերջիններս ոչ միշտ են փոխկապակցված ռազմավարական նպատակների հետ:

Համեմատելով առաջին և երկրորդ շրջափուլերի արդյունքները՝ կարելի է փաստել, որ հսկայական աշխատանք է կատարվել **միջազգայնացման** ուղղությամբ: Մասնավորապես՝ զգալի մեծացել է միջազգային ծրագրերում ուսումնական հաստատությունների ներգրավվածությունները, ընդլայնվել է միջազգային համագործակցությունը, ինչը նպաստել է ուսանողների և դասախոսների շարժունության, ինչպես նաև միջազգային դասախոսների ներգրավման մեծացմանը: Շատացել են համատեղ գիտահետազոտական աշխատանքներն ու հրատարակումները: Բարելավվել է ուսանողների և դասախոսների օտար լեզվի իմացության աստիճանը: Այդուհանդերձ դեռևս համատեղ կրթական ծրագրերը պետք է ընդլայնվեն, պետք է մշակվեն օտարերկրացիների ներգրավման և ադապտացիայի հստակ քաղաքականություններ՝ պայմանավորված վերջիններիս թվի զգալի աճով:

Շոշափելի փոփոխություններ են նկատվում **որակի ապահովման** տիրույթում: Մասնավորապես՝ առաջին շրջափուլի արդյունքում բոլոր ուսումնական հաստատությունները ձևավորել են որակի ապահովման կառույցներ, նշանակվել են

որակի ապահովման ֆակուլտետային պատասխանատուներ: Պարբերաբար իրականացվում են որակի ապահովման գործընթացներում ներգրավված անձանց վերապատրաստումներ: Մշակվել և ներդրվել են որակի ապահովման մեխանիզմներ, գործիքակազմ: Իրականացվում են տարբեր տիրույթների պարբերական գնահատումներ, համապատասխանաբար նաև բարելավումներ: Բուհի տարբեր գործընթացներ իրականացվում են որակի ՊԻԳԲ շրջափուլին համապատասխան: Այդուհանդերձ, դեռևս որակի մշակույթն ամբողջովին չի ձևավորվել, իսկ տվյալների հավաքագրման մեխանիզմները կատարելագործման անհրաժեշտություն ունեն:

### *Եզրակացություն*

Ընդհանրացնելով ուսումնասիրությունների արդյունքները, կարելի է վստահ ասել, որ հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների և առհասարակ հավատարմագրման գործընթացի ազդեցությունը կրթական համակարգի բարելավման և բուն կրթական գործընթացի կազմակերպման վրա զգալի է, բազում գործընթացներ սկսել են պլանավորված իրականացվել, կրթական տարբեր գործընթացներ պարբերաբար գնահատվում և համապատասխանաբար բարելավվում են, իսկ արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը մեծացել է  ինչպես մշակման, այնպես էլ գնահատման  և բարելավման գործընթացներում: Վերջիններս հիմք են ապահովում հավատարմագրման գործընթացի կատարելագործման, ինչպես նաև ոլորտը կարգավորող փաստաթղթային հենքի վերանայման համար, որն էլ իր հերթին նպաստում է որակի մշակույթի ձևավորմանը: Այդուհանդերձ թե՛ փորձագետները, թե՛ համակարգողները, թե՛ զեկույցների վերլուծությունները հիմք տվեցին պնդելու, որ անկախ նրանից՝ ինչքանով են հավատարմագրումներն արդյունավետ և ինչ ազդեցություն ունեն համակարգի վրա, հավատարմագրման չափանիշ/չափորոշիչները մշտապես ուշադրության կենտրոնում պետք է լինեն:

### *Գրականության ցանկ*


1. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ: ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ, Երևան, 2015, 116 էջ
2. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ: ՀՀ Մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ 2022, Երևան, 2022, 111 էջ
3. Vlasceanu L., Grunberg L. and parlea D.: Quality Assurance and Accreditation: A glossary of Basic Terms and Definitions, UNESCO, Bucharest ISBN 92-9069-186-7, 2007, 119 pages
4. Peter Materu: Higher Education Quality Assurance in Sub-Saharian Africa: Status, challenges, opportunities and promising practices, International Bank for Reconstruction and Development/ The World Bank, Washington D.C. 20433, U.S.A.; 2007, 80 pages DOI: 10.1596/978-0-8213-7272-2; U.S.A.;

5. Woodhouse D.: A short history of Quality, Commission for Academic Accreditation United Arab Emorates, CAA Quality Service No.2, ISSN 2227-496, ASBN978-9948-16-584-2, April 2012, 29 pages
6. Lueger M. and Vettor O: Standards and Quality Models: Theoretical Considerations, “Flexibilising” Standards? The Role Of Quality Standards Within A Participative Quality Culture, Implementing And Using Quality Assurance: Strategy And Practice A Selection of papers from the 2nd European Quality Assurance Forum, Edited By: Anela Beso, Lucien Bollaert, Bruno Curvale, Henrik Toft Jensen, Lee Harvey, Emmi Helle, Brian Maguire, Anne Mikkola and Andrée Sursock, Italy, 2007, pages 11-17
7. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամ: Որակի ապահովման տերմինաբանական բառարան, աշխատանքային նյութ, 102 էջ: http://www.anqa.am/hy/հրապարակումներ/որակի-ապահովման-տերմինաբանական-բառարան/
8. Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներ: http://www.anqa.am/hy/հավատարմագրում/#Papers
9. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն, հիմնադրամ: Փորձագիտական զեկույցներ: https://www.anqa.am/hy/%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%B4%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%B4/?ExpertReports=2022#ExpertReports
10. Communique of the Conference of Ministers responsible for Higher Education in Berlin on 19 September. http://media.ehea.info/file/2003_Berlin/28/4/2003_Berlin_Communique_English_577284.pdf
11. European Quality Assurance Register for Higher Education. https://www.eqar.eu/
12. Realising the European Higher Education Area, Communiqué of the Conference of Ministers responsible for Higher Education in Berlin on 19 September 2003, pages 9. http://www.tcd.ie/teaching-learning/academic-development/assets/pdf/berlin_communique.pdf
13. Standards and Guidelines for the Quality Assurance in the European Higher Education Area, 2005. http://www.enqa.eu/index.php/home/esg/
14. The European Higher Education Area - Achieving the Goals, Communiqué of the Conference of European Ministers Responsible for Higher Education, (19-20 May 2005), Bergen. http://www.ehea.info/Uploads/Declarations/Bergen_Communique1.pdf

# THE SIGNIFICANCE AND IMPACT OF THE ACCRDITATION CRITERIA ON THE IMPROVEMENT OF THE HIGHER EDUCATION SYSTEM

***Ani Mkrtchyan***
*Researcher*
*ASUE, Chair of Management*
*ani.mkrtchian@gmail.com*

***Abstract***

The article discusses the significance and impact of accreditation criteria and standards on improving the educational system. It elaborates on the transformative role of accreditation criteria and standards in Armenia's higher education landscape. The article evaluates the impact of recommendations on the use of accreditation criteria and standards within Armenia's higher education system. It critically assesses how these recommendations, derived from expert panel reports and studies, have reshaped educational practices and become instrumental in enhancing the effectiveness of the higher education system in Armenia. The research shows that the implementation of these recommendations has significantly influenced the quality and competitiveness of Armenian higher education institutions. Moreover, the research highlights that Armenian universities not only understand but have proactively adapted these standards, showcasing a commitment to excellence and continuous improvement. It also notes the alignment of these practices with both national and international educational standards, fostering a more competitive environment. The study underscores the importance of transparency and accountability, as suggested in the recommendations, which have helped institutions meet increasing societal demands and align with global educational trends. Overall, the recommendations have played a crucial role in improving institutional performance and maintaining high educational standards within Armenia's higher education system.

***Keywords***: Accreditation, criterion, standard, impact, effectiveness.

Ներկայացվել է՝ 08.04.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 10.05.2024թ.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

https://doi.org /10.59982/18294359-24.15-am-11

*Միլենա ԲաբկենիՂազարյան*
*Հայցորդ*
*ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն*
*milen.ghazaryan@gmail.com*

***Ամփոփագիր***

Սույն հոդվածում ուսումնասիրվել են պետության տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական ապահովման առանձին հիմնահարցերը: Հոդվածում փորձ է արվել համակարգված բացահայտել «պետության տարածքային ամբողջականություն» հասկացության իրավական բովանդակությունը՝ շեշտադրում կատարելով այն հիմնավորման վրա, որ տարածքային ամբողջականությունը պետության նյութական հատկանիշն է և նրա ինքնիշխանության նյութական նախապայման: Հետազոտության շրջանակում վեր են հանվել պետության միասնության պահպանման համատեքստում տարածքային ամբողջականության վերաբերյալ հայեցակարգային տեսական և գործնական մոտեցումներ, որոնք էական ու գործառնական նշանակություն ունեն իրավագիտության ոլորտում:

Հիշյալ տեսակետների համակարգային վերլուծությունից արվել է հետևություն, որ պետության միասնականության ապահովման համատեքստում նրա տարածքային ամբողջականության ապահովումը կարող է դրսևորվել երկակի նշանակությամբ՝ արտաքին և ներքին, ընդ որում, եթե արտաքին հարթությունում պետությունը «առանձնանում» է մյուս ինքնիշխան պետություններից ոչ միայն սահմանների սահմանազատման միջոցով, ինչպես նաև իր տարածքային ամբողջականությամբ և հանրային իշխանության միասնական համակարգով, արտաքին քաղաքականության առանձնահատկություններով, պետության զարգացման նպատակով ու տեսլականով, միջազգային իրավակարգի հանդեպ իր մոտեցումներով և այլն, ապա ներքին հարթությունում պետության տարածքային ամբողջականությունը, նախևառաջ, արտահայտվում է ներքին քաղաքական, տնտեսական իրավական, մշակութային և բարոյահոգեբանական, ազգային գաղափարախոսական առումներում, որոնք նպաստում են նաև պետության և հասարակության անվտանգության ապահովմանը և դրանց բնականոն զարգացմանը:

Հետազոտության արդյունքներով կատարվել է եզրահանգում, որ պետության տարածքային ամբողջականությունը բոլոր դեպքերում դրսևորվում է պետական

տարածքի անօտարելիությամբ, իսկ դրա ապահովումն ինքնին սահմանադրական արժեբանական նշանակություն է ձեռք բերում:

***Հիմնաբառեր.*** Պետության տարածք, պետությունների տարածքային ամբողջականություն, պետության միասնականություն, սահմանադրական սկզբունք, պետության նյութական հատկանիշ:

***Ներածություն***

Պետությունների զարգացման արդի դարաշրջանում խիստ կարևորվում են պետության տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական ապահովման հիմնահարցերը: Ակնհայտ է, որ տարածքային ամբողջականությունը պետության նյութական հատկանիշն է կամ նրա ինքնիշխանության նյութական նախապայմանը, և միաժամանակ՝ այսպես կոչված «տարածքային գերակայության երաշխավոր»:

Համակարծիք լինելով այն պնդման հետ, որ պետության միասնականությունը, ըստ էության, պայմանավորված է նրա տարածքային ամբողջականությամբ [Устименко, 44], ուստի հիշյալ հանգամանքով պայմանավորված՝ սահմանադրական իրավունքի գիտության շրջանակում ժամանակակից պետություններում մեծանում են պետության միասնության և տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական երաշխիքների ամրապնդման հիմնախնդիրների հետազոտման նկատմամբ հետաքրքրությունները՝ անշուշտ հաշվի առնելով նաև պատմական գործոնները[8]:

Հայաստանի Հանրապետության համար առավել քան երբևէ նշված հիմնախնդիրները խիստ կարևորություն են ստացել հատկապես վերջին ժամանակաշրջանում, երբ մեր պետության՝ միջազգայնորեն ճանաչված ինքնիշխան տարածքները շարունակվում են դիտարկվել արտաքին ուժերի ագրեսիվ քաղաքականության ու տարածքային նկրտումների առարկա[9]:

Այս պայմաններում խիստ կարևորվում է բոլոր հասու միջոցներով պաշտպանել հայրենի սահմանները, Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունն ու մեր ժողովրդի միասնականությունը: Հենց այս նպատակների իրագործմամբ պայմանավորված անհրաժեշտ է առաջնային դիտարկել պետության

[8] Այստեղ կարող է խոսք գնալ նաև պատմական այնպիսի իրադարձությունների վերաբերյալ, ինչպիսիք են՝ նախկին ԽՍՀՄ-ի, Հարավսլավիայի և Չեխոսլովակիայի փլուզումը և այլն [*Казанник, 35*]:

[9] Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող միջազգային հարաբերություններում տեղ են գտել երկու իրարամերժ մոտեցումներ, մի դեպքում, ժողովուրդների իրավահավասարության ու ազգերի ինքնորոշման իրավունքը որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք ստորադասվում էր պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի նկատմամբ, մեկ այլ դեպքում, ընդհակառակը՝ երկու այդ սկզբունքների միջև ստեղծվել էր թվացյալ հակասականության վերաբերյալ տպավորություն: Ելնելով սույն աշխատանքի հետազոտման առարկայի առանձնահատկությունից, կարծում ենք, որ պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքի կարգավորման առարկա հարաբերությունները որևէ ձևով չպետք է վերաբերելի լինեն ժողովուրդների իրավահավասարության ու ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման հետ [Դանիելյան, 5-12.], [Ղուկասյան, 20-21], [Պապյան, 3-23] և այլն:

միասնության և տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական ապահովման երաշխիքները [*Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 131*]:

Անհրաժեշտ է նկատել, որ հենց այդ նպատակների իրագործմանն է ուղղված ՀՀ Սահմանադրության մեջ «միասնություն» և «տարածքային ամբողջականություն» եզրույթների գործառնական նշանակությունը, մասնավորապես՝ Հանրապետության նախագահը պաշտոնը ստանձնելիս երդվում է, որ իր ողջ ուժը ներդնելու ազգային միասնության ամրապնդման գործում (հոդվ. 127, մաս 3), իսկ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների շրջանակում, զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության ապահովման սահմանադրական գործառույթը դիտարկվում է սահմանադրական կարգի հիմունք [Հայաստանի Հանրապետության սահմանդրական իրավունք, 10-11, 273] և այլն:

Ակներև է, որ սահմանադրական իրավունքը գործուն մասնակցություն պետք է ունենա պետության «միասնության և տարածքային ամբողջականության» որպես սահմանադրաիրավական ինստիտուտի տեսական ու գործնական մոտեցումների բովանդակության պարզման և դրա իրավաընկալման ժամանակակից երաշխիքների մշակման խնդրում:

**Վերլուծություն**

Պետության միասնականության և տարածքային ամբողջականության հարաբերակցության վերաբերյալ ժամանակակից սահմանադրական դոկտրինի տեսանկյունից առկա են տարբեր տեսակետներ [Иванов, 33-38]:

Այսպես, իրավագետների մի խումբ գտնում է, որ պետության միասնականությունն ինքնին անհրաժեշտ է ընկալել որպես «պետական ինստիտուտների միասնություն», «պետական իշխանության միասնություն», «իրավական համակարգի միասնություն», «քաղաքացիության ինստիտուտի միասնություն» և այլն, ինչն իր հերթին կիրառական նշանակություն է հաղորդում պետության տարածքային ամբողջականության ապահովմանը [Анненкова*, 16-17],* [Баньковский*, 8-9*]: Ընդ որում, այդ մոտեցման կողմնակիցները պետության միասնականությունը դիտարկում են տարածքային ամբողջականության ապահովման այնպիսի որակական վիճակ, որը մեկուսի գոյություն ունենալ չի կարող, իսկ դրա բնականոն գոյությունը պայմանավորված է բացառապես միմյանց փոխպայմանավորվածության և փոխհամաձայնության գործընթացների համատեքստում:

Իրավագետների մեկ այլ խմբի կարծիքով՝ պետության միասնությունը և տարածքային ամբողջականությունն անհրաժեշտ է դիտարկել որպես պետական իշխանության միասնականություն, որն ինչ որ չափով հակադրվում է իշխանությունների բաժանման սկզբունքի հետ: Այսպես, ըստ պրոֆեսոր Ս.Ա. Ավակյանի՝ պետական միասնականությունը պետության իշխանության

կազմակերպման սկզբունք է, որի էության բովանդակությունից բխում է հետևյալը, որ պետությունը ճանաչում է այդպիսի միասնությունը միայն վերջինիս մասերի՝ տարածքների ամբողջականության կամ միասնության ապահովման շրջանակում, և «(...) ի հակադրումը սեպարատիզմի (անջատողականության) դրսևորմանը, այսինքն տեղական շահերին պետական շահերի հակադրման քաղաքականությանը» [Авакьян, *64-65*]:

Բովանդակային առումով հիշյալ տեսակետը պետության միասնականության և տարածքային ամբողջականության միջև անջրպետ է ստեղծում այն հիմնավորմամբ, որ՝ ոչ թե պետության միասնության և տարածքային ամբողջականության ապահովումը պետք է դիտարկել պետական իշխանության կազմակերպման ելակետ, այլ ընդակառակը՝ պետական իշխանության միասնականությունն անհրաժեշտ է դիտարկել որպես պետության միասնականության և տարածքային ամբողջականության ապահովման տարր:

Նշվածի համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև պրոֆեսոր Բ.Ս. Էբզեևի այն ընդհանրացումը, ըստ որի՝ պետության միասնականության և տարածքային ամբողջականության սահմանադրաիրավական բովանդակության ավելի լայն տեսանկյունից անհրաժեշտ է այն ընկալել որպես պետության ամբողջականություն և միասնություն, որը ներառում է՝ ինչպես պետության տարածքը, այնպես էլ պետական իշխանության մարմինների միասնությունը և այն տարածքը, որտեղ գոյություն ունեն կամ փոխգործակցում են պետության իրավական, քաղաքական ու տնտեսական համակարգերը [*Конституционное право: энциклопедический словарь, 144*]:

Սահմանադրագետների հաջորդ խումբը գտնում է, որ պետության միասնականությունը և տարածքային ամբողջականությունն ինքնին անհրաժեշտ է ընկալել փոխլրացման (ինտեգրալ) և փոխգործակցող տարրերի ամբոջություն, որտեղ պետության միասնականությունը դրսևորվում է ոչ միայն տարածքային ամբողջականության ու միասնության բնույթով, այլև պետության քաղաքական, տնտեսական, սոցիալական և իրավական համակարգերի միասնությամբ [Уханкин, *9-10*]: Եվ այս տեսակետի հիմնավորման հենքի վրա պրոֆեսոր Վ.Վ. Ուխանկինը առաջ է քաշում «պետության ամբողջականության» տեսությունը, որը՝ որպես համալիր կատեգորիա, բովանդակում է պետականության որակական բնութագիրը և նույն պետության ամբողջականության սկզբունքը: Չնայած այս մոտեցումը մասամբ համընկնում է պրոֆեսոր Բ.Ս. Էբզեևի տեսակետի հետ, այդուհանդերձ որպես հակակշիռ տեսակետ է արտահայտում մեկ այլ պրոֆեսոր՝ Ի.Ա. Ումնովան, որի պնդմամբ պետության ամբողջականությունն անհրաժեշտ է դիտարկել բացառապես որպես պետականության որակական բնութագիր [Умнова, 72]:

Եվ վերջապես, պրոֆեսոր Ի.Վ. Լևակինի կողմից առաջ է քաշվում այն դոկտրինը, ըստ որի՝ պետության միասնականությունը և տարածքային ամբողջականությունը ենթադրում են պետության ձևի և կառուցվածքի առկայություն, որտեղ անհրաժեշտ է

*The American then goes: "Well, my country is very large, and traveling on a train is not efficient. When we are traveling to a neighboring county we fly on a plane".*
*The Russian thinks for a second and responds: "When we go to a neighboring country, we ride in a tank."*

These were just a few examples of different categories of British and American humor and humor often overlaps between these categories.

After studying the examples, we can state that there are some major differences in the ways both nations express their wit based on their national identity and history. An open, smart American humor is a means of relaxation and a possibility to avoid and overcome stressful situations. American humor is often straightforward and obvious like Americans themselves. Americans do not make regular use of irony whereas the British use it on a daily basis. Irony is the foundation of British humor. British humor is more subtle, usually with a dark and sarcastic intent with a hidden meaning. This obviously stems from the fact that the British culture is more reserved than the American culture. Humor is important both for the British and for Americans. In order to fit in their society one should understand their humor.

***Conclusion***

To sum up we should note that British humor regularly uses irony, while American humor does not. British humor is very subtle while American humor is very slapstick. British humor tends to hide a lot of sarcasm and strong emotions. American humor is more straightforward and obvious.

To appreciate humor you need to understand the cultural context and national peculiarities of the country. In addition to this, you must have a good command of the language. The special techniques and ways of expressing humor make the style of humor unique and inimitable. In the course of time the mentality and understanding of comic effect change and its forms and means, alter as well.

**References**

1. Dmitriev A. V., “Sociology of Humour”, M., 2016, 218 p.
2. Rourk, C., “American Humor, a Study of the National Character”, 2015, (January 30, 2024), https://www.goodreads.com/book/show/396062
3. Zenon, N. S., “These Strange Americans, a Sense of Humor”, 2016, (January 30, 2024), http://www.langust.ru/review/xeno-us4.shtml#top

Ներկայացվել է՝ 06.03.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 13.05.2024թ.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

# ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

https://doi.org /10.59982/18294359-24.15-ca-17

*Անահիտ Սերգեյի Աբրահամյան*
*դոցենտ*
*ԵՊՀ, Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն*
*anahit.abrahamyan@ysu.am*

*Ամփոփագիր*

*Ճարտասանական խոսքը, լինելով մարդկության մշակութային ժառանգության դրսևորումներից մեկը, կրել է մարդկության պատմական զարգացման, մարդու մտածողության, քաղաքական միջավայրի, արժեհամակարգերի փոփոխությունների ազդեցությունը: Հոդվածում ուսումնասիրվում են պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակության զարգացման որոշակի միտումներն ու առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը ճարտասանական մշակույթի վրա: Բացահայտվում են նաև հրապարակային ելույթի ընկալման և գնահատման տարբերությունները, քննվում են այդ տարբերությունների պատճառները՝ պայմանավորված նրանով, թե արդյոք այն ընթերցվում է, լսվում, թե՝ դիտվում:*

*Անդրադարձ է կատարվում այսօրվա հրապարակախոսությանը բնորոշ առանձնահատկություններին, որոնցից հարկ է առանձնացնել խոսքի հուզական երանգավորումը, ճկունությունը, մատուցման պարզությունը, ոգեշնչող, հստակ, հակիրճ ձևակերպումները, հուզական կարգախոսների օգտագործումը և ելույթի ընթացքում դրանց կրկնությունը, հռետորի անձնական փորձից օրինակներ բերելը, ապրումակցում դրսևորելը, դիտողական պարագաներ, նաև տեսանյութեր ցուցադրելը և այլն: Դիտարկվում է վերջին տարիներին ավելի ու ավելի մեծացող միտումը՝ հրապարակային խոսք գրելիս արհեստական բանականության օգնությանը դիմելը՝ այն առավել ազդեցիկ, համոզիչ ու կատարյալ դարձնելու նպատակով: Հոդվածում հիմնավորվում է նաև ճարտասանական խոսքին տիրապետելու կարևորությունը մասնավորապես հայ մասնագետների համար՝ մեր խոսքը աշխարհին լսելի և ընկալելի դարձնելու առումով:*

***Հիմնաբառեր***. *ճարտասանություն, հրապարակային ելույթ, ճարտասանական վերլուծություն, խոսքի համոզչականություն, արհեստական բանականություն*

***Ներածություն***

Ճարտասանական մշակույթը երկար դարերի պատմություն ունի և կրում է մարդկության պատմության զարգացման միմյանց հաջորդող փուլերի կնիքն ու ազդեցությունը: Այսօր, առավել քան երբևէ, ողջ աշխարհում կարևորվում է ճարտասանական (հռետորական) խոսքը՝ հնարավորություն տալով այն կատարելապես տիրապետող մարդկանց հասնելու աննախադեպ բարձունքների, նվաճելու հազարավոր, հարյուր հազարավոր մարդկանց վստահությունն ու համակրանքը: Ուստի արդիական է ու կարևոր՝ քննել ճարտասանական խոսքի ողջ ընթացքը՝ հասկանալու համար նրա զարգացման միտումները: Սույն աշխատանքի նպատակն է՝ պատմական ակնարկից զատ, դիտարկել, վեր հանել ներկայիս հռետորական խոսքին բնորոշ առանձնահատկությունները: Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական, վերլուծության և համադրության, համեմատական մեթոդները:

***«Խոսիր, որ ճանաչեմ քեզ» Սոկրատես***

Սկսած մարդկության պատմության հնագույն ժամանակներից՝ տարբեր է եղել ճարտասանական խոսքի գնահատականն ու դրա կարևորության ընկալումը տարբեր մտածողների մոտ: Արիստոտելը, ով համարվում է ճարտասանության առաջին տեսաբանը, խիստ կարևորում էր ճարտասանությունը, որը, նրա կարծիքով, տրամաբանության և տրամախոսության հետ փիլիսոփայության երեք առանցքային տարրերից մեկն է: Գիտնականները համակարծիք են, որ նա՛ է իր «Հռետորիկա» աշխատության մեջ մշակել ճարտասանական խոսքարվեստի հիմունքները [Bizzell et al., 238]:

Պլատոնը, ի տարբերություն իր տաղանդավոր աշակերտի՝ Արիստոտելի, ընդհանուր առմամբ քննադատաբար էր դիտարկում ճարտասանական խոսքը, ելույթը և համարում էր, որ այն միջոց է կառավարելու մարդկանց՝ ազդելով նրանց հուզական աշխարհի վրա և չներկայացնելով իրական փաստերը:

Դարերի ընթացքում ճարտասանական խոսքը և դրա դրսևորումներից մեկը՝ հրապարակախոսական ելույթը, չափազանց մեծ փոփոխություններ են կրել՝ դառնալով ժամանակին համահունչ, ենթարկվելով ժամանակի փոփոխվող պահանջներին և համապատասխանեցվելով հասարակության նորմերին ու մշակութային արժեքներին:

Անտիկ աշխարհում Արիստոտելը և Ցիցերոնը մշակել էին ճարտասանական խոսքարվեստի տեխնիկա՝ հմտություններ, որոնց շարքում հատկապես կարևորվում էին պերճախոսությունը, խոսքի համոզչականությունը և հրապարակախոսական ելույթ գրելու արվեստին տիրապետելը: Այդ ժամանակաշրջանում և մինչև գրերի գյուտը չափազանց մեծ էր հրապարակային խոսքի դերը նաև տեղեկություններ տարածելու, մշակութային ժառանգությունը պահպանելու, մարդկանց համախմբելու առումով:

Հին Հունաստանում, մասնավորապես Աթենքում, ճարտասանական խոսքը կարևորվում էր նաև մեկ այլ բնագավառում. դատավարությունների ժամանակ՝ մ.թ.ա. 5-րդ դարի կեսերից սկսած, անձի անմեղությունն ապացուցելու կամ մեղադրական ելույթի համար հաճախ լսում էին ոչ թե իրադարձության բուն մասնակիցներին՝ մեղադրյալին և մեղադրողին, այլ վերջիններիս կողմից շատ բարձր գումարով վարձված մարդկանց, որոնք, մրցելով միմյանց հետ և ցուցադրելով իրենց ճարտասանական խոսքի

հմտությունները, իրենց համոզիչ ելույթի շնորհիվ որոշիչ դեր էին խաղում՝ ազդելով դատավարության ելքի վրա: Հաճախ դատը շահում էր ոչ թե անմեղը, այլ առավել հմուտ հռետոր վարձած կողմը: Այս աշխատանքը վստահվում էր սոփեստներին, որոնք ճարտասանական խոսքի գիտակներ և ուսուցիչներ էին: Նրանք շատ բարձր վարձատրությամբ ճարտասանություն էին սովորեցնում, բազմաբնույթ (քաղաքական, իրավական, զվարճանքի համար նախատեսված) ելույթներ էին գրում, իրենք էին հանդես գալիս ելույթներով՝ հաճախ արժանանալով ժամանակի մեծ փիլիսոփաների, մտածողների արդարացի քննադատությանը, քանի որ վերջիններս համարում էին, որ սոփեստների ելույթներում բովանդակությունը ստորադասվում էր ձևին, իսկ ելույթների շարժառիթը հաճախ շահադիտական էր լինում:

Ճարտասանական խոսքարվեստը նշանակալի փոփոխություններ է կրել և աստիճանաբար անկում ապրել միջնադարում (4-14-րդ դարերում): Այդ փոփոխություններին և անկմանը նպաստող գործոններից էին քաղաքական պայմանները, երբ այլևս անցյալ ժամանակաշրջանին բնորոշ ճարտասանությունը չէր խրախուսվում: Ճարտասանության ուսուցումը պահպանվում էր, սակայն այժմ կարևորվում էին ոչ այնքան գեղեցիկ խոսելն ու գրելը, որքան նամակներ, խնդրագրեր և այլևայլ իրավական փաստաթղթեր կազմելը, քարոզներ ու աղոթքներ կարդալը, օրենքներն ու Աստվածաշունչը մեկնաբանելը և այլն: Հարկ է նշել նաև, որ գրավոր խոսքը վերահսկվում էր եկեղեցու կողմից, իսկ նման պայմանները հեռու էին ճարտասանական խոսքարվեստի համար նպաստավոր լինելուց [Glenn, 194]:

Տպագրության գյուտը 15-րդ դարում արմատական հեղաշրջում մտցրեց Եվրոպայում՝ դառնալով փոփոխությունների ազդարարը: Մասնավորապես, «թերթերի հրատարակիչները և լրագրողները, որոնք բացահայտում էին կառավարության գաղտնիքները, դրանով իսկ քաղաքականության շուրջ հանրային բանավեճերի, քննարկումների համար պայմաններ էին ստեղծում» [Helmers et al. 3]: Չխորանալով այն հարցի մեջ, թե որքանով էր քննարկվող ժամանակաշրջանի մամուլը իրապես հակառակվում և որքանով՝ ծառայություններ մատուցում կառավարությանը, հարկ ենք համարում ընդունել դրա դրական դերը վերոնշյալ հարցում: Եվրոպայում եկեղեցու ազդեցության սահմանափակումը ևս բարենպաստ էր ճարտասանական խոսքի վերականգնման համար:

Մինչև 16-րդ դարը Եվրոպայում ճառերը, ելույթները գրվում և ներկայացվում էին հունարեն կամ լատիներեն: Վերածննդի դարաշրջանում նախ Իտալիայում, Ֆրանսիայում, ապա նաև Անգլիայում ճարտասանական խոսքարվեստը սկսեց ուսուցանվել, ելույթները սկսեցին գրվել և ներկայացվել մայրենի լեզուներով, ինչը մեծապես բարձրացրեց ազգային լեզուների վարկանիշը:

17-րդ դարում կրկին առաջնային դարձան խոսքի տպավորիչ հնարքները, պատկերները, որոնք ուժեղացնում էին ազդեցությունը ունկնդրի հուզական աշխարհի վրա և որոնցով էլ անցյալ դարերում բնութագրվել և գնահատվել էին ելույթի ոճն ու արժեքը: Սակայն այժմ արդեն դրանց արժեքը գնահատվում էր ոչ այնքան որպես ունկնդրի հուզական աշխարհի վրա ազդեցությունը մեծացնելու միջոց, որքան որպես ելույթի հեղինակի կամ հռետորի հոգեկան աշխարհի

դրսևորում: Այս ժամանակաշրջանում, այնպես, ինչպես անտիկ աշխարհում, սկսեց խիստ կարևորվել նաև ճարտասանի խոսելաոճն ու առոգանությունը: Անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքը գտնում էր, որ բառերը գաղափարների, մտքերի նշան են, իսկ խոսքի ելևէջները, երանգավորումը՝ բուռն զգացմունքների [Corbett, Connors, 505-506]:

Ճարտասանական խոսքարվեստի անկումը սկսվեց 18-րդ դարի կեսերին, երբ նվազեց հետաքրքրությունը դասական ճարտասանության ոճի հանդեպ, երբ ելույթում օգտագործված գեղեցիկ, տպավորիչ, հուզական պատկերները սկսեցին ստորադասվել ելույթի զուտ բովանդակային, տրամաբանական արժեքին: Աստիճանաբար ավելի ու ավելի քիչ դպրոցների և համալսարանների ուսումնական ծրագրերի մեջ էր ընդգրկվում Ճարտասանական խոսք առարկան: Այս միտումները առավել արտահայտվեցին 19-րդ դարում:

Իրավիճակը կտրուկ փոխվեց 20-րդ դարի սկզբում՝ վերականգնվեց հետաքրքրությունը ճարտասանական խոսքի նկատմամբ: Օրինակ, ԱՄՆ-ում սկսեցին մտածել Հռետորական խոսք դասավանդելու ծրագրերի մշակման շուրջ՝ դպրոցներում և բուհերում այդ առարկան ընդգրկելու համար: Եվ նրանց հայացքներն ուղղվեցին դեպի դասական ճարտասանական խոսքարվեստն ու իր ավանդույթները: Միևնույն ժամանակ, բնականաբար, այդ գիտությունը 20-րդ դարում չէր կարող ընդունվել արիստոտելյան իր բոլոր երանգներով ու առանձնահատկություններով: Դասական ճարտասանական խոսքարվեստն իր ավանդույթներով դիտարկվում էր քննադատաբար. առանցքային կարևորություն էր տրվում ճարտասանությանը՝ զուտ որպես հաղորդակցման, շփման համար նախատեսված հղկված, կատարելագործված միջոցի:

Նոր ժամանակներում Հռետորական խոսք առարկայի դասավանդման գլխավոր նպատակը ոչ թե բացառիկ ճարտասանական հնարքներով հագեցած, հուզարտահայտչականությամբ փայլող և ունկնդրին շլացնելու և հիացնելու ձիրքին տիրապետել սովորեցնելն էր, այլ շատ ավելի գործնական խնդիր՝ կարողանալ համոզել ունկնդիրներին իր ասելիքի ճշմարտացիության մեջ՝ շատ դեպքերում մղելով նրանց որոշակի գործողությունների, քայլերի: Բերկլիի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Սլոունի բնորոշմամբ՝ նոր հռետորական արվեստը փաստարկումների տեսություն է, որի առարկան դիսկուրսային, խոսքային միջոցների ուսումնասիրությունն է, իսկ նպատակը՝ մարդկանց գիտակցության մեջ առաջացնել և ուժեղացնել հավատարմությունը ներկայացվող դրույթներին: Ավելին՝ խոսքային պատկերներն աստեղ կարևոր են ոչ թե իրենց էսթետիկ արժեքով, այլ նրանով, թե որքանով մեծ է դրանց համոզչականության ուժը [Rhetoric]:

20-րդ դարի երկրորդ կեսին և 21-րդ դարի սկզբում է՛լ ավելի մեծացավ ճարտասանական խոսքի հանդեպ հետաքրքրությունը և մարդու գործունեության տարբեր բնագավառներում (քաղաքական, իրավական, վարչական և այլն) այդ խոսքի նրբություններին տիրապետելու բացառիկ կարևորության գիտակցումը: Ուշագրավ է, որ ԱՄՆ-ում համարում են, որ հաջողակ ամերիկացուն բնութագրող հատկանիշներից է սեփական կարծիք ունենալը, փաստարկներով իր տեսակետը ապացուցելու ունակությունը և ունկնդրի համաձայնությունը ձեռք բերելու կարողությունը: Այսպիսով՝ հռետորական խոսքը միտված է նախ համաձայնություն ձեռք բերելուն և այն պահպանելուն, և ապա՝ ձեռք բերված համաձայնության շուրջ գործնական որոշումներ կայացնելուն [Марченко, 35]: Այստեղից էլ՝ Հռետորական խոսք առարկայի խիստ գործնական ուղղվածությունն ԱՄՆ-ում:

# ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ոչինչ չի կարող փոխարինել կենդանի խոսքին: Այս ճշմարտության գիտակցումն է մղում իրենց ճարտասանական խոսքը հղկելու ու կատարելագործելու հարցում ջանք չխնայել այն մարդկանց, ովքեր քաղաքականության մեջ գերիաջողությունների հավակնություն ունեն: Մենք հաճախ ականատես ենք լինում, թե ինչպես նախագահական ընտրությունների ժամանակ հաղթում է այն թեկնածուն, ում նախընտրական ելույթները ամենատպավորիչն ու կատարյալն են: Բերենք միայն մեկ օրինակ: Շատ մասնագետներ են համակարծիք, որ Բարաք Օբաման նախագահ չէր դառնա, եթե չլինեին իր հղկված, դիպուկ, համոզիչ, իրենց հուզականությամբ ունկնդիրներին գերող ելույթները: Այդ ելույթների գագաթնակետը կարելի է համարել նրա 2008թ. ընտրություններում իր հաղթանակից հետո հնչած «Այո, մենք կարող ենք» (“Yes, We Can”) անվանված ելույթը: Սովորողների ճարտասանական խոսքը հղկելիս կարելի է անդրադառնալ այդ ելույթի յուրաքանչյուր պարբերությանը՝ հաջորդաբար վերլուծելով դրանք և բացատրելով արտահայտչամիջոցների դիպուկ և տեղին օգտագործումը հռետորի կողմից:

Որոշ տեսաբաններ, ինչպես օրինակ, Ավստրալիայի համալսարանների լեզվի և գրականության ասոցիացիայի նախագահ Թոմ Քլարքը, պնդում են, որ հրապարակախոսական ելույթը բանաստեղծական արվեստի (poetics) տեսակ է: Քլարքը համարում է, որ լեզվի էսթետիկական չափանիշները լեզվի էսթետիկական չափանիշներ են, եթե դրանք առկա են՝ անկախ նրանից, թե դրանց գործածման վերջնարդյունքը մենք անվանում ենք բանաստեղծություն թե քաղաքականություն: Զուգահեռներ տանելով մի շարք բանաստեղծությունների և բանաստեղծական տարրերով հագեցած հրապարակախոսական ելույթների միջև՝ նա հանգում է այն եզրակացության, որ պետք է ընդունել, որ այդ երկուսը նույն ժանրին են պատկանում: [Clark, 28]

Անհերքելի է, որ հրապարակախոսական ելույթների լավագույն նմուշները, որոնց շարքում՝ Մարտին Լյութեր Քինգի «Ես երազանք ունեմ» (“I Have a Dream”), Ուինսթոն Չերչիլի ելույթները Համայնքների պալատում 1940 թվականին, որոնցից կառանձնացնեինք հատկապես երկուսը՝ «Արյուն, տքնաջան աշխատանք, արցունքներ և քրտինք» (“Blood, Toil, Tears and Sweat”) և «Ամենափառավոր ժամը» (“Finest Hour”) , Ջոն Քենեդիի «Ես բեռլինցի եմ» (“Ich bin ein Berliner”), փայլում են բանաստեղծական միջոցների հագեցվածությամբ, շլացնում վառ, ցայտուն, ազդեցիկ ու հուզիչ պատկերներով: Եվ այդուհանդերձ, անգամ լավագույն ճարտասանների լավագույն հրապարակախոսական ելույթները բանաստեղծությանը, բանաստեղծական արվեստին հավասարեցնելը համարում ենք ծայրահեղություն:

Հրապարակային ելույթների՝ ունկնդիրների վրա թողած ազդեցության հետ կապված մեկ դիտարկում ենք ցանկանում կատարել: Տողերիս հեղինակը իր դասավանդման երկարամյա փորձառության ընթացքում բազմիցս իրականացրել է մի դիտափորձ՝ հավաստիանալու համար, որ ելույթի ազդեցիկության չափը, աստիճանը իրոք փոխվում է՝ կախված այն բանից, թե արդյոք մարդը կարդում է այն, լսում, թե՝ դիտում: Աշխատանքն ընթանում է երեք փուլով:

1. Ունկնդիրներին խնդրվում է որոշակի միավորների շրջանակում գնահատել նախապես ընտրված 3-4 ելույթ՝ դրանք ընթերցելուց հետո:

2.Միացվում է նույն ելույթների ձայնագրությունը և կրկին գնահատվում են ելույթները՝ դրանք լսելուց հետո:

3.Ունկնդիրների դատին են ներկայացվում նույն ելույթների տեսաձայնագրությունները և դրանք գնահատվում են երրորդ անգամ:

Գնահատման հաշվառումը ցույց է տալիս, որ առանց բացառության բոլոր դեպքերում միավորները ոմանց մոտ փոխվում են յուրաքանչյուր հաջորդ փուլում: Եվ դա միանգամայն բնական է:

1. Հրապարակախոսական ելույթը կարդալիս ընթերցողի դատին է ներկայանում հռետորի մտքերի, զգացողությունների, վերլուծությունների գրավոր շարադրանքը: Այդ շարադրանքից ստացած տպավորությունը խորանում է, եթե հռետորը հմտորեն ու տեղին է օգտագործում լեզվի պատկերավորությունը, հագեցնում է (բայց ոչ՝ գերհագեցնում, ինչպես դա հաճախ արվում էր Անտիկ աշխարհում) իր ելույթը ճարտասանական խոսքի հուզարտահայտչականության ոճական հնարքներով (փոխաբերություն, փոխանունություն, չափազանցություն, բառախաղ, մակդիր, հեգնանք, նրբաբանություն և այլն): Միննույն ժամանակ շատ կարևոր է, որ հռետորական հնարքների առատության մեջ չկորչի ասելիքը՝ ուղերձը: Անգամ Ջոան Դետսը, ով վերնագրել է իր գրքերից մեկը «Կարևոր է ոչ թե այն, թե ինչ ես ասում, այլ այն, թե ինչպես ես ասում» (“It’ Not What You Say, It’s How You Say It”), գրքի հենց առաջին տողերում ինքն իրեն ուղղում է և խոստովանում, որ գրքի վերնագրում կա չափազանցություն, որովհետև այն, թե ինչ ես ասում, իրականում բացարձակ կարևոր է [Detz, 3]:

Ուղերձի, ասելիքի կարևորությունը ընդգծել և ընդգծում են հռետորական խոսքի մասին գրող բոլոր հեղինակները՝ գտնելով, որ հռետորական խոսքում «ինչ»-ը երբեք չպետք է ստորադասվի «ինչպես»-ին: Իսկ «ինչ»-ի լեզվական ձևակերպման համար բացարձակ անհրաժեշտություն է գտնել և կիրառել ամենաաստույգ և ազդեցիկ բառը, արտահայտությունը, առանց որի խոսքը ունկնդրին հասցնելը, առավել ևս՝ նրան համոզելը, պարզապես անհնար է: Բառերը տեղին գործածելու կարողությունը Ցիցերոնը անվանել է պերճախոսության հիմքն ու հենքը [Цицерон, 235]:

2. Փորձի երկրորդ փուլում, ինչպես արդեն նշել ենք, ունկնդիրները լսում են հռետորի ելույթը: Այստեղ ավելանում է մի հզոր գործոն՝ հռետորի ձայնը: Միննույն ժամանակ հույժ կարևորվում է հուզականության չափը նրա խոսքում: Ինչպես իրավացիորեն նկատում է Վալերի Միրզոյանը, «Ճարտասանը պիտի կարողանա փոքր բաների մասին խոսել համեստորեն, միջին բաների մասին՝ հանդարտորեն, մեծ բաների մասին՝ վեհորեն: Եթե մանր հարցի մասին որևէ մեկը բարձրագոչ բաներ է ասում, առանց ունկնդիրներին նախապատրաստելու բոցավառ ճառ է սկսում, այն տպավորությունն է ստեղծվում, թե նա հարբեցողության է տրվել սթափների մեջ»: Ապա հեղինակը հավելում է. «Պետք է տիրապետել սեփական ձայնին: Ոչինչ ավելի զորեղ չէ ճարտասանի ձայնից: Միմիայն արտահայտիչ արտասանությամբ շատ ճարտասաններ երբեմն գերազանցել են իրենցից ավելի օժտված, սակայն ավելի վատ արտասանության տեր ճարտասանների» [Միրզոյան, 37-38]: Այսպիսով, միանգամայն բնական է, որ որոշ ունկնդիրների քվեարկության մեջ փոփոխություններ են դիտարկվում՝ ելույթների ձայնագրությունը լսելուց հետո: Հռետորի՝ իր ձայնին տիրապետելու արվեստը քվեարկության ժամանակ որոշիչ դեր է կատարում:

3. Դիտափորձի երրորդ փուլը, ինչպես հիշում ենք, քվեարկությունն է՝ արդեն տեսաերիզները դիտելուց հետո: Ելույթներից ստացած նախկին տպավորությանը ավելանում է մի շատ ծանրակշիռ ու որոշիչ գործոն՝ պատկերը: Առաջնային պլան են մղվում ելույթի ժամանակ հռետորի կեցվածքի, հարալեզվական նշանների՝ շարժանշանների (ժեստերի) և դիմախաղի արտահայտչական նրբություններին տիրապետելը: Գոյություն ունի գիտության մի ճյուղ՝ շարժումագիտություն (kinesics), որն ուսումնասիրում է մարմնի շարժումների ազդեցությունը հաղորդակցման վրա: Պարզվում է, որ առօրյա կյանքում տեղեկությունների 80%-ը մարդը ստանում է տեսողությամբ և միայն 16%-ը՝ լսողությամբ: Այստեղից էլ՝ հռետորի կողմից հարալեզվական նշաններին տիրապետելու բացառիկ կարևորությունը: Հռետորը պետք է իմանա, որ իր շարժումները կարող են իրենց ուրույն իմաստն արտահայտել՝ անկախ իր խոսքից: Դրանք կարող են խոսքի հակառակ իմաստն արտահայտել, կարող են ուժեղացնել նրա խոսքի ազդեցությունը և կարող են ընդհանրապես զրկել խոսքն իմաստից: Ունկնդիրների հայացքից չի վրիպում ոչ մի շարժում, որը մատնում է հռետորի անվստահությունը, չափազանց մեծ ինքնավստահությունը, անտարբերությունը, նյարդայնությունը և այլն: Ձեռքերի անիմաստ շարժումները, կեղծ դիմախաղը և նման այլ վրիպումներ կարող են թուլացնել լավագույն ելույթի ազդեցությունը [Марченко, 95]: Եվ այսպես, մեր դիտափորձի երրորդ փուլում ևս հռետորների խոսքի գնահատման արդյունքները որոշ դեպքերում փոխվում են: Միշտ չէ, որ գեղեցիկ խոսք ունեցող հռետորը տիրապետում է նաև հարալեզվական նշանների արտահայտչական նրբություններին:

Այսօրվա հրապարակախոսությանը բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, որոնցից հարկ ենք համարում առանձնացնել խոսքի հուզական երանգավորումը (ունկնդիրների համար խոսքը առավել ազդեցիկ դարձնելու նպատակով), ճկունությունը (ունկնդիրների տարբեր խմբերի տրամադրությունը հաշվի առնելու առումով), մատուցման պարզությունը՝ երկարաշունչ նախադասությունների փոխարեն տպավորիչ, հստակ, հակիրճ ձևակերպումները, հուզական կարգախոսների օգտագործումը և ելույթի ընթացքում դրանց կրկնությունը, հռետորի անձնական փորձից օրինակներ բերելն ու կատակելը, ապրումակցում դրսևորելը, դիտողական պարագաներ, նաև տեսանյութեր ցուցադրելը և այլն:

Հռետորական խոսքի զարգացման միտումների մասին խոսելիս չենք կարող չանդրադառնալ այսօրվա մի կարևոր իրողության: Վերջին տարիներին մեծ չափերի է հասնում արհեստական բանականության անսահմանափակ հնարավորությունների օգտագործումը՝ նաև հրապարակախոսական ելույթներ գրելու նպատակով: Վայրկյանների ընթացքում արհեստական բանականությունն առաջարկում է անհրաժեշտ մտքերով, հուզարտահայտչականության ոճական հնարքներով և համոզիչ փաստարկներով հագեցած տեքստ: Հաշվի է առնվում, թե ովքեր են լինելու հռետորի հավանական ունկնդիրները, ինչպիսի ազդեցություն է ակնկալվում ունենալ նրանց վրա: ԱԲ-ը կարող է ներկայացնել որևէ խնդրի շուրջ մարդկության լավագույն մտքերի փորձարարական-հավաքական նմուշներ, կարող է ապշեցուցիչ ճշգրտությամբ նմանակել ցանկացած գրողի, հրապարակախոսի գրելաոճը: Երբ ելույթը պատրաստ է, հռետորի ցանկության դեպքում անցում է կատարվում նրա խոսքը հղկելու փուլին: Վերջինիս խոսքի թերությունները, անվստահության զգացումը այլևս խոչընդոտ չեն: Արհեստական բանականություն – խորհրդատուի օգնությամբ հղկվում է հռետորի ձայնը, ձայներանգի

ելևէջները, կեցվածքը, դիմախաղը, շարժումները, առաջարկվում են բեմական վախը հաղթահարելու ամենաարդյունավետ ուղիները [Projectcub!cle]:

Ինչևէ, արհեստական բանականության զարգացման այսօրվա փուլում առկա են որոշ մարտահրավերներ, որոնց անդրադառնում են թե՛ մասնագետները, թե՛ օգտատերերը: Դրանցից առաջինը առաջարկվող նյութի հավաստելիության, ճշգրտության հետ է կապված: Արհեստական բանականությունը նման վրիպումներից զերծ չէ: Բացի այդ, իր ելույթում հռետորը պետք է հաշվի առնի արհեստական բանականությունն օգտագործելու բարոյական, հասարակական հետևանքները: Արհեստական բանականության ազդեցության ներքո խոսքարվեստը անկասկած փոփոխությունների է ենթարկվում, սակայն հրապարակախոսը պետք է կարողանա պահպանել կարևորագույնը՝ իրապես մարդկային կապը իր ունկնդիրների հետ իր ոգևորիչ, միայն իրե՛ն հատուկ ձայնով և խոսքով, ինչը առաջնային է ելույթի հաջողության համար: Ժամանակը ցույց կտա, թե ինչպիսին կլինեն արհեստական բանականության օգնությամբ հրապարակային ելույթներ գրելու և դրանց մատուցումը կատարելագործելու զարգացումները:

Միանգամայն ակնհայտ է, որ հրապարակախոսությունն այսօր աննախադեպ կարևորություն է ձեռք բերել ողջ աշխարհում: Այժմ համացանցի և թվային տեխնիկական միջոցների շնորհիվ չափազանց մեծ հնարավորություններ և հեռանկարներ են ստեղծվել ճարտասանական նրբություններին տիրապետող և այդ ոլորտում այսօրվա միտումները հաշվի առնող մարդկանց համար՝ հասնելու մեծ բարձունքների, նվաճելու հազարավոր, հարյուր հազարավոր, եթե ոչ միլիոնավոր մարդկանց վստահությունն ու համակրանքը: Նման մարդկանց խոսքը միշտ լսվում է, վստահությունը նրանց հանդեպ անսահման մեծ է:

Համոզված ենք, որ մեր երկրի համար մարտահրավերներով լի այսօրվա իրականության մեջ խիստ կարևոր է, որպեսզի մեր տարբեր բնագավառների առանցքային մասնագետները հնարավորություն ունենան զարգացնելու, մշակելու իրենց ճարտասանական հմտությունները: Օրվա հրամայական է նաև բուհերի գոնե որոշ ֆակուլտետներում պարտադիր առարկա դարձնել Հռետորական խոսքը: Դա մեր ձայնը աշխարհին լսելի դարձնելու լավագույն հնարավորությունը կլինի:

***Եզրակացություն***

Այսպիսով, հրապարակային խոսքը, որը ձևավորվել է մարդկության պատմության հնագույն ժամանակաշրջանում, իր մեջ ներառում է ոճերի, ձևաչափերի, արտահայտչամիջոցների մեծ բազմազանություն: Ճշմարիտ է, համոզելու և հաղորդակցվելու հիմնական սկզբունքները դարերի ընթացքում հիմնականում պահպանվել են, սակայն տեխնիկական առաջընթացի, պատմական ու մշակութային զարգացման պայմաններում շարունակ փոփոխվել և փոփոխվում են ելույթներ գրելու, դրանք ներկայացնելու, նաև դրանց ընկալման յուրահատկությունները:

Առավել ևս, աննախադեպ փոփոխությունների, գիտության և տեխնիկայի սրընթաց զարգացման այսօրվա դարաշրջանում խիստ կարևոր է ճիշտ հասկանալ և գնահատել հրապարակային խոսքի արդի միտումներն ու առանձնահատկությունները՝ խոսքն առավել նպատակային, համոզիչ, թիրախային դարձնելու համար: Գտնում ենք, որ հայ մասնագետների

կողմից ճարտասանական խոսքին տիրապետելը այսօր հրամայական պահանջ է՝ մեր երկրի առջև ծառացած խնդիրները բարձրաձայնելու և պարզաբանելու առումով:

## CHARACTERISTICS AND TRENDS IN EVOLUTION OF RHETORIC

***Anahit Abrahamyan***
*Associate Professor*
*YSU, Chair of Diplomatic Service and Professional Communication*
*anahit.abrahamyan@ysu.am*

***Abstract***

Being a manifestation of the cultural heritage of humanity, rhetoric has born the impact of the evolution of humanity, human thought, political environment and changes in value systems. The article deals with the specific trends and peculiarities of the evolution of human society in different historical periods and their impact on rhetoric. Differences in perception and evaluation of public speeches depending on whether they are read, listened to or watched are also brought to light in the article.

The article considers peculiarities that are typical to today’s public speaking, among which emotional appeal, flexibility, simplicity of presentation, inspiring, clear-cut and brief wording, usage and repetition of emotional slogans, storytelling, empathy, visual and multimedia elements can be singled out. In recent years there can be observed an ever-growing tendency to make use of the artificial intelligence for drafting speeches to make the presentation more impressive, persuasive and perfect. At the end of the article the importance of mastering public speaking is emphasized as exceptionally essential for the specialists of our country.

**Keywords:** *Oratory, public speech, rhetorical analysis, persuasiveness of speech, artificial intelligence*

### *Գրականության ցանկ*

1. Bizzell, Patricia; Herzberg, Bruce. The Rhetorical Tradition: Readings from Classical Times to the Present. 2nd ed., Boston, Bedford/St. Martin's, 2001, 1673 p.
2. Cheryl Glenn. Rhetoric Retold: Regendering the Tradition from Antiquity Through the Renaissance. Southern Illinois University Press, 1997, p. 248.
3. Print and Power in Early Modern Europe (1500-1800). Edited by Helmer Helmers, Nina Lamal, Jamie Cumby. Boston. Brill Publishers, 2021, p. 462.
4. Edward P. J. Corbett, Robert J. Connors. Classical Rhetoric for the Modern Student. Oxford University Press, 1999, p. 562.
5. Rhetoric: The Renaissance and after. Toward a New Rhetoric. Britannica, 18 փետրվարի, 2024, https://www.britannica.com/topic/rhetoric/The-Renaissance-and-after
6. О.И. Марченко. Основы красноречия. Риторика как наука и искусство убеждать. Издательство «Форум», 2016, с. 208.

7. Tom Clark. Stay on Message: Poetry and Truthfulness in Political Speech. North Melbourne: Australian Scholarly Publishing, 2012, 146 p.
8. Joan Detz. It's Not What You Say, It's How You Say It: Ready-to-Use Advice for Presentations, Speeches, and Other Speaking Occasions, Large and Small. New York: St. Martin's Press, 2000, p. 192.
9. Марк Туллий Цицерон. Три трактата об ораторском искусстве. Ред. М. Л. Гаспарова. Пер. Ф. А. Петровского. Москва. Издательство «Наука», 1972, с. 472.
10. Վալերի Միրզոյան: Ճարտասանություն: Երկրորդ, լրացված հրատարակություն: Երևան: Իրավունք, 2006, էջ 458:
11. Projectcub!cle, Angela Rita McGregor. Artificial Intelligence & Machine Learning. September 15, 2023, 11 փետրվարի, 2024, https://www.projectcubicle.com/the-future-of-public-speaking-ai-speech-generators-on-stage/

Ներկայացվել է՝ 12.03.2024թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 13.05.2024թ.

# APPLICATION OF NEW INFORMATION TECHNOLOGIES IN THE PROCESS OF PEDAGOGICAL SOFTWARE

**https://doi.org /10.59982/18294359-24.15-ag-18**

***Gagik Avetisyan***
*EUA, Chair of Design*
*avetisyan.gagik.93@mail.ru*

***Abstract***

The use of new information technologies in practically every field of activity in modern society defines the need for the development of elements of students' creative imagination. In the digital environment, the cognitive motivation of students is strengthened. The changes introduced by new information technologies in the development of students can have a cognitive, emotional, and motivational nature and affect their temperament and individual characteristics. One of the essential arguments accompanying the introduction of new information technologies in teaching is directly related to the increase in their educational and cognitive activity, which is expressed in the complexity of educational tasks, considering the capabilities of learners, as well as the choice of the maximum learning rate, the effectiveness of control, the increase of objectivity, and especially in the process of organizing pedagogical software tools.

Partial methodologies based on the application of new information technologies are used in the process of pedagogical software tools, depending on the educational goals or educational situations. In one case, it is necessary to understand the needs of the learner more deeply; in another case, the analysis of knowledge in the field of the relevant subject is important, as well as accounting for the psychological principles of learning. Accordingly, the use of new information technologies in the field of education as a means of disseminating information contributes to faster and fuller assimilation and dissemination of the material.

***Keywords:*** Information technologies, modern education, software, digital environment, pedagogy, learners, concept.

## ***Introduction***

The implementation of new information technologies in education is one of the most complex tools for qualitative change in it. The use of new information technologies in the process of developing pedagogical programs is a very current topic. Relevance of new information technologies in the modern educational environment contemporary use of new information technologies, including technological advances, personalized learning, advanced and interactive learning, accessibility and inclusion, collaboration and communication. The integration of new information technologies into the development of educational programs has the potential to improve the quality, efficiency and accessibility of education, which makes it an important and significant topic in the field of education and educational technologies. The purpose of the presented article is to identify the reasons for the modernity of using new information technologies in educational processes and the conditions of expediency in the context of pedagogical software tools. Among them, the fact that the general technical preparation of students for the object of the researched problem should meet the rapidly

changing demands of current production is of primary importance, in addition, the results of the experiment attest to the trainees' increased activity, the value of independent work under information-comfortable conditions, and the best possible educational standards.

In particular, the use of new information technologies (IT) in the development of educational software is an important area of innovation and the development of educational methods. The scientific novelty of the research is primarily related to the development of adaptive learning systems, and the integration of tools based on artificial intelligence, such as intelligent learning systems (ITS).

All this can transform traditional educational paradigms, making learning more personalized, interactive and accessible. The scientific novelty of this research lies in its ability to use advanced technologies to solve modern problems in education, thereby creating a more effective and inclusive learning environment. The complete theoretical concept of learning new information technologies can adequately represent the essence of the problems it covers only if the didactic and empirical methods related to the organization of educational activities using innovative means in the most important pedagogical, psychological and special conditions are synthesized.

The study was conducted with the participation of students from Yerevan State College of Informatics. The reliability of the research results was justified by the fundamental provisions of the work methodology, which was ensured both theoretically and by a comprehensive analysis of test scientific experiments, in conditions of adequate consideration of the age, individual and artistic-pedagogical characteristics of students.

In order to support the argument that the issue of integrating new information technologies into the classroom is legitimate, the question's origins are examined. This involves comprehending the notion of digitization of education, incorporating contemporary information resources into the classroom, developing computer technologies for education, assessing the efficacy of pedagogical software training, determining the importance of the educator in the context of information technology, and keeping up with the rapidly advancing fields of artificial intelligence (AI) and software development.

### *The role of new information technologies in the field of education*

The term "information" translated from Latin (informatio) means explanation, clarification. Information as a concept was developed by the American scientist Norbert Wiener, who noted: "Information is information, not matter or energy. Matter and energy do not disappear anywhere, but only pass from one form to another. In contrast, information can appear and disappear" [Wiener, 32]. Thus, the great scientist of his time emphasized the special and important role of information in the context of other processes, which became a stable platform for further research and analysis by specialists.

In the context of the study of information technologies, the principle of concept modernity is essential. According to UNESCO's assessment: "Information technology is a set of interconnected scientific, technological, engineering disciplines that study the methods of effective organization of the work of people involved in the processing and storage of information, the methods of organization and interaction with computer equipment, people and production equipment, their practical applications, as well as all this social, economic and cultural problems related to it" [Серебряков, 30].

New information technologies are closely related to the computer sphere, and technical failures in the latter significantly affect their application. In this context, the method of computer echolocation contributes not only to the construction of a security model of new information

technologies, but also to support the identification of structural and functional disorders in computer systems [Khoshaba, 577]. This is especially important in the format of education, where new information technologies can be considered as a methodology of the educational process using the latest innovative means, primarily a computer. Here, from the point of view of computer science, reflections were made on the relationship of some concepts of pedagogy, the virtual past, present, future, noosphere and its coevolution.

Most of the researchers (B. Gershunaki, E. Mashbitz, N. Nikandrov and others) identify the computer as the most important element of the information sphere of the educational institution. This is explained by the functional versatility of the computer, which became evident especially in the post-epidemic period, with the availability of using new information technologies in the educational process, which were qualitatively different from their predecessors (increasing speed, Internet publicity, increasing the amount of computer memory, distance learning, etc.). It gave birth and signaled new information technologies in pedagogical activity, such as multimedia, virtual reality, video conferencing platforms, etc.

It is reasonable to expect that the didactic opportunities on the basis of the information technology will increase rapidly. Let's emphasize that under the means of new information technologies, we mean software backup equipment in the digital domain, which operate on the basis of nanotechnology, as well as modern means and systems of information exchange, which ensure the exchange of information collection, realization, storage, storage and processing. the role. The first concept of digitization of education was developed by academicians D. Rams, A. Yershov, V. Monakh and others. The features of the changes taking place institutions are presented of the software tools developed by Safronova in the educational process.

It should be noted that the software and its penetration into the design process of the learning process require following the requirements of pedagogical software tools. The introduction of new information technologies into the educational process certainly requires a high pedagogical mastery of the teacher, the search for the development of certain pedagogical methods aimed at the formation and development of the technical thinking of students, therefore, the approaches developed in the process of improving the professional training of specialists in new information technologies can be used as ways to improve the quality of education in this field to decide.

The introduction of new information technologies in education can be considered, on the one hand, as a general process of publicizing innovative means, which spreads everywhere, and on the other hand, as a means of increasing efficiency. Here, of particular importance is the application of the principles of the theory of psychology of unified integrity.

This is also evidenced by the opinion of outstanding educators and rhetoricians that new information technologies are a powerful tool for the development of various abilities of students, especially creative abilities, which in that sense has an obvious advantage compared to all other traditional means. In this context, the process of self-learning is also important. According to pedagogue Robert. "Self-education implies the use of new information technologies not only as a means of controlling learning, but also as a tool for obtaining information" [Robert, 37].

In addition, we emphasize that if European studies focus on the pedagogical perspective, that is, the use of new information technologies as a means of teaching (N. Wirth, E. Dijkstra), then in the American experiment there is a certain tendency towards the technological direction of information and new technologies are considered mainly as an additional tool. The list can be summed up in the context of pedagogical software tools, which should be understood as the application programs designed to organize and support an educational dialogue between the user and the computer.

The functional role of pedagogical software means is the introduction and guidance of educational information, taking into account the individual capabilities and preferences of the learner. Pedagogical software tools are created and used to achieve certain pedagogical goals and objectives of learning. They usually include the learning material that the learner needs to master and the management part that determines the sequence of study of that learning material.

All the above-mentioned values of new information technologies are concentrated in the possible areas of pedagogical software tools, with which students work, and innovative tools act as a technical tool that implements the educational program. Currently, a significant number of pedagogical software tools have been developed in various fields of knowledge. There is a very simple pedagogical program that provides for the sequential delivery of educational texts and complex mental program compounds.

Let's consider the types of software tools, which are used for educational, in particular, functional and methodical purposes. It is appropriate to divide pedagogical software tools into the following types according to their functional significance:

1. Diagnostic and test programs that verify the causes of students' wrong actions, evaluate their knowledge, abilities, and determine their level of training or intellectual development.

2. Instrumental, software means that certify educational software (systems), educational-methodical, organizational materials, etc.

3. Subject-oriented software areas that implement the modeling of the studied objects or their relation to a certain subject area, organize educational activities with models, reflect the objects, the regularities of some subject areas.

4. Pedagogical software tools, which are intended for the automation of the process of processing the results of the educational test.

5. Management pedagogical software tools, the purpose of which is to manage the actions of real objects . for example, the actions of robots simulating the role of various industrial mechanisms.

6. Learning areas of programming, designed for the initial training of the ability to form the main components of the algorithmic style of programming thinking.

7. Pedagogical software tools that ensure the performance of some functions of the teacher: to give commands on working on the computer, instructions to stop work, to perform checks, etc.

8. Pedagogical software tools designed for the automation of information-methodical support process and operation.

9. Service software tools that ensure the user's work, management of the process of learning results.

10. Game software tools that are a means of securing various types of gaming and learning activities.

***Types of software methods of methodological significance***

The methodological significance of each type of pedagogical software reflects the methodological goal of its implementation in the learning process and the possibilities of pedagogical software tools, the implementation of which accelerates the learning process, brings it to a higher level: teaching software tools, software systems, monitoring, information search, informational, imitative, modeling, demonstrative, educational, etc [Creswell, 46].

In the context of the implementation of modern educational standards, where new information technologies are considered as starting tools, we present the below-mentioned classification of training programs:

1. Computer textbooks
2. Subject-oriented areas (microworlds, modeling programs, educational programs),
3. Modern laboratory conditions,
4. Monitoring programs,
5. Reference books, educational databases.

There is the following division of training programs:

- Drill & practice
- Step-by-step
- tutorial
- Software "discovery-learning".

There are programs designed to test and consolidate knowledge, practice skills and teach skills and abilities. The next group of software tools consists of programs that support the information retrieval activity of students, and, finally, programs in which strategy and tactics are chosen by the student. In this context, the role and significance of the formation of artistic perception among students is especially important. Let us note that in the methodological system for the formation of artistic perception of students in the modern education system, the processes of artistic perception of students, content and character are determined. [Avetisyan, 4].

The following main types of pedagogical software are used directly for theoretical and practical training:

1. Demonstration programs intended for theoretical training, using the material base of video lessons.

2. Control programs that are used when conducting input and output control of knowledge.

3. Teaching programs that are practical especially for the study of such educational material of an organizational nature, which is easily divided into sections and subjected to mastery control. With the help of these means, teaching consists of allocating a certain section to each student, and then controlling his assimilation of knowledge.

4. Professional software tools, which are used when the learner is given the opportunity to familiarize himself with and use the information technologies that he will have the opportunity to meet in the future in independent educational activities. These include practical graphics programs, programming packages, innovation systems, etc.

5. Computer learning areas that are used in the study of individual topics and departments, the mastery of which is aimed at the formation of functional abilities of mental operations. Their essence lies in the fact that students are presented with a mathematical and informative situational model of the studied material, phenomenon or process. By managing this model, the learner can study the behavior of the field, object, phenomenon, etc., clarify the meaning of this or that subject, learn the appropriate means of management.

6. New information technology fields of study, which are extracted from the net field in that the meaning of the managed means can be implemented thanks to a special interface.

7. Simulators of modern laboratories that enter the field of new information technology or are used independently.

